


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ՀՀ ԳԱԱ 2012թ. ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ



ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Ֆիզիկամաթեմատիկական և տեխնիկական գիտություններ

Մաթեմատիկա. Դիտարկվել է հատվածի վրա ողորկ ֆունկցիայի վերականգնման (ինտերպոլյացիայի) խնդիրը, երբ հայտնի են Ֆուրիեի դիսկրետ գործակիցները, ուսումնասիրվել է այդ խնդրի լուծման Կրիլով-Էկհոֆի եղանակը: Պարզվել է, որ հատվածի ներսում գուգամիտության արագությունը գերազանցում է այդ նույն եղանակի գուգամիտության արագությանը, երբ մոտավոր թռիչքների փոխարեն օգտագործվում են նրանց ճշգրիտ արժեքները: Ստացվել են սխալանքի ասիմպտոտական ճշգրիտ գնահատականներ (ղեկ.՝ ակ. Ա.Ներսեսյան):

Մեխանիկա. Կայունացված սողքի ոչ-գծային տեսության դրվածքով լարումների և դեֆորմացիաների արագությունների միջև աստիճանային կապի դեպքում կառուցվել է հակահարթ դեֆորմացիայի պայմաններում գտնվող կիսատարածության համար առաջին եզրային խնդրի փակ լուծումը, երբ կիսատարածության եզրային հարթության վրա տրված են բաշխված շոշափող ուժեր (ղեկ.՝ թղթ. անդ. Ս.Մխիթարյան):

Հետազոտվել է իդեալական հաղորդիչ սալի տատանումների խնդիրը երկայնական մագնիսական դաշտում: Ցույց է տրվել, որ իդեալական հաղորդիչ սալերի դեպքում մագնիսական դաշտն էապես նեղացնում է դինամիկ անկայունության գլխավոր տիրույթի լայնությունը, վերջավոր էլեկտրահաղորդիչ սալի դեպքում գոյություն ունի մագնիսական դաշտի լարվածության որոշակի արժեք, որի գերազանցումը բացառում է պարամետրական ռեզոնանսը (ղեկ.՝ ակ. Գ.Բադդասարյան):

Ինֆորմատիկա և ավտոմատացման պրոբլեմներ. Դիտարկվել են կապի բարդ համակարգերում ինֆորմացիայի հաղորդման հուսալիության և անվտանգության ապահովման խնդիրները: Ուսումնասիրվել է գաղտնի հաղորդագրություններով լայնասփյուռ կապուղու E-ունակության տիրույթը: Ադմկոտ կապուղով գաղտնագողի առկայությամբ առանց հիշողության կորելացված աղբյուրներով Շենոնյան ծածկագրման համակարգի վերաբերյալ ստացվել են կռահման արագության վերին և ստորին գնահատականներ (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Ե.Հարությունյան):

Աստղաֆիզիկա. Ավարտվել են պայծառ ակտիվ գալակտիկաների բազմալիքային ուսումնասիրությունները՝ ռենտգենյան, գերմանուշակագույն, օպտիկական, ենթակարմիր և ռադիո տվյալների հավաքագրումը և համադրումը: Վերոն-Մետի և Վերոն կատալոգի շուրջ 15000 օբյեկտների հիման վրա ստեղծվել է պայծառ AGN-ների բազմալիքային կատալոգ (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ա.Միքայելյան):

UV Ceti կրկնակի բռնկվող աստղի երկարատև դիտումները ցույց են տվել, որ այդ աստղի բռնկումային հաճախականությունը խստորեն կախված է համակարգի աստղերի փոխադարձ դիրքից. համակարգի աստղերի ամենափոքր հեռավորության դեպքում դիտվում է բռնկումների առավելագույն հաճախականություն (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ն.Մելիքյան):

Մոլորակի հնարավոր առկայության թեկնածու 87 աստղի համար որոշվել է նրանց մթնոլորտներում Ti, Ca և Cr-ի պարունակությունը (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ա.Հակոբյան):

Առաջին անգամ աստղային շիթերի հանգույցներում չափվել են սպեկտրալ բնութագրիչներով տարանջատված կառուցվածքների սեփական շարժումները: Այս մեթոդով կատարված հետազոտությունները հնարավորություն են տվել բացահայտել այդ հանգույցների առաջացման մեխանիզմը, որը շատ կարևոր նշանակություն ունի արտահոսքերի աղբյուրների ֆիզիկական բնույթը պարզելիս (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Տ.Մովսիսյան):

Կատարվել է Cyg OB2 աստղաափյուռում գտնվող DR 15 HII տիրույթի բազմալիքային ուսումնասիրություն: Ցույց է տրվել, որ այդ աստղառաջացման տիրույթի փոքր զանգվածով օժտված երիտասարդ աստղերի հասակը $\sim 10^6$ տարի է և նրանց քանակը չի զիջում նմանատիպ այլ աստղառաջացման տիրույթներին (ղեկ.՝ Ֆ.-մ.գ.թ. Ե.Նիկողոսյան):

Ֆիզիկա. Հետազոտվել է ցածրջերմաստիճանային պլազմայի վարքն ակուստիկական գերցանցի առկայության պայմաններում և ցույց է տրվել, որ ակուստապլազման պլազմայի մի նոր գոյավիճակ է, որտեղ բոլոր պրոցեսներն ընթանում են ոչ-գծային, և հերցային հաճախականությամբ ակուստիկական դաշտերով օպտիկական փնջերի որոշակի հաճախային տիրույթում կարելի է կառավարել նրանց բնութագրիչները (ղեկ.՝ ակ. Ա.Մկրտչյան):

Հետազոտվել է ջերմային նեյտրոնների դիֆրակցիան կվարցի միաբյուրեղներում՝ ակուստիկական գերցանցի առկայության պայմաններում: Ցույց է տրվել, որ կարելի է տարածության և ժամանակի մեջ կառավարել նրանց բնութագրիչները և ստանալ նեյտրոնների մոնոքրոմատիկ փունջ (ղեկ.՝ Ֆ.-մ.գ.դ. Ա.Մկրտչյան):

Ռուբիդիումի գոլորշի պարունակող գերնեղ բջջում «լամբդա զեեմանյան» մեթոդով 5000-7000 Գս լարվածությամբ մագնիսական դաշտերում հետազոտվել են Rb զեեմանյան մակարդակների միջև ատոմային անցումների առանձնահատկությունները: Ցույց է տրվել, որ $B > 5000$ Գս դեպքում տեղի է ունենում էլեկտրոնի J լրիվ մոմենտի և միջուկի I մոմենտի կապի խզում, որի պատճառով ատոմի վարքը բնութագրվում է առանձին J և I մագնիսական մոմենտների m_J և m_I պրոյեկցիաներով (Պաշեն-Բակի ռեժիմ գերնուրբ կառուցվածքի համար): Տեսական մոդելը շատ լավ նկարագրում է փորձարարական արդյունքները (ղեկ.՝ Ֆ.-մ.գ.դ. Դ.Սարգսյան):

Առաջարկվել է ռադիոհաճախային (ՌՀ) ճառագայթման օպտիկական հետազոտման մեթոդ՝ հիմնված էլեկտրամագնիսականորեն հարուցված թափանցելիության (ԷՀԹ) երևույթի վրա: Ցույց է տրվել, որ ԷՀԹ միջավայրում տարածվող օպտիկական իմպուլսի տեսքը ՌՀ դաշտի ազդեցության տակ փոխակերպվում է ՌՀ իմպուլսի՝ ժամանակային կառուցվածքին համապատասխան: Երևույթը զգայուն է ՌՀ դաշտի հատկությունների նկատմամբ, ինչը թույլ է տալիս չափել վերջինիս ինտենսիվությունն ու սպեկտրը: Մեթոդը կարող է օգտագործվել օպտիկական իմպուլսների օգնությամբ ՌՀ ինֆորմացիայի գրանցման և մեծ տարածությունների վրա առանց կորուստների տեղափոխման համար (ղեկ.՝ Ֆ.-մ.գ.դ. Յու. Մալաքյան):

Հետազոտվել են երբիումի, իտերբիումի և նրանց համատեղ իոններով ակտիվացված լիթիումի նիոբատ բյուրեղների 550, 980 և 1550 նմ ալիքների երկարությամբ լյումինեսցենցիայի առաջացման և մարման օրենքները՝ 532, 808, 980 և 1064 նմ ալիքի երկարությամբ դիողային լազերներով զրգոման պայմաններում: Որոշվել են զրգոման էներգիայի ոչ-ճառագայթումային փոխանցման տարբեր մեխանիզմների ներդրումները կրկնակի ակտիվացված բյուրեղների լյումինեսցենցիայի երևույթներում (ղեկ.՝ թղթ. անդ. Ռ.Կոստանյան):

Ուժեղ էքսպոնենցիալ տեղայնացմամբ հատուկ տիպի ազդանշանի հիման վրա ներկայացվել է հաճախականային տիրույթում ազդանշանների վերլուծության ճշգրիտ մաթեմատիկական մեթոդ: Նմանությունը Գաբորի պակետների հետ բացահայտում է ոչ-կոմուտատիվ երկրաչափության դրսևորումը ժամանակ-հաճախականություն հարթությունում: Ազդանշանները պատկերվել են առաջարկված գրաֆիկական ներկայացման միջոցով:

Առաջարկվել և հետազոտվել է «Ռոդոտրոն» արդյունաբերական արագացուցիչի ռեզոնատորի սկզբունքորեն նոր կոնֆիգուրացիան, որը թույլ է տալիս էֆեկտիվորեն գումարել բազում համափուլ աղբյուրների դաշտերը: Ռեզոնատորը մոդիֆիկացված կոաքսիալ կառուցվածք է, որում արտաքին գլանի և ռեզոնատորի կողաձակատի միացման մասում կազմավորվել է օղակաձև ճեղք: Ռադիացիոն կորուստների կանխարգելման նպատակով ճեղքը բեռնվել է կարճ միացում իրականացնող օղակաձև շլեյֆով, որի միջով

անցնում են յուրաքանչյուր աղբյուրից եկող կապի տարրերը: Մշակված էլեկտրադինամիկական կառուցվածքն ապահովում է աղբյուրների բարձրակարգ կապագերծումը, բացառում է բարձր հզորության արտաքին գումարիչների անհրաժեշտությունը և, որպես արդյունք, թույլ է տալիս «Ռոդոտրոն» տիպի արագացուցիչի իրականացումը լիովին պինդամրմնային ուժեղաբարների վրա (դեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ա.Հախումյան):

Հետազոտվել է հզոր լազերային իմպուլսի՝ փնջային անկայունությունների վրա ունեցած ազդեցությունը: Դիտարկվել է երկհոսք (Բունեմանի) դեպքը, երբ գրգռումների ալիքային վեկտորը զուգահեռ է ռելյատիվիստիկ էլեկտրոնային փնջի (ՌԷՓ) արագությանը, իսկ լազերային դաշտի բևեռացման վեկտորն ուղղահայաց է կամ զուգահեռ գրգռումների ալիքային վեկտորին: Ցույց է տրվել, որ լազերի լայնական բևեռացման դեպքում նրա հաճախության մեծացմամբ տեղի է ունենում սպեկտրալ տիրույթի բիֆուրկացիա: Անկայունությունների ինկրեմենտն (և տիրույթը) էապես աճում է՝ կախված լազերի հաճախությունից և ինտենսիվությունից ու էապես գերազանցում է ստանդարտ երկհոսք անկայունության ինկրեմենտին: Երկայնական բևեռացման դեպքում անկայունության տիրույթը, Լենգմյուրյան ալիքի երկրորդ հարմոնիկի հաճախությունը գերազանցելու դեպքում, տրոհվում է առանձին ենթատիրույթների: Երկարալիք տիրույթում անկայունության ինկրեմենտը քիչ է տարբերվում ստանդարտ երկհոսք անկայունության ինկրեմենտից, մինչդեռ կարճալիք (կոմբինացիոն) տիրույթում այն էապես կախված է ինչպես ՌԷՓ-ի խտությունից, այնպես էլ լազերի ինտենսիվությունից ու հաճախությունից: Ցույց է տրվել նաև, որ անկայունության ինկրեմենտը մեծագույնն է լայնական բևեռացման դեպքում (դեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Հ.Ներսիսյան):

Կերամիկական տակդիրների վրա բարակ թաղանթային արեգակնային տարրերի ստեղծման նպատակով պատրաստվել է համապատասխան փորձարարական բազա: Մինթեզվել են հատուկ տիպի ապակե-բյուրեղային նյութեր Հայաստանում լայն տարածում ունեցող հրաբխային ապարի՝ պերլիտի հիման վրա: Ուսումնասիրվել են այդպիսի նյութից պատրաստված տակդիրների ջերմային և մեխանիկական հատկությունները: Այդպիսի տակդիրների վրա ստեղծված $\text{Mo/CuInGaSe}_2/\text{CdS/ZnO}$ արեգակնային մարտկոցները ցուցաբերել են ավելի քան 10% ՕԳԳ, ինչն ապացուցում է այս ուղղության հեռանկարային լինելը (դեկ.՝ թղթ.անդ. Ս.Պետրոսյան):

Բնական գիտություններ

Կենսաբանություն. Շարունակվել են Հայաստանի բուսական համակեցությունների ուսումնասիրման և էկոհամակարգերի դասակարգման նոր սխեմայի ստեղծման աշխատանքները: Էկոհամակարգերի դասակարգման նախնական սխեման ըստ խոշոր սինտաքսոնոմիկ միավորների ճշգրտվել է և մշակվել մինչև երկրորդ մակարդակը: Շիրակի, Սյունիքի, Վայոց Ձորի, Գեղարքունիքի, Լոռու և Տավուշի մարզերում անցկացված դաշտային աշխատանքների ընթացքում պարզվել է, որ մի շարք էկոհամակարգերում աճում են հազվագյուտ և անհետացող, Հայաստանի Կարմիր գրքում ընդգրկված տեսակներ: Հատուկ ուշադրություն է դարձվել ենթադրվող հատուկ պահպանվող բնական տարածքներին՝ «Գնիշիկ» և «Խուստուպ» արգելավայրերին և արդեն առկա «Զանգեզուր» արգելավայրին: Գնահատվել է դրանց էկոհամակարգերի և կենսաբազմազանության առանձին ներկայացուցիչների պոպուլյացիաների վիճակը, կատարվել է հիմնական վտանգների (մարդածին գործոնի ազդեցություն, կլիմայի փոփոխություն, ինվազիվ բուսատեսակների տարածում) գնահատման փորձ: Կազմվել է հանրապետության գլոբալ նշանակության բուսականության տիպեր ներկայացնող կարևոր բուսաբանական տարածքների նախնական ցուցակը: Հատուկ հետազոտվել և ուսումնասիրվել են այն տարածքների կենդանական և բուսական

աշխարհները (Ամուլսար և Մեղրիի մոտակայք), որտեղ նախատեսվում է հանքարդյունաբերական աշխատանքների իրականացում: Ըստ նախնական տվյալների՝ այդ տարածքներում աճում է Կարմիր գրքում ընդգրկված մի քանի բուսատեսակ, նախատեսվում են այդ տեսակները պահպանելու լրացուցիչ հետազոտություններ (ղեկ.՝ թղթ. անդ. Ժ.Վարդանյան):

Շարունակվել են աշխատանքներն Արագած լեռան ալպյան մարգագետիններում, որտեղ, ըստ «Գլորիա» համաշխարհային ցանցի մեթոդիկայի՝ 2011 թ. առանձնացվել էր 4 փորձահրապարակ, կատարվել է ավտոմատ ջերմաչափերից օդերևութաբանական տվյալների հավաքագրում, շարունակվել են բուսականության լրացուցիչ նկարագրությունները: Սկսվել են ինվազիվ և էքսպանսիվ բուսատեսակների տարածումից վտանգված, Կարմիր գրքում ընդգրկված տեսակների վտանգի գնահատման աշխատանքները: Արդյունքները կվերլուծվեն և կամփոփվեն (ղեկ.՝ կ.գ.դ. Գ.Ֆայվուշ):

Ազոտի և ածխածնի կենսատերաքիմիական ցիկլայնության վերլուծության հիման վրա մշակվել են հողերի դեգրադացման գործընթացի կանխագուշակման քանակական գնահատման մոտեցումներ (ղեկ.՝ աշխ.գ.դ. Ռ.Ռևազյան):

Արագածոտնի մարզի ընտանի և վայրի կենդանիների պարազիտաֆաունայում բացահայտվել է 37 մակաբույծներով կենդանիների վարակվածություն: Ուսումնասիրվել են մանր եղջերավոր կենդանիների որոշ հելմինթներով վարակվածության շարժընթացը և թոքային նեմատոդոզների համաճարակաբանության հիմնական առանձնահատկությունները: Մարզի ջրամբարներում գրանցվել է ձկների մակաբույծ որդերի 6 տեսակ: Կոտայքի և Արագածոտնի ջերմատնային տնտեսություններում դեկորատիվ-ծաղկավոր և բանջարանոցային մշակաբույսերի արմատներում և արմատամերձ հողում հայտնաբերվել է նեմատոդների 14 մակաբույծ և հողում ազատ ապրող 13 տեսակ (ղեկ.՝ ակ. Ս.Մովսեսյան):

Եվրոպական մի շարք հավաքածուների նյութերից նկարագրվել է ոսկերգեզների (Coleoptera, Buprestidae) Sphenoptera, Endelus և Aphanisticus ցեղերին պատկանող Պալեարկտիկական, Օրիենտալ և Էթիոպյան կենսաաշխարհագրական մարզերից գիտության համար նոր 14 տեսակ (ղեկ.՝ կ.գ.թ. Մ.Քալաշյան):

ԿԻ-ի անողնաշարների գիտական հավաքածուների նյութերի մշակման արդյունքում բացահայտվել է չրիսկան բզեզների (Coleoptera, Elateridae) Agriotes ցեղին պատկանող, գիտության համար նոր 5 տեսակ (ղեկ.՝ կ.գ.թ. Մ.Մարջանյան):

«Արգական-Մեղրաձոր» պետական արգելավայրում հերպետոլոգիական քարտեզագրման աշխատանքների արդյունքում գրանցվել են երկկենցաղների 4 տեսակ և սողունների 28 տեսակ, որոնցից 8-ը ընդգրկված են ՀՀ Կարմիր գրքում, 1-ը՝ *Vipera (Montivipera) raddei* հայկական իժը՝ նաև Միջազգային Կարմիր գրքում: Մշակվել են հազվագյուտ և անհետացող տեսակների պահպանության ստույգ առաջարկներ (ղեկ.՝ կ.գ.թ. Ա.Աղասյան):

Սևանա լճի ավազանում Հիդրոէկոլոգիայի և ձկնաբանության ինստիտուտի իրականացված հետազոտությունները բացահայտել են, որ թեպետ լճում վերջին տարիներին ձևավորվում են գեղարքունի և ամառային բախտակ ձկնատեսակների պոպուլյացիաներ, սակայն ձվադրավայր հանդիսացող գետերի հունների փոփոխության, չկարգավորվող ջրառի և փոքր ՀԷԿ-երի կառուցման արդյունքում խախտվել է էնդեմիկ ձկնատեսակների բնական վերարտադրության ընթացքը: Գետերի ակունքներում բազմացող ձկնատեսակներ գրեթե չեն հայտնաբերվել:

Սևանա լճի էկոհամակարգի համար լուրջ վտանգ է նաև օտարածին հիդրոբիոնտների ներմուծումը: Լճում արդեն լայն տարածում են ստացել օտարածին ձկնատեսակները՝ հայկական տառեխիկը, ամուրյան չեբաչոկը և այլն, որոնք կարող են խախտել լճային համակարգի տրոֆիկ շղթաների հավասարակշռությունը: Հիշյալ միտումը շարունակվում է լճի հարևանությամբ և ձվադրավայր հանդիսացող գետերի վրա ստեղծված ձկնային տնտեսություններում օտարածին ձկնատեսակների աճեցման հետևանքով (ղեկ.՝ կ.գ.դ. Բ.Գաբրիելյան):

Առաջին անգամ Սևանա լճի երկարաչանչ խեցգետնի մոդալ տարիքային խմբերի միջոցով կատարվել է բնական պայմաններում խեցգետնի աճի օրինաչափությունների բացահայտում (ղեկ.՝ կ.գ.թ. Է.Ղուկասյան):

Առաջին անգամ սինթեզվել են բրոմ պարունակող մոդիֆիկացված 3 քիրալային օժանդակ ռեագենտներ և դրանց ու ամինաթթուների հետ Ni^{2+} իոնի առաջացրած 6 նոր կոմպլեքսներ: Ցույց է տրվել, որ առավել ծավալուն և ծանր բրոմի ներմուծումը կոմպլեքսների կառուցվածքի օրթո-դիրք հանգեցնում է մետաղի կոորդինացիոն հարթության առավել արդյունավետ էկրանացման և կոմպլեքսագոյացման ռեակցիաների ստերեոսելեկտիվության առավելագույն աճի ($ee > 99\%$): Սինթեզվել է պոտենցիալ հակահիստամինային ակտիվությամբ օժտված β -դիրքում պիպերազինային հետերոցիկլ պարունակող երկու նոր ոչ սպիտակուցային α -ամինաթթու (ղեկ.՝ ք.գ.թ. Ս.Դադայան):

Սինթեզվել են 7 նոր քեմոտակտիկ դի- և տրիպեպտիդների նմանակներ՝ N-ֆորմիլ-(S)-մեթիոնինի և օպտիկապես մաքուր ոչ սպիտակուցային ամինաթթուների պարունակությամբ (ղեկ.՝ ք.գ.թ. Յու.Դանդյան):

Շարունակվել են գենետիկասելեկցիոն և գենինժեներային մեթոդներով նախկինում ստացված ամինաթթուների (ալանին, արգինին, իզոլեյցին) շտամ-արտադրիչների կատարելագործման աշխատանքները: Ստացվել են նոր մուտանտ շտամներ, որոնք ամինաթթու սինթեզելու ակտիվությամբ 10-17%-ով գերազանցում են ելակետային շտամներին (ղեկ.՝ կ.գ.թ. Գ.Ավետիսովա):

Ուսումնասիրվել է *E.carotovora*-ի երեք ամինատրանսֆերազների սուբստրատային սպեցիֆիկությունը: Ցույց է տրվել, որ բոլոր երեք ամինատրանսֆերազներն էլ բարձր ակտիվություն են ցուցաբերում L-ցիստեինի և L-մեթիոնինի նկատմամբ, ինչը կարող է ապագայում այդ ամինաթթուների ստացման կենսատրանսֆորմացիոն մեթոդների մշակման հիմք հանդիսանալ (ղեկ.՝ կ.գ.թ. Ա.Համբարձումյան):

Մշակվել է միկրոկենսաբանական եղանակով D,L-տրիպտոֆանից D-տրիպտոֆանի ստացման կատարելագործված տեխնոլոգիա՝ 250լ ծավալով կենսառեակտորի կիրառմամբ (ղեկ.՝ տ.գ.թ. Ա.Վարդանյան):

Մշակվել է բուսական և կենդանական ծագման հումքի թափոններից բնական մելանինի անջատման և մաքրման տեխնոլոգիա: Մշակվել է լաբորատոր կանոնակարգ (ռեզլամենտ) (ղեկ.՝ ք.գ.դ. Ա.Աղաջանյան):

Հետազոտվել է *L.rhamnosus* 109 կաթնաթթվային մանրէի միջոցով սինթեզված միացությունների կառուցվածքը: Պարզվել է, որ դրանք պեպտիդային բնույթի բակտերիոցիններ են և ունեն տարբեր մոլեկուլային կշիռ: Մշակվել են միկրոսելեկցիայի մեթոդներ, որոնց կիրառմամբ բարձրացվել է բակտերիոցինների ելքը (ղեկ.՝ կ.գ.թ. Ֆ.Տիբունի):

Ուսումնասիրվել է ցորենի ձողոտի դելիզնիֆիկացիան նախկինում ստացված *Bacillus sp.* A5 ալկալոֆիլ շտամով: Որոշվել են միջավայրի pH-ի օպտիմալ արժեքները, որոնք ապահովում են լիզինի քայքայումն առավել չափով (ղեկ.՝ ք.գ.թ. Ռ.Պարոնյան):

Մշակվել են ոչ սպիտակուցային ամինաթթուներ պարունակող պեպտիդների քիրալային ԲԱՀՔ (HPLC) և օրգանական թթուների խառնուրդի ԲԱՀՔ անալիզի մեթոդներ: Ներկայումս մշակման փուլում է ամինաթթվային խառնուրդների ԲԱՀՔ անալիզի մեթոդների մշակումը (ղեկ.՝ կ.գ.թ. Վ.Ղոչիկյան):

Նիտրոգոգուանիդինի և ՈԻՄ մուտագենեզի կիրառմամբ *Lactobacillus delbrueckii* MH-10 տեսակին պատկանող պրոբիոտիկ շտամի մոտ անջատվել են բիֆամպիցինի հանդեպ կայուն ավելի քան 400 մուտանտներ, որոնցից 13-ն ունեն բարելավված տեխնոլոգիական հատկանիշներ, իսկ 3-ը, շնորհիվ ջրածնի պերօքսիդի գերսինթեզի, ունեն բարձր հակաբակտերիալ ակտիվություն (ղեկ.՝ կ.գ.դ. Հ.Հովհաննիսյան):

Պարզվել է, որ պալարաբակտերիաների (արախիսի, ոլոռի, երեքնուկի, ոսպի) պալարագոյացումը պայմանավորված է տեր բույսի արմատային համակարգի արտազատումների բնույթով: Մշակվել է թիթեռնածաղկավոր բույսերի բերքատվությունը բարձրացնող նոր ֆորմուլայով պարարտանյութ, ինչպես նաև նախադրյալներ են ստեղծվել Հայաստանում արախիսի մշակության համար (ղեկ.՝ կ.գ.դ. Վ.Նիկողոսյան):

Կենսադիզելային վառելիքի ստացման նպատակով ուսումնասիրվել է մի շարք միկրոօրգանիզմների (*Dunaliella*, *Chlorella*, *Scenedesmus*, *Spirulina*, *Anabaena*, *Phormidium*, *Gloeocapsa*, *Synechocystis*, *Microcystis*, *Oscillatoria*, *Chlorella*, *Chlorococcum*, *Scenedesmus*, *Chlamidomonas*) կողմից լիպիդների սինթեզը և ճարպաթթվային կազմը: Ընտրվել են հեռանկարային շտամներ, որոնք ավելի ակտիվ են իրականացնում լիպիդների սինթեզը (ղեկ.՝ ան.գ.թ. Վ.Գոգիկյան):

Մշակվել են ամիլազ, գլյուկոամիլազ, պոլիուլանազ ֆերմենտների արտադրիչ մանրէների աճման օպտիմալ պայմանները՝ դրանց սինթեզի ինտենսիվացման նպատակով (ղեկ.՝ կ.գ.թ. Ա.Բալայան):

Ուսումնասիրվել է Հայաստանի բազմամետաղային հանքավայրերի բնական և անթրոպոգեն բիոտոպերում մետաղներ տարրալվացող բակտերիաների համակեցությունների բազմազանությունը: Պարզվել է, որ նշված համակեցությունների կազմը և նրանց քանակական հարաբերակցությունն առավելապես պայմանավորված են միջավայրի ոչ կենսածին գործոններով: Մեկուսացվել են մետաղներ տարրալվացող քեմոլիթոտրոֆ, ինչպես նաև ագլոմֆիլ միքսոտրոֆ և հետերոտրոֆ բակտերիաներ: Մշակվել են մետաղներ տարրալվացող բակտերիաների բարձրակտիվ համակեցությունների ֆիզիոլոգիական պոտենցիալի պահպանման եղանակներ (ղեկ.՝ կ.գ.դ. Ն.Վարդանյան):

Տարբեր սուլֆիդային՝ պիրիտ, խալկոպիրիտ, սֆալերիտ, ապարներից անջատվել են *Acidithiobacillus*, *Leptospirillum* ցեղերին պատկանող մի շարք նոր շտամներ, որոնք սինթեզում են արտաբջջային բազմաշաքարներ և որոնցով պայմանավորված է նրանց ադհեզիան և միներալների տարրալվացումը: Մշակվել են մեթոդական մոտեցումներ դրանց անջատման և առանձնահատկությունների ուսումնասիրման նպատակով (ղեկ.՝ կ.գ.թ. Լ. Մարկոսյան):

Մանրէների ավանդադրման կենտրոնի և Միկրոբիոլոգիայի ինստիտուտի մանրէների կուլտուրաների հավաքածուի բազայի վրա կազմակերպվել է Ազգային հավաքածու՝ գիտաարտադրական նշանակության մանրէների գենոֆոնդ, որն ընդգրկվել է ազգային արժեքներ կայացնող կազմակերպությունների ցանկում (ղեկ.՝ ակ. Է.Աֆրիկյան):

Կենսաբանական, կենսաքիմիական և ֆիզիոլոգիական հետազոտությունները ցույց են տվել, որ մեղրախոտը (*Stevia rebaudiana* Bertoni), որպես հանրապետությունում նոր, թանկարժեք տեխնիկական մշակաբույս, կարող է մշակվել ՀՀ-ում և ԼՂՀ-ում, նրանից ստացվող նույնիսկ չվերամշակված չոր բուսահումքն ունի բուժիչ և կանխարգելիչ ազդեցություն: Արվել են մեղրախոտի հիդրոպոնիկ և հողային աճեցման կենսատեխնոլոգիական և ագրոտեխնիկական առաջարկներ:

Հետազոտությունները ցույց են տվել, որ կախված բնակլիմայական պայմաններից, բույսերի ֆենոլոգիական փուլերից, տնկման խտությունից և հանքային սննդառության առանձնահատկություններից, մեղրախոտի բուսահումքում ստեղծվողի պարունակությունը տատանվում է 5-9%-ի սահմաններում: Պարզվել է, որ բացօթյա հիդրոպոնիկայում աճեցված մեղրախոտի բուսահումքն արհեստական (^{90}Sr , ^{137}Cs) և բնական (U) ռադիոնուկլիդների (ՌՆ) պարունակությամբ ռադիոէկոլոգիապես ավելի մաքուր է, քան հողայինը: Մեղրախոտի և՛ անհող, և՛ հողային մշակույթներում արհեստական ՌՆ-ի պարունակությունը բուսահումքում չի գերազանցել ՍԹԽ-ն:

Պարզվել է նաև, որ մեղրախոտի 10%-անոց թուրմը թուլացնում է առնետների կենսա-

կանոն են կարևոր համակարգերի (սիրտ-անոթային, շնչառական) վրա սթրեսային գործոնի ազդեցությունը, ինչը վկայում է նրա հակասթրեսային հատկություններով օժտվածությունը:

Բացօթյա հիդրոպոնիկայում և հողում ուսումնասիրվել են արժեքավոր դեղաբույս ոսկեբեղիկի (*Callisia fragrans* (Lindl.) Woodson) աճման ու զարգացման, կենսասակտիվ նյութերի կուտակման օրինաչափությունները: Պարզվել է, որ հիդրոպոնիկական լցանյութերն (գլաբար, հրաբխային կարմիր խարամ և դրանց 1:1 հարաբերությամբ խառնուրդը) էական ազդեցություն չեն թողել թարմ դեղահումքի կուտակման վրա և գերազանցել են հողային ստուգիչին 2,4-2,9 անգամ: Տերներում էքստրասակտիվ նյութերի առավելագույն պարունակությամբ աչքի են ընկել հիդրոպոնիկ բույսերը, որոնք գերազանցել են հողայիններին 1,4-1,7 անգամ, մինչդեռ ֆլավոնոիդների և դաբաղանյութերի կենսասինթեզն առավել ակտիվ է ընթացել հողային բույսերի տերներում՝ մոտ 1,8-2,2 անգամ (դեկ.՝ թղթ. անդ. Ս.Մայրապետյան):

Բժշկական կենսաբանություն. Համատեղ աշխատանքներ են տարվել խոզի նախասրտից անջատված կորոնարասակտիվ պեպտիդային բնույթի ֆրակցիաների կառուցվածքների ամինաթթվային հաջորդականության որոշման ուղղությամբ (դեկ.՝ կ.գ.դ. Ս. Չախլյան):

Սրտամկանի մեռուկացման և ռեպերֆուզիայի վնասակար ազդեցության հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ 4մգ ՊՀՊ-ի ներդրվայնային ներարկումից 24 ժամ անց սրտամկանի ձախ փորոքի ֆունկցիան վերականգնվում է՝ հասնելով գրեթե առողջ վիճակի (դեկ.՝ կ.գ.դ. Գ.Գևորգյան):

Հետազոտվել է NOS-ի տարբեր ձևերի ներգրավումը պարբերական հիվանդության, հետվնասվածքային սթրեսային աֆեկտիվ խանգարումների, փորձարարական խրոնիկական սթրես-ինդուկցված դեպրեսիայի և տագնապի, օքսիդատիվ սթրեսի և նյութափոխանակության այլ գործընթացներում գլխուղեղի կեղևում և ենթակեղևային բաժիններում, արյան ձևավոր տարրերում, ավշային օրգաններում և ոսկրածուծի մեջ: Հետազոտվել են NOS-ի տարբեր ձևերի կարգավորման դեղաբանական և ոչ դեղաբանական եղանակները: Որոշվել է գալարմինի պաշտպանիչ դերը CO₂-ով հարուցված հիպօքսիայի ժամանակ (դեկ.՝ կ.գ.դ. Մ.Սիմոնյան):

Հետազոտվել է 14 ոչ սպիտակուցային ամինաթթուների և պեպտիդների ազդեցությունը մանրէների աճի և տրիպսինի ու պրոտեինազ K-ի ակտիվության վրա: Ընտրվել են հակաբակտերիալ ակտիվությամբ օժտված և պրոտեինազ K-ի արգելակիչ միացություններ, որոնք դիտարկվում են որպես հակաբակտերիալ և հակավիրուսային ակտիվությամբ օժտված դեղամիջոցների պոտենցիալ բաղադրիչներ (դեկ.՝ կ.գ.թ. Ն.Հովհաննիսյան):

Կառուցվել և բնութագրվել են գրականության մեջ չնկարագրված խոլինէրթերազների նոր դարձելի արգելակիչներ, որոնք չեն ենթարկվում ֆերմենտային հիդրոլիզի և կարող են օգտագործվել բժշկության բնագավառում (դեկ.՝ ք.գ.դ. Ղ.Հալեբյան):

Հայաստանի տարբեր էկոլոգիական շրջանների կաթնամթերքներից և բիոցենոզից մեկուսացվել են բակտերիոցիններ արտադրող պրոբիոտիկ կաթնաթթվային բակտերիաներ, որոնց հիման վրա կազմվել են համակցված, բուժիչ, դիետիկ կաթնամթերքների և սննդային հավելումների ստացման համար մեքաններ (դեկ.՝ կ.գ.դ. Լ.Հակոբյան):

Պարզաբանվել է, որ ապոպտոզի մարկեր սպիտակուցի՝ անեքսին-A5 գենի կարգավորիչ հատվածի մուտացիան իշեմիկ կաթվածի ռիսկի գործոն է (դեկ.՝ կ.գ.դ. Ա.Բոյաջյան):

Բացահայտվել է, որ պիրին սպիտակուցի DAPIN և B30.2 դոմեններում տեղակայված Ընտանեկան միջերկրածովյան տենդի (ԸՄՏ) հետ ասոցացված վեց մուտացիաները փոխում են պիրինի երրորդային կառուցվածքը՝ ազդելով պիրինի ու կասպազա-1 ապոպտոտիկ սպիտակուցի փոխազդեցության վրա, ինչը հանգեցնում է ապոպտոզի խախտումների: Պարզաբանվել է, որ կասպազա-1 սպիտակուցի գենը կոլիսիցինի հանգուցային մոլեկուլային

թիրախ է, կոլիսիցինի ազդեցության մեխանիզմն CUS-ի թերապիայի ժամանակ ներառում է ապոպտոզի խախտման շտկումը (ղեկ.՝ կ.գ.դ. Կ.Նազարյան):

Ցույց է տրվել, որ կոմպլեմենտի B գործոնի, C2 սպիտակուցի և մոնոցիտների քեմոտաքսիսի սպիտակուց-1-ի գեների մուտանտ ալելների ժառանգումը նվազեցնում է շիզոֆրենիայի զարգացման ռիսկը, մինչդեռ կոմպլեմենտի H գործոնի, ուռուցքի նեկրոզի α -գործոնի և ապոպտոզի մարկեր անեքսին-A5 սպիտակուցի գեների մուտանտ ալելները հիվանդության զարգացման ռիսկի գործոններ են (ղեկ.՝ կ.գ.դ. Ա.Բոյաջյան):

Բացահայտվել է, որ կարմրուկի վիրուսի ազդեցության մոլեկուլաբջջային պաթոմեխանիզմները ներառում են նրա կողմից բջջային դիֆերենցիացիայի արգելակումը և նրանցում ԴՆԹ-ի քանակի ու կորիզակների թվի նվազեցումը (ղեկ.՝ կ.գ.դ. Զ.Կարալյան):

Բացահայտվել են առնետների հետամալիջային ենթատեսաթմբի վայրընթաց ազդեցությունների ներդրումային մեխանիզմները և բնորոշ առանձնահատկությունները տարբեր տիպի կոճղեզային շնչառական ներդրումների իմպուլսային ակտիվության, երկարավուն ուղեղի մենավոր ուղու կորիզի ընդերազգայական ներդրումների սեպային ակտիվության վրա (դրդող էֆեկտների գերակշռմամբ): Խրոնիկ գիտափորձերում հայտնաբերվել է հետամալիջային ենթատեսաթմբի մասնակցությունը սթրեսային ազդեցություններից առաջացած նյարդածին զարկերակային գերձնշման զարգացմանը (ղեկ.՝ կ.գ.դ. Լ.Նեսետյան):

Ուսումնասիրվել է արգանդի զարկերակի իշեմիկ ազդեցությունը, որն արյունով է մատակարարում ոչ հղի առնետների արգանդի փողերի հիմնական ռիթմածին շրջանի ակտիվության տվյալներն ինչպես տվյալ լոգուսի, այնպես էլ պեյսմեկերային մնացած շրջանների վրա՝ ընդհուպ մինչև արգանդի վզիկը: Նկատվում են փոփոխություններ արգանդի եղջյուրի օվարիալ հատվածում: Արգանդի փողի ցերվիկալ հատվածում և արգանդի մարմնի վրա ակտիվությունն ավելի քիչ է հակված իշեմիայի ազդեցությանը: Մեմբրանային պոտենցիալի դանդաղ ալիքային տատանումների ամպլիտուդը մեծանում է մեկուկես անգամ (ղեկ.՝ կ.գ.դ. Ք.Ղազարյան):

Քիմիական և Երկրի մասին գիտություններ

Քիմիա. Բարձրջերմաստիճանային ինքնատարածվող սինթեզի (ԲԻՍ) եղանակով մոլիբդենի կարբիդի (Mo_2C) հիման վրա ստացվել է հիդրազինի քայքայման արդյունավետ կատալիզատոր՝ ջրածին (վառելիքային մարտկոցների համար) և բարձր էներգետիկությամբ օժտված վառելիք (հրթիռների փոքր շարժիչների համար) ստանալու նպատակով, բացահայտվել են ռեակցիայի ընթացքի օպտիմալ պայմանները (ղեկ.՝ ք.գ.թ. Ռ.Մնացականյան):

Պլազմոմեխանոքիմիական եղանակով սինթեզված նիկել-կոբալտ համաձուլվածքի նանոփոշիների հիման վրա մշակվել է արդյունավետ կատալիզատոր բնական գազի՝ մեթանի, ածխաթթվային փոխարկման միջոցով արդյունաբերական կարևոր նշանակության ելային հումք՝ սինթեզ-գազ, ստանալու համար (ղեկ.՝ թղթ. անդ. Լ.Թավադյան):

Հայտնաբերվել է նոր ներմոլեկուլային վերախմբավորում պիրանոպիրիդինների սինթեզի եղանակի մշակման ժամանակ օրգանական քիմիայի բնագավառում (ղեկ.՝ թղթ. անդ. Ա.Նորավյան):

Ցույց է տրվել, որ Co-պորֆիրինները, Fe-պորֆիրինների և հեմ-պարունակող ֆերմենտների նման, նույնպես հարուցում են ազոտի օքսիդի դիօքսիգենացման ռեակցիա: Պարզաբանվել է կենսաբանական մեծ կարևորություն ունեցող այդ ռեակցիայի մեխանիզմը, և ռեակցիայի սկզբնական փուլում առաջին անգամ միանշանակ կերպով ցույց է տրվել Օ-կոորդինացված պերօքսիհիտրիտի առաջացումը (ղեկ.՝ ք.գ.դ. Տ.Կուրտիկյան):

Սինթեզվել է քրոմի (III) պոլիօքսիմոլիբդատի նոր ցածրամոլեկուլային β -միջուկային

ձև: Մինթեզված նոր ձևի մեծ կայունությունը, համեմատաբար փոքր չափերն ու մեծ շարժունակությունը թույլ են տալիս կանխատեսել, որ պոլիօքսիմետաղներին բնորոշ կենսաբանական ակտիվությունն այս ձևի մոտ կարող է արտահայտվել ավելի մեծ չափով (ղեկ.՝ ք.գ.թ. Ֆ.Միրզոյան):

AgCl-ով և Cu₂O-ով ակտիվացրած լիթիումայումաբորատային համակարգերի հիման վրա մշակվել են ջերմաֆիզիկական հատկությունների փոփոխության լայն տիրույթով, քիմիապես կայուն ֆոտոքրոմային ապակիներ և ապակեբյուրեղային նյութեր (ղեկ.՝ տ.գ.դ. Ն.Կնյազյան):

Կավիտացիոն ալմաստների և խորանարդային բորի նիտրիդի հիմքով տարբեր մետաղների և համաձուլվածքների վրա մշակվել են մաշակայուն ծածկույթներ՝ ցածր շփման գործակցով և բարձր օքսիդացման ջերմաստիճանով, որոնք ունեն լայն կիրառություն տեխնիկայի տարբեր բնագավառներում (ղեկ.՝ տ.գ.թ. Ս.Ալոյան):

Երկրի մասին գիտություններ. ՀՀ տարածքում տեղադրվել են 10 լայնաշերտ սելյամիկ GURALP -6TD տիպի կայաններ և 3 Trimble NetR9 տիպի տեղորոշիչ (GPS) սարքեր: Սելյամիկ ցանցից ստացված տեղեկատվությունն ամփոփվել է երկրաշարժերի կատալոգի տեսքով (ղեկ.՝ Ե.-հ.գ.դ. Ա.Կարախանյան):

Ավարտվել են առաջին անգամ կատարված Զանգեզուրի հանքային շրջանի Cu-Mo հանքավայրերի մոլիբդենիտների Re-Os իզոտոպային հասակային որոշումները (աշխատանքը կատարվել է Ժնևի և Դարհեմի համալսարանների մասնագետների հետ համատեղ), որոնց հիման վրա մշակվել է հանքայնացման առաջացման նոր՝ եռափուլ մոդելը՝ վերին էոցեն-44,2±39,97 Ma, ստորին օլիգոցեն-30,0 Ma, ստորին միոցեն-26,43 Ma (ղեկ.՝ թղթ. անդ. Ռ.Մելքոնյան):

Ավարտվել են չորրորդական հասակի Արագած հրաբխի հրաբխային սերիաների իզոտոպային թվագրման աշխատանքները, առաջարկվել է Արագածի հրաբխականության ձևավորման պետրոգենետիկ մոդելը՝ արտահայտված մանթիական հիմնային և ադակիտային թթու մագմաների խառնուրդով (ղեկ.՝ ակ. Ռ.Զրբաշյան):

Հաստատուն լայնական կտրվածքով համասեռ կոնսոլային ձողում ստացվել է մաքուր ծոման և ծոման առաձգական ալիքների տարածման համար նոր մասնակի ածանցյալներով դիֆերենցիալ հավասարումների համակարգ (ղեկ.՝ թղթ. անդ. Ս.Հովհաննիսյան):

Ուսումնասիրվել են Հայաստանի տարածքում 2005-2010 թթ. տեղի ունեցած միջին և թույլ երկրաշարժերի ֆոկալ մեխանիզմները: Կառուցվել են 0-5 կմ և 5-15 կմ խորությունների համար ֆոկալ մեխանիզմների քարտեզներ: Նշված մեխանիզմների ուսումնասիրության արդյունքում հայտնաբերվել է, որ սեղմման առանցքի համար գերակշռող են արևելք-հյուսիս-արևելք, իսկ ձգման առանցքի համար՝ հյուսիս-հյուսիս-արևմուտք ուղղությունները (ղեկ.՝ Ե.գ.թ. Ս.Մկրտչյան):

Հայագիտություն և հասարակական գիտություններ

Պատմագիտություն. «Պետականության զարգացման փուլերը Հայաստանում (հնագույն ժամանակներից մինչև 1918 թ.)» թեմայի շրջանակներում (ղեկ.՝ թղթ. անդ. Ա.Մելքոնյան) հրատարակվել է պ.գ.թ. Գ.Հովհաննիսյանի «Հնչակյան կուսակցության պատմություն (1887-1915 թթ.)» մենագրությունը, որտեղ ներկայացվել է Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցության պատմությունը՝ կազմավորումից մինչև 1915 թ. ընկած ժամանակաշրջանը: Աշխատությունը շարադրված է արխիվային փաստաթղթերի, ժամանակի մամուլի, հուշագրությունների (որոնց մի մասն առաջին անգամ է դրվում գիտական շրջանառության մեջ) և պատմագիտական գրականության հիման վրա:

«Հայաստանը և հայությունը նորագույն շրջանում: Հայկական հարց» թեմայի շրջանակներում (ղեկ.՝ պ.գ.թ. Կ.Խաչատրյան)

- Հրատարակվել է պ.գ.դ. Հ.Հարությունյանի «Նոր Բայազետի գավառը 1914-1920 թթ.» մենագրությունը, որտեղ առաջին անգամ ներկայացվել են Նոր Բայազետի գավառի վարչատարածքային կառուցվածքը, բնակչության կազմի փոփոխությունները, սոցիալ-տնտեսական վիճակը, հասարակական-քաղաքական կյանքը, փախստականների ու որբերի տեղավորման, խնամքի կազմակերպման աշխատանքները: Քննության են առնվել մայիսյան ապստամբության պատճառներն ու հետևանքները, մուսուլմանաբնակ շրջանների հակապետական խռովությունները: Այս խնդիրները ներկայացվել են Արևելյան Հայաստանի, մասամբ Անդրկովկասի պատմության համատեքստում:

- Հրատարակվել է Մ.Թումանյանի «Дипломатическая история Республики Армения 1918-1920 гг.» աշխատությունը՝ Հայաստանի ազգային արխիվի հետ համատեղ (հեղինակային տարբերակով)՝ «Дипломатическая история Республики Армения в период с момента провозглашения независимости по день установления советской власти»): Մենագրության հեղինակը 1918-1920 թթ. եղել է Թիֆլիսում Հայաստանի Հանրապետության լիազոր ներկայացուցչության խորհրդականը: Աշխատանքը գրվել է 1920-ական թվականների դիվանագիտական փաստաթղթերի հիման վրա, որոնց մեծ մասի հեղինակը հենց Մ.Թումանյանն է:

- Հրատարակվել է պ.գ.դ. Կ.Հարությունյանի «Маршал инженерных войск Сергей Христофорович Аганов» աշխատությունը, որտեղ ՌԴ ՊՆ կենտրոնական արխիվի նորահայտ, համապատասխան գրականության և պարբերական մամուլի նյութերի հիման վրա առաջին անգամ լուսաբանվել է ինժեներական զորքերի մարշալ Ս.Ագանովի կենսագրությունը:

- Հրատարակվել է «Из истории армяно-украинских, венгерских и молдавских отношений» ժողովածուն, որտեղ ընդգրկված են հայ-ուկրաինական, հայ-հունգարական և հայ-մոլդովական հարաբերությունների ձևավորման և զարգացման պատմության էջերը լուսաբանող հոդվածներ և նյութեր: Ժողովածուն Պատմության ինստիտուտի և Ուկրաինայի, Հունգարիայի, Ռումինիայի և Մոլդովայի պատմաբանների, ԱՊՀ երկրների Պատմության ինստիտուտների միջազգային ասոցիացիայի սերտ համագործակցության, համատեղ անցկացված գիտական կոնֆերանսների արդյունքն է:

«Աղբյուրագիտություն և պատմագրություն» թեմայի շրջանակներում (ղեկ.՝ պ.գ.թ. Ա. Շահնազարյան) հրատարակվել է Իրաննիս Կ.Խասիտիսի «Պատմական ավանդույթ և քաղաքական իրապաշտություն. հունական քաղաքականությունը Հայկական հարցի վերաբերյալ (1876-1996)» աշխատությունը (հունարեն բնագրից թարգմանությունը՝ ալ. Հ.Բարթիկյանի), որտեղ ներկայացվել է Հայկական հարցի վերաբերյալ 1876-1996 թթ. հունական քաղաքականությունը: Ցույց է տրվել, որ այդ հարցի նկատմամբ հունական կողմի դրսևորած զգուշավորությունը պայմանավորված է ինչպես արտաքին գործոններով, այնպես էլ խնդրի էության թերիմացությամբ:

Շարունակվել են Հայաստանի նյութական և ոչ նյութական մշակութային ժառանգության, հայոց պատմության ուսումնասիրության աղբյուրագիտական հենքը ձևավորելու և հարստացնելու նպատակով կատարվող ուսումնասիրությունները: Մասնավորապես՝ «Դիվան հայ վիմագրության» թեմայի շրջանակներում (ղեկ.՝ պ.գ.թ. Գ.Սարգսյան) հրատարակվել է «Դիվան հայ վիմագրության» IX պրակը, որն ընդգրկում է ՀՀ Լոռվա մարզի և Տավուշի մարզի Նոյեմբերյանի ենթաշրջանի պատմաճարտարապետական հուշարձանների որմերին և կոթողներին փորագրված 1190 արձանագրություն, որոնց զգալի մասն առաջին անգամ է դրվում գիտական շրջանառության մեջ:

ՀՀ ԳԱԱ և Ռուսաստանի ԳԱ համատեղ իրականացվող ծրագրերի շրջանակում Մոսկվայում հրատարակվել է հիմնականում ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության

ինստիտուտի աշխատակիցների կողմից շարադրված “Армяне” գիրքը, որտեղ հանգամանորեն ներկայացվել են հայոց ծագումնաբանության, էթնոքաղաքական պատմության, տնտեսական գործունեության և զբաղմունքների, կենսապահովման, սոցիոնորմատիվ և մասնագիտական մշակույթին, տնտեսական և հասարակական կենցաղին, տոներին, ավանդություններին, կրոնին ու եկեղեցուն, սփյուռքի պատմությանն ու արդիականությանը վերաբերող հետազոտությունների հիմնական և ամփոփ արդյունքները:

«Թուրքիայի, Իրանի, Կովկասի և Մաշրիքի արաբական երկրների քաղաքական, սոցիալական, մշակութային և էթնիկական պատմության հիմնախնդիրները և Հայաստանը» ծրագրի շրջանակներում (ղեկ.՝ թղթ. անդ. Ռ.Սաֆրաստյան) լույս է տեսել Ռ.Սաֆրաստյանի «Empire Ottoman: La Genèse du Programme de Génocide (1876-1920)» (ֆրանսերեն) մենագրությունը, որտեղ որպես հետազոտման առարկա է ընտրվել Օսմանյան կայսրությունում ցեղասպանության ծրագրի ծագումնաբանության գործընթացը: Հետազոտության կարևոր գիտական նորություններից է Օսմանյան կայսրության օրինակով նախացեղասպանության հայեցակարգի առաջաշումը և հիմնավորումը:

«Միջազգային հարաբերությունները Մերձավոր և Միջին Արևելքում, Արևելյան Ասիայում, Հարավային Կովկասում և Հայաստանի Հանրապետությունը» ծրագրի շրջանակներում (ղեկ.՝ թղթ. անդ. Ն.Հովհաննիսյան) կարևոր ձեռքբերում է «Ժամանակակից Եվրասիա. Արաբական աշխարհ» և «Ժամանակակից Եվրասիա. Թուրքիա, Իրան» ժողովածուների հրատարակումը: Դրանք ընդգրկում են Թուրքիայի, Իրանի և Արաբական աշխարհի 2008-2011 թթ. քաղաքական, տարածաշրջանային առանցքային զարգացումներին և անվտանգության խնդիրներին նվիրված վերլուծական կարևոր ուսումնասիրություններ:

«Հին, միջնադարյան և նոր շրջանի արևելյան աղբյուրները Հայաստանի և հայերի մասին» ծրագրի շրջանակներում (ղեկ.՝ պ.գ.դ. Պ.Զորանյան) կատարված գիտական հետազոտություններից հարկ է առանձնացնել պ.գ.թ. Ռ.Ղազարյանի «Մուրսիլի II-ի «Տասնամյա» տարեգրությունը: Խեթական սկզբնաղբյուրները Հայկական լեռնաշխարհի մասին» աշխատությունը, որը Հայաստանի հին շրջանի պատմությունը լուսաբանող կարևորագույն սկզբնաղբյուրներից մեկի վերլուծությունը և հրատարակումն է:

«Շիրակի հնագիտական և պատմագագաթական ուսումնասիրություններ» ծրագրի շրջանակներում (ղեկ.՝ բ.գ.դ. Ս.Հայրապետյան)

- Հնագիտական հետախուզության արդյունքներով հայտնաբերվել են երկու նոր հնավայրեր՝ քարանձավային բնակավայր Անիի տարածաշրջանի Սարատակ գյուղի տարածքում և վաղբրոնզիդարյան բնակավայր ու դամբարանադաշտ Անիի տարածաշրջանի Բագրավան գյուղի տարածքում:

- «Արևմտահայ գաղթականությունը Ալեքսանդրապոլի գավառում 1914-1922 թթ.» արխիվային նյութերի ու փաստաթղթերի ժողովածուի հրատարակմամբ առաջին անգամ գիտական շրջանառության մեջ են դրվել Հայաստանի ազգային արխիվում պահպանվող ավելի քան 120 նորահայտ փաստաթղթեր (զեկուցագրեր, խնդրագրեր, հոդվածներ, հեռագրեր, գաղթականների կոմիտեի նիստերի արձանագրություններ, որբանոցների անվանացանկեր, պաշտոնական գրություններ և այլն):

- Ախուրյանի ավազանի մ.թ.ա. առաջին հազարամյակի պատմության վերաբերյալ սեպագիր աղբյուրների ուսումնասիրության հիման վրա բացահայտվել են հայ առասպելաբանության նոր, խորքային շերտեր, որոնք գիտականորեն հիմնավորում են տարածքի՝ հնագույն հնդեվրոպական-հայկական բնակչություն ունենալու իրողությունը:

«Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության ուսումնասիրություն» ծրագրի շրջանակներում (ղեկ.՝ պ.գ.դ. Հ.Դեմոյան) Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտը շարունակել է արտերկրում շարժական ցուցադրությունների ներկայացման գործընթացը. 2 ցուցադրություն է ներկայացվել Բելյություն՝ «Հայոց ցեղասպանության լու-

սաքանումն արտասահմանյան մամուլի առաջին էջերին» (Կապուցիների եկեղեցու սրահ), «Հայոց ցեղասպանությունը և Սկանդինավյան արձագանքը» (Բեյրութի առաջնորդարանի Եռագույն սրահ): «Հայոց ցեղասպանությունը և Սկանդինավյան արձագանքը» ժամանակավոր ցուցադրությունը ներկայացվել է նաև Շվեդիայում և Դանիայում (Ստոկհոլմի կաթոլիկ տաճարի սրահ, Կոպենհագենի Թագավորական գրադարանի մաս կազմող Հումանիտար հետազոտությունների գրադարան):

Հայոց ցեղասպանության թանգարանում բացվել է «Գիրքը որպես ցեղասպանության վկա» ժամանակավոր ցուցադրությունը՝ նվիրված հայ գրատպության 500-ամյակին և ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից Երևանը Գրքի համաշխարհային մայրաքաղաք հռչակելուն: Ցուցադրության մեջ ներառվել են շուրջ 300 հնատիպ ու սկզբնաղբյուրային նշանակության տպագիր միավորներ: Թանգարանի ժամանակավոր ցուցադրությունների սրահում բացվել է ցուցադրություն՝ նվիրված Զմյուռնիայի աղետի 90-ամյա տարելիցին, հետո թանգարանին ստիտուտի Կոմիտասի անվ. սրահում տեղի է ունեցել գիտական նիստ:

Ստորագրվել է համագործակցության հուշագիր Հայոց ցեղասպանության թանգարանին ստիտուտի և Լիդիցեի հուշահամալիրի միջև՝ ցուցահանդեսների, ցուցանմուշների և հրատարակումների, փորձագետների փոխանակման, պատմական և արխիվային նյութերի տրամադրման նպատակով:

Բանասիրություն. Հայերենի ուսումնասիրության տարբեր ուղղություններով գիտական նոր և արժեքավոր արդյունքների ձեռքբերումն է, մասնավորապես՝ հայերենի տարածքային տարբերակների բառապաշարն ընդգրկող «Հայոց լեզվի բարբառային բառարանի» կազմման և հրատարակության պատրաստման աշխատանքների ամփոփումը, որ իրականացվել է «Հայ բարբառագիտություն. տեսություն. պատմական և համաժամանակյա քննություն» թեմայի շրջանակներում (ղեկ.՝ թղթ. անդ. Ա.Սարգսյան): Իր տեսակի մեջ ամենաընդարձակ ու համեմատաբար ամբողջական այս բառարանն ընդգրկում է 220 բարբառների ու խոսվածքների բարբառային բառերի հսկայական քանակություն՝ դրանցով կազմված արտահայտություններով, դարձվածքներով ու կայուն կապակցություններով: Բառարանի շնորհիվ մոռացությունից ու կորստից փրկվում են բարբառային հազարավոր բառեր, արժեքավոր ու անսպառ նյութ է տրամադրվում գիտության մի շարք ոլորտների (բարբառագիտություն, լեզվաբանություն, պատմություն, ազգագրություն և այլն):

Գիտական նշանակալի արժեք ունի նաև «Տարբերակայնության դրսևորումները հայոց լեզվի զարգացման տարբեր փուլերում» թեմայի շրջանակներում (ղեկ.՝ բ.գ.դ. Վ.Համբարձումյան) պատրաստված «Հայերենի բառաքննական և ստուգաբանական ուսումնասիրություններ» աշխատանքը (հեղ.՝ Վ.Համբարձումյան), որտեղ քննության են ենթարկվել հայերենի առնչությունները նոստրատիկ լեզուների հետ, հայերենի և միլերենի փոխհարաբերության հարցը, որը մինչև օրս հայերենի համեմատական ուսումնասիրության բնագավառում առաջ քաշված չի եղել: Հարցերի քննարկման ոլորտի մեջ են առնված գրական հայերենի և բարբառների, ինչպես նաև այլ լեզուների տվյալները հնչյունական և ձևությամբ համակարգի, արմատի կազմության և բառապաշարի վերաբերյալ: Ստացված արդյունքները մեկ ամբողջության մեջ որոշակի ձեռքբերում են հայերենագիտության զարգացման, հայերենի համեմատական և տիպաբանական ուսումնասիրությանը վերաբերող արդիականության տեսանկյունից:

«Հայ գրականության պատմություն և տեսություն» թեմայի շրջանակներում (ղեկ.՝ բ.գ.դ. Ավ.Իսահակյան) մշակվել է գիտական նոր մոտեցում, ըստ որի՝ հետազոտություններում արժևորվում է հայ բազմադարյան գրականության պատմության դասական կոթողների, նրա ստեղծագործական բազմերանգ ուղղությունների ու հոսանքների, գրականության ժամանակագրական համակարգի ճշգրտման, գրականության պատմության մեջ հայ ազգային կուսակցությունների և Հայոց առաքելական եկեղեցու խաղացած դերի բացահայտումը:

Հրատարակվել է Բ.Գ.Թ. Վ.Դևրիկյանի «Հայ գիրքը աշխարհի խաչմերուկներում» աշխատությունը, որտեղ առաջին անգամ ներկայացվում է, թե հայ գեղարվեստական գրականությունն ինչ տեղ է գրավում 16-րդ դարի հայ տպագիր գրքում և աղբյուրագիտական առումով ցույց են տրվում այն ձեռագրերը, որոնցից կատարվել են այդ հրապարակումները:

«Հայ դասականների գիտական հրատարակություն» թեմայի շրջանակներում (ղեկ.՝ Բ.Գ.Դ. Ավ.Իսահակյան) հրատարակվել են Լ.Շանթի երկերի 5-րդ և 6-րդ հատորները, հրատարակության են պատրաստվել Ավ.Իսահակյանի երկերի 5-րդ հատորը, Հովհ.Թումանյանի կյանքի և ստեղծագործության տարեգրության 2-րդ հատորը:

Բանահյուսական առանձին ժանրերի գիտական համահավաք բնագրերի կազմման և հետազոտության ուղղությամբ տարված աշխատանքների շնորհիվ «Հայ ժողովրդական հեքիաթների ուսումնասիրության տեսական և տեքստաբանական խնդիրներ» թեմայի շրջանակներում (ղեկ.՝ Բ.Գ.Թ. Թ.Հայրապետյան) ընթացիկ տարում հրատարակվել է «Հայ ժողովրդական հեքիաթների» XVII հատորը, որտեղ տեղ են գտել Պատմական Հայաստանի Մոկը (Մոկս) գավառի հեքիաթները:

Տնտեսագիտություն. «Հարկման արտերկրյա փորձը և դրա կիրառման հնարավորությունները ՀՀ-ում» թեմայում (ղեկ.՝ թղթ. անդ. Վ.Հարությունյան) անուղղակի և ուղղակի հարկերի վերլուծության արդյունքները հիմնավորում են հարկային բեռի օպտիմալացման և ստվերային տնտեսության նվազեցման փոխազդեցությունը կանխատեսելով տնտեսավարող սուբյեկտների հարկերի վճարումից խուսափելու վարքագծի դրսևորումը հարկային վարչարարության բարձրացման և բիզնես միջավայրի բարելավման համատեքստում:

Ռ.Սարինյանի, Վ.Հարությունյանի «Նշանավոր տնտեսագետների տողանը (մինչքեյսյան շրջան). գիտակենսագրական ուրվագծեր» գրքում 75 տնտեսագետների գիտակենսագրական ուրվագծերում արտացոլվում է մինչքեյսյան տնտեսագիտական մտքի էվոլյուցիան: Ս.Ղազարյանի, Է.Ղազարյանի «Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման և պետական աջակցության համալիր միջոցառումների իրականացումը ՀՀ գյուղատնտեսության ոլորտում» աշխատանքում հստակեցվել են ՓՄՁ սուբյեկտների դասակարգման գործող սկզբունքները, Եվրամիության չափորոշիչներին մոտեցման և ոլորտը բնութագրող ցուցանիշների համադրելիության ապահովման խնդիրները: Թ.Թորոսյանի խմբագրությամբ «Հայաստանը և Թուրքիան տարածաշրջանային տնտեսական ինտեգրման գործընթացներում» գրքում տրվել է մակրոտնտեսական և արտաքին առևտրի բնութագիրը, քննարկվել են հայ-թուրքական առևտրատնտեսական կապերը: Դ.Հարությունյանի «Հայաստանի Հանրապետության վճարային հաշվեկշռի կառավարման հիմնախնդիրները» մենագրությունում ուսումնասիրվել են երկրի վճարային հաշվեկշռի էությունը և կառուցվածքը, վերլուծվել են դրա կարգավորման սկզբունքների և մեթոդների արդյունավետության բարձրացման հեռանկարները: Վ.Խաչատրյանի, Ա.Մակարյանի «Ֆինանսատնտեսական ճգնաժամի կարճաժամկետ սոցիալական ազդեցության գնահատականը Հայաստանում» գրքում փորձ է արվել ընդհանրացված ու համառոտ իրազեկելու ՀՀ-ում ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքով առաջացած սոցիալական իրավիճակի կարճաժամկետ փոփոխությունների մասին:

Փիլիսոփայություն, սոցիոլոգիա, իրավագիտություն. «Հայ իրականության պատմափիլիսոփայական, սոցիալ-քաղաքական և իրավագիտական ուսումնասիրություններ» թեմայի շրջանակներում (ղեկ.՝ թղթ. անդ. Գ.Պողոսյան) հայ մեծ փիլիսոփա Անանիա Շիրակացու 1400-ամյակին նվիրված գիտական աշխատանքներ են հրատարակվել, մասնավորապես՝ «Անանիա Շիրակացի. մեծ գիտնական, փիլիսոփա, մանկավարժ» մեծածավալ մենագրությունը (փ.գ.դ. Կ.Միրումյան), Շիրակացու փիլիսոփայական ըմբռնումներին և մանկավարժական հայացքներին նվիրված մի շարք հոդվածներ, որոնք գետնադրվել են «Հասարակագիտական միտքը արդի ժամանակաշրջանում» գիտական նյութերի ժողովածուում:

Հայ գեղագիտական մտքի պատմության, մասնավորապես՝ հայ գեղանկարիչների,

դրամատուրգների, ճարտարապետների և արվեստի այլ ներկայացուցիչների գեղագիտական հայացքների վերլուծությանն են նվիրված փ.գ.դ. Յա.Խաչիկյանի «Հայ ճարտարապետները արվեստի մասին» մենագրությունը, «Эстетическая мысль в Армении в XX - начале XXI вв.» մատենագիտական տեղեկատուն և «Էսթետիկայի հարցեր» գիտական հոդվածների 6-րդ գիրքը: Առանձին վերլուծության են ենթարկվել գեղագիտական գիտակցությանը և նրա կառուցվածքին նվիրված հիմնախնդիրները, XIX դ. հայ փիլիսոփա Հովհաննես Տերոյենցի պատմության փիլիսոփայության մեջ ազգային լուսավորության հիմնահարցը՝ որպես ազգային գաղափարախոսության գերխնդիր:

Արվեստագիտություն. XX դարասկզբին աճում է հետաքրքրությունը հայկական ճարտարապետության հանդեպ: Ֆրանսիացի բյուզանդագետ Շ.Դիլի, գերմանացի հետազոտող Վ.Բախմանի, իտալացի արվեստաբան Զ.Ռիվոյրայի, Սորբոնի համալսարանի պրոֆ. Յու. Բալթրուշայտիսի և շատ ուրիշ հետազոտողների աշխատություններում վերլուծվել են առանձին հուշարձաններ, նաև՝ հայկական ճարտարապետության ընդհանուր ոճը: Ավստրիացի նշանավոր արվեստաբան, պրոֆ. Յո.Ստրժիգովսկին իր հետազոտությունների և Հայաստանի ճարտարապետական գիտության հիմնադիր Թ.Թորամանյանի հրատարակված և անտիպ նյութերի հիման վրա Վիեննայում (գերմաներեն) հրատարակել է «Հայերի ճարտարապետությունը և Եվրոպան» (1918) մեծածավալ երկհատոր հիմնարար աշխատությունը, որտեղ առաջին անգամ հայկական շինարվեստն իր ամբողջությամբ ներկայացվել է համաշխարհային մտքին:

«Հայ արվեստի համալիր ուսումնասիրություն» ծրագրի շրջանակներում տպագրվել է Յո.Ստրժիգովսկու վերոհիշյալ աշխատության առաջին հատորի առաջին գրքի ռուսերեն թարգմանությունը (պատ. խմբագիրներ՝ Մ.Հասրաթյան, Ա.Աղասյան): Վաղ քրիստոնեական շրջանի (IV-VII դդ.) հուշարձանների նկարագրությանը նվիրված հատորում հեղինակը ներկայացնում է Հայաստանի եկեղեցական ճարտարապետությունը: Գիրքը հաջողությամբ ներկայացվել է Մոսկվայում տեղի ունեցած գրքի միջազգային տոնավաճառում և արժանացել «Գրքարվեստ-2012» համահայկական մրցանակաբաշխության առաջին մրցանակին:

ԳԱԱ Փորձաքննությունների ազգային բյուրո

Տեղի է ունեցել Փորձաքննությունների ազգային բյուրոյի կողմից կազմակերպված եռօրյա միջազգային գիտաժողով «Դատափորձագիտական տվյալների ազգային բազաներ: Արդյունավետության բարձրացում, կարողությունների և հնարավորությունների զարգացում, առաջավոր փորձի փոխանակում և դատափորձագիտական հաստատությունների, իրավապահ մարմինների միջև համագործակցություն» խորագրով, որին մասնակցել են ավելի քան 50 փորձագետներ և մասնագետներ Ռուսաստանից, ԱՄՆ-ից, Ուկրաինայից, Վրաստանից, Բելոռուսից, Ղազախստանից, Դոմինիկյանից, Տաիվանից և ԵՄ-ից:

Ավարտվել են «Դեպքի վայրի հետազոտման առանձնահատկությունները», «Հրագենի սարքին և կրակելու համար պիտանի լինելու հետազոտություն», «Ձեռագիրը որպես դիագնոստիկ հետազոտության օբյեկտ» թեմաներով հետազոտական աշխատանքները:

Կրթության և գիտության հայկական ազգային հիմնադրամի մրցութային ծրագրին են ներկայացվել «Մանկային տոքսիկոլոգիայի հիմունքներ» և «Ազդեցիկության հոգեբանական առանձնահատկությունների, ինչպես նաև նրա արգելակող անձնական կառուցվածքների ուսումնասիրումը որպես քրեական վարքի կանխարգելման նախապայման» թեմաներով գիտահետազոտական ծրագրերի իրականացման հայտեր:

Լինելով Դատափորձագիտական ինստիտուտների եվրոպական ցանցի (ENFSI) լի-

իրավ անդամ՝ Փորձաքննությունների ազգային բյուրոյի 12 փորձագիտական ստորաբաժանումներ դարձել են ENFSI-ի կազմում գործող համապատասխան «Փորձագիտական աշխատանքային խմբերի» անդամներ:

Ա.Ջավադյանը մասնակցել է ENFSI-ի տարեկան աշխատաժողովին, հանդես է եկել ելույթով:

ENFSI-ի 2013 թ. մենաշնորհային ծրագրի շրջանակներում, ENFSI-ի «Պայթուցիկներ» աշխատանքային խմբի կազմում, «Լավագույն գործնական ձեռնարկ» դրամաշնորհային ծրագրին հայտ է ներկայացրել Դ.Մելքումյանը, որը հավանության է արժանացել ENFSI-ի տնօրինության կողմից:

Փորձաքննությունների պետական տարեկան պատվերն ամբողջությամբ կատարվել է դեռևս 2012 թ. օգոստոսի 10-ին (5543 դատական փորձաքննություն), դատական փորձաքննությունների կատարումը շարունակվել է, և առ 01.12.2012 թ. արդեն իսկ իրականացվել է 7935 դատական փորձաքննություն:

ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Ֆիզիկամաթեմատիկական և տեխնիկական գիտություններ

Մեխանիկայի ինստիտուտ

Հաստատվել է, որ ձգման և սեղմման դեպքերում թեթև բետոնների առաձգականության սկզբնական մոդուլների և սողքի չափերի հարաբերության մեծությունը որոշակի սահմաններում, կախված մի շարք գործոններից, կարելի է կառավարել: Հիմնավորվել է այդ փաստը հաշվի առնելու նպատակահարմարությունը բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիոն որոշ տարրեր նախագծելիս (ղեկ.՝ տ.գ.դ. Կ.Կարապետյան):

Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտ

Մշակվել է ալգորիթմ և ստեղծվել է ծրագրային համակարգ՝ մատնահետքերի վերաբերյալ երրորդ մակարդակի խնդիրներ լուծելու համար, մասնավորապես՝ մատնահետքերից արտածվում են այնտեղ պատկերված ծակոտիները (ղեկ.՝ տ.գ.դ. Դ.Ասատրյան):

«Հիդրոմեխանիկայի և վիբրոտեխնիկայի բաժին» ՓԲԸ

Կատարվել են նախագծված և պատրաստված հողմաէլեկտրակայանի թողարկման և կարգաբերման աշխատանքները, ընտրվել են հողմաէլեկտրակայանի բնօրինակի փորձարկման համար անհրաժեշտ չափող և գրանցող սարքերը:

Հողմաէլեկտրակայանի բնօրինակի փորձարկումները հնարավորություն են տալիս բնական միջավայրում որոշել աերոդինամիկական բնութագրերը և համեմատել տեսական հաշվարկների հետ (ղեկ.՝ տ.գ.թ. Գ.Ավետիսյան):

Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ

Ձևավորվել են երկչափ և եռաչափ ինտենսիվության մոդուլյացիա ունեցող լազերային փնջեր պատկերի աքսիալ ինքնառեպլիկացիան՝ Թալլբոտի երևույթի հիման վրա՝ օգտագործելով պարբերական և քվադրպարբերական միկրոմետրական կառուցվածքներ և տարբեր պտտական սիմետրիա ունեցող դիմակներ: Փնջերը հեռանկարային են ֆոտոռեֆրակտիվ նյութերում բյուրեղային բեկման ցուցիչի փոփոխությամբ միկրո- և նանոկառուցվածքների ձևավորման համար (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Ռ.Դրամփյան):

Վակուումում էլեկտրոնաճառագայթային փոշենստեցման եղանակով ստեղծվել են Er_2O_3 բյուրեղական թաղանթներ շափուղայի և կվարցի հարթակների վրա: Հետազոտվել են նրանց կառուցվածքային և օպտիկական հատկություններն օդում՝ մինչև ջերմային կարճատև մշակումը և դրանից հետո: Ցույց է տրվել, որ թաղանթների ջերմային մշակմամբ կարելի է ստանալ միաֆազ (222) կողմնորոշմամբ խորանարդային բյուրեղական ցանցով երբիումի օքսիդի բարակ թաղանթներ (ղեկ.՝ թղթ. անդ. Ռ.Կոստանյան):

Միներալվել են մետաղածխածնային (M/C) նանոկոմպոզիտներ՝ Ni/C, Cu/C: Ստացված նյութերը փորձարկվել են որպես ֆիլտրեր տարբեր ոլորտներում, մասնավորապես՝ Դոնի Ռոստովի ծխախոտի ֆաբրիկայում. նախնական չափումների արդյունքում ստացվել է, որ Ni/C, Cu/C նանոկոմպոզիտները 40-50% ավելի էֆեկտիվ են կլանում խեժը և նիկոտինը, քան ներկայումս օգտագործվող ածուխները (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Է.Շառոյան):

Մշակվել է 2,45 ԳՀց միկրոալիքային ճառագայթումով գրգռմամբ CO₂ լազերային ճառագայթման աղբյուրի համակարգ: Ուսումնասիրվել և մշակվել է միկրոալիքային ռեզոնատոր, հավաքվել է լազերային ճառագայթման ստացման հետազոտությունների համար անհրաժեշտ փորձարկումների ստեղծ: Կատարվում են կարգաբերման և ճառագայթման ստացման հետազոտություններ (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ռ.Մանուշարյան):

Մշակվել է թաքնված QR կոդը (մատրիցային բարկոդը) կարդացող սարքի նախատիպ, որը հիմնված է լազերային ճառագայթման ծրման և հետադարձ ցրված ազդանշանի պատկերագրման վրա: Համակարգն ամբողջությամբ ղեկավարվում է համակարգչով՝ DAQ քարտի միջոցով: Հաջողվել է գրանցել ստվարաթղթով ծածկված QR կոդը: Աղավաղված պատկերի վերծանումը կատարվելու է ծրագրային փաթեթով՝ Բուրգունդիայի համալսարանի կողմից մշակված ալգորիթմով (ղեկ.՝ թղթ. անդ. Ա.Պապոյան):

LaB₆ հարթ կատոդների պատրաստման համար հետազոտվել են Ag/PZT/LaB₆/Al₂O₃ և La₂O₃/LaB₆/Al₂O₃ կառուցվածքների օպտիկական, էմիսիոն և կառուցվածքային բնութագրերը, որոնց ոչ-գծային վոլտ-ամպերային բնութագրերը ցույց են տվել Ֆաուլեր-Նորդհեյմի կախումը, և էմիսիայի հոսանքը՝ համապատասխանաբար 100 և 9×10^{-9} $\mu\text{A}/\text{cm}^2$ և 20 kV/cm² դաշտի լարվածության դեպքում (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ե.Կաֆադարյան):

Ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտ

Մշակվել են միմյանցից անկախ աշխատող երկու գլխիկներով և ռենտգենյան ճառագայթման գրանցիչի բռնիչով հեռակառավարվող գոնիոմետրի կոնստրուկտորական փաստաթղթերը: Մշակված գոնիոմետրի նպատակը ռենտգենաակուստիկական մոնոքրոմատորի և գրանցիչի հիման վրա արագ և մեծ լուծողունակությամբ ռենտգենյան ճառագայթների սպեկտրալ բաշխման հետազոտություններ կատարելն է (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ա.Մկրտչյան):

Ստեղծվել են մեծ բարորակությամբ օժտված ակուստապլազմային դիոդներ (ղեկ.՝ ակ. Ա.Մկրտչյան):

Մշակվել և պատրաստվել է 1Հց-ի ճշտությամբ 1կՀց-ից մինչև 40ՄՀց տիրույթն ընդգրկող սինուսոիդալ ազդանշանների գեներատոր՝ մեծ կայունությամբ ռենտգենաակուստիկական մոնոքրոմատորի պարամետրերի կառավարման համար (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Վ.Քոչարյան):

Մշակվել է ցածրջերմաստիճանային ջրային լուծույթներից աճեցվող միաբյուրեղների աճի արագության որոշման նոր եղանակ, որը թույլ է տալիս միաբյուրեղի աճի ընթացքում բարձրացնել չափումների ճշգրտությունը (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ա.Աթանեսյան):

Ամինաթթուների աղերի հիման վրա ՈԳՕ բյուրեղների որոնման աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է ամինաթթուների հեքսաֆտորսիլիկատային բյուրեղային պարզ և տարանիոն աղերի մի ամբողջ դաս, որոնք բարերար ազդեցություն են գործում ատամների գերզգայունության նվազեցման և ատամնափուտի (կարիեսի) կանխման վրա: Դա հաստատվել է կենդանիների վրա կատարված փորձարկումների արդյունքում, ապացուցվել է դրանց արդյունավետությունը և առավելությունն առկա այլ միջոցների նկատմամբ (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ա.Պետրոսյան):

Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտ

Առաջարկվել և հետազոտվել է «Ռոդոտրոն» արդյունաբերական արագացուցիչի ռեզոնատորի սկզբունքորեն նոր կոնֆիգուրացիան, որը թույլ է տալիս էֆեկտիվորեն գումարել բազում համափուլ աղբյուրների դաշտերը: Ռեզոնատորը մոդիֆիկացված կոաքսիալ կառուցվածք է, որում արտաքին զլանի և ռեզոնատորի կողաճակատի միացման մասում կազմավորված է օղակաձև ճեղք: Ռադիացիոն կորուստների կանխարգելման նպատակով

ճեղքը բեռնվել է կարճ միացում իրականացնող օդակաձև շլեյֆով, որի միջով անցնում են յուրաքանչյուր աղբյուրից եկող կապի տարրերը: Մշակված էլեկտրադինամիկական կառուցվածքն ապահովում է աղբյուրների բարձրակարգ կապագերծումը, բացառում է բարձր հզորության արտաքին գումարիչների անհրաժեշտությունը և, որպես արդյունք, թույլ է տալիս «Ռոդոտրոն» տիպի արագացուցիչի իրականացումը լիովին պինդմարմնային ուժեղաբարների վրա (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ա.Հախումյան):

Մշակվել է իմպեդանսների համաձայնեցման ավտոմատ թվային սարք՝ բարձր հաճախային (ԲՀ) պլազմային ռեակտորների համար, որը կիսահաղորդիչներ արտադրող սարքավորումների հիմնական մասն է: ԲՀ ինդուկտիվ և ունակային տիպի ռեակտորների հիմնական պրոբլեմը ԲՀ հզորության հաղորդման ցածր էֆեկտիվությունն է, երբ այդ հաղորդումը կատարվում է անմիջապես հզորության աղբյուրից՝ պլազմային իմպեդանսների անհամապատասխանության պատճառով: ԲՀ հզորությունը բերում է իմպեդանսի ոչ-գծային փոփոխությունների, ինչը բացառում է համաձայնեցման ստատիկ սարքերի օգտագործումը և անհրաժեշտ է դարձնում ավտոմատ-ադապտիվ մեթոդների կիրառումը: Ավտոմատ համաձայնեցման սարքերը լինում են երկու տեսակ՝ դանդաղ (շարժվող մասերով) և արագ (առանց շարժվող մասերի) համաձայնեցման: Մշակված սարքը հիմնված է PIN-դիոդների վրա և նախատեսված է արագ (5 մվրկ. ցածր) համաձայնեցման համար, ինչն անհրաժեշտ է կիսահաղորդիչների արտադրման պրոցեսում բարձրորակ խաճատման համար: Հզորության չափումներն իրականացվում են լարման և հոսանքի երկու կոաքսիալ տվիչների միջոցով, մեծ ճշտությամբ (1%), ինչը հնարավոր է դարձնում շղթայում ցրվող հզորության մոնիթորինգը: Թվային կառավարումն իրականացվում է DSP կոնտրոլերով, որն ընդունում է տվիչներից եկող ռադիոազդանշանը և հատուկ ալգորիթմի միջոցով վերամիացնում է PIN-դիոդները (ղեկ.՝ գ.ա. Ն.Պողոսյան):

Մշակվել և պատրաստվել է տագնապի ազդանշանի գերկարճալիք տիրույթի փոքրաչափ ռադիոհաղորդիչ, որը, զգայուն սեյսմիկ տվիչի հետ, կառուցվածքային առումով, հավաքված է մեկ իրանի մեջ: Ռադիոհաղորդիչի առանձնահատկությունը չափազանց փոքր էներգասպառումն է, ինչն ապահովում է հողի տակ տեղադրված սեյսմատվիչի անընդհատ աշխատանքը 6 ամսվա ընթացքում՝ առանց սնուցող էլեմենտների փոխարինման: Ընդունիչի ծրագրավորումն իրականացվել է RS-232 ինտերֆեյսի միջոցով՝ ապահովելով հետևյալ հիմնական գործառնությունների ճշտադրումը՝ ռադիոուղու համարը և հաճախությունը, տվիչի նույնականացման կոդը, ինքնաստուգման պարբերությունը, առանձին ռադիոուղու հաճախային շերտը և ճոճքը, մեկ նիշի հաղորդման արագությունը:

Ռադիոկապի հեռահարության մեծացման նպատակով տեղեկատվական փաթեթը կոդավորվում է Convolution Coding-ի մանչեստրյան եղանակներից մեկով, իսկ հաղորդված փաթեթի տեղեկատվության ամբողջականության ստուգումն իրականացվում է CRC32 ալգորիթմով (ղեկ.՝ թղթ.անդ. Ա.Ղուլյան):

Կատարվել է հողի, ձյան ծածկույթի, ջրի մակերևույթի, անամպ երկնքի, ամպերի ու տեղումների ցրման ու սեփական ռադիոճառագայթումների ԳԲՀ բնութագրերի փորձարարական հետազոտությունների արդյունքների մշակում՝ այդ բնութագրերի անկյունային, հաճախային ու բևեռական կախվածությունների պարզաբանման նպատակով: Չափումներն իրականացվել են C (5.6ԳՀց), Ku (15ԳՀց) և Ka (37ԳՀց) հաճախային տիրույթներում, տարածաժամանակային համատեղմամբ գործող ռադիոլուկացիոն ու ռադիոմետրիկ համակարգերով: Ստացվել են նշված օբյեկտների ցրման ու սեփական ռադիոճառագայթումների, ինչպես նաև կարկտախառը տեղատարափ անձրևի պատճառ հանդիսացող ամպի ու այդ տեղումների սեփական ռադիոճառագայթումների ԳԲՀ բնութագրերի նախնական անկյունային կախվածությունները (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ա.Առաքելյան):

Մեծ հզորության լազերային ճառագայթի ազդեցության տակ մի շարք հեղուկներ

հարստացվել են ազնիվ և գունավոր մետաղների ատոմներով, իոններով և նանոմետրական չափերի մասնիկներով: Նանոմասնիկների չափերը կարող են տատանվել 50-ից մինչև 500 նանոմետր՝ կախված լազերային ճառագայթի հզորության խտությունից: Ուսումնասիրվել են այդպիսի հարստացված լուծույթների հատկությունները: Մետաղների նանոմետրական չափերի մասնիկների յուրահատկությունները չափազանց կարևոր են դարձնում նրանց կիրառումը նոր սերնդի նանոսարքավորումների մեջ՝ որպես ֆոտոքիմիական պրոցեսների կատալիզատորների: Պարզաբանվել է, որ արծաթի և ոսկու նանոմասնիկներով հարստացված հեղուկների կիրառումը ֆոտոզգայուն էմուլսիաների մեջ նկատելիորեն ուժեղացնում է նրանց ֆոտոզգայունությունն ուլտրամանուշակագույն և տեսանելի տիրույթի լույսի նկատմամբ: Մետաղների նանոմասնիկների և ֆոտոզգայուն մոլեկուլների կապը խթանում է ֆոտոքիմիական պրոցեսները լույսի հավաքման օպտոէլեկտրոնային սարքերում և բերում է նրանց զգայնության բարձրացմանը (դեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ռ.Խաչատրյան):

Բնական գիտություններ

Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն

Երևան քաղաքում վաճառվող սննդամթերքի ռիսկի գնահատման արդյունքում տնտեսվարողների մեծ մասը գտնվել է բարձր ռիսկային գոտում: Իրականացված փորձարկման արդյունքում հիգիենիկ ինդիկատորների և միկրոտոքսինների մասով հայտնաբերվել են մի շարք խախտումներ: Կատարվել է միջազգային մեթոդի արդյունավետության գնահատումը ըստ փորձարկման արդյունքների և փաստվել է մեթոդի բարձր արդյունավետությունը:

Կատարվել է ՀՀ-ում գործող կաթնամթերքի արտադրության ռիսկերի գնահատում: Ստուգվել են ինչպես աղտոտիչների պարունակությունն ու հիգիենիկ ցուցանիշները, այնպես էլ կեղծվածությունը սողայով և այլ ինհիբիթրացնող նյութերով, փոշի կաթով և բուսասերուցքային սփրեդով: Կատարվել է նաև պաղպաղակների արտադրության ռիսկի գնահատում: Բացահայտվել են հիգիենիկ ցուցանիշների, սողայի և փոշով կեղծման մի շարք անհամապատասխանություններ:

Որոշվել են Արարատյան հարթավայրում աճեցվող ձկնաբուծական տնտեսությունների ջրի որակի և անվտանգության ցուցանիշները, էկոլոգիական աղտոտիչներով աղտոտվածությունը: Ակնա լճում իրականացվել է ջրի որակի և անվտանգության ցուցանիշների հետազոտում և էկոլոգիական աղտոտիչների ռիսկի գնահատում: Հետազոտությունների արդյունքում փաստվել է, որ համակարգը չունի աղտոտման ռիսկ, իսկ վերջնական մթերքում մնացորդային քանակություններ չեն հայտնաբերվել, ինչը հնարավորություն է ընձեռում արտահանում իրականացնել ԵՄ երկրներ:

Հաստատվել է ՀՍՀ (ՀՀ Ստանդարտ) 349-2012 «Ձկնաբուծական տնտեսությունների ջրավազաններում օգտագործվող ջրի որակի պահպանում» ստանդարտը (դեկ.՝ ան.գ.թ. Դ. Պիպոյան):

Շարունակվել են Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող «Գյուղատնտեսական ռեսուրսների կառավարում և մրցունակություն» ծրագրի սահմաններում իրականացվող ուսումնասիրությունները, մասնավորապես՝ հանրապետության 6 մարզերի 27 համայնքներում կատարվել են հետևյալ հետազոտությունները.

- որոշվել են բնական կերահանդակների արդյունավետությունը և բուսածածկի գերիշխող տեսակները,

- ուսումնասիրվել է արածեցման, լանջերի թեքության և դիրքադրության ազդեցությո-

յունն արոտների արդյունավետության վրա,

- առանձին արոտահանդակների արդյունավետության տվյալների հիման վրա կազմվել են գյուղատնտեսական կենդանիների հերթափոխային արածեցման եռամյա գրաֆիկներ,

- գյուղատնտեսական հողատարածքների իրավիճակի լանդշաֆտաէկոլոգիական գնահատման մեթոդիկայի հիման վրա կատարվել է գյուղական համայնքների արոտավայրերի էկոլոգիական իրավիճակի գնահատում և խոշորամասշտաբ քարտեզագրում (ղեկ.՝ ե.-հ.գ.դ. Ա.Սաղաթելյան):

Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն

Բացահայտվել է Արագածոտնի մարզի ընտանի կենդանիների՝ մակաբույծներով վարակվածությունը: Մարզի 10 գյուղերի ֆերմերային տնտեսություններում ուսումնասիրվել են մանր եղջերավոր կենդանիների որոշ հելմինթներով վարակվածության շարժընթացը և թոքային նեմատոդոզների համաճարակաբանական հիմնական առանձնահատկությունները: Վարակվածության աստիճանը բարձրադիր գոտիներում ավելի բարձր է, քան ցածրադիրներում: Հետազոտությունների արդյունքները կարող են գիտական հիմք հանդիսանալ բնական և գյուղատնտեսական էկոհամակարգերի մակաբուծաբանական անվտանգությունն ապահովելու նպատակով բուժկանխարգելիչ միջոցառումների մշակման և իրագործման համար (ղեկ.՝ ակ. Ս.Մովսեսյան):

Կազմվել է «Անասնաբուժասանիտարական փորձաքննություն» մեթոդական ձեռնարկ, որը երաշխավորվել է ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից (ղեկ.՝ ան.գ.դ. Վ.Աբրահամյան):

Լաբորատոր պայմաններում ստացվել է գյուղատնտեսական մշակաբույսերի վնասատուների դեմ կենսաբանական պայքարում կիրառվող *Phytoseiulus persimilis* A.-H. գիշատիչ ֆիտոսեիդ տիգի 50 սերունդ և ստեղծվել է 530 հասուն առանձնյակներից բաղկացած լաբորատոր պոպուլյացիա: Ուսումնասիրվել է *Phytoseiulus persimilis*-ի վրա լայնորեն կիրառվող գեքսագիզոն, ստոպ 1 և ստոպ 2 թունաքիմիկատների ազդեցությունը: Գեքսագիզոնի նկատմամբ գիշատիչի դրսևորած կայունությունը թույլ է տալիս նրան օգտագործել գեքսագիզոնի կիրառմամբ քիմիական պայքարի հետ համատեղ (ղեկ.՝ կ.գ.դ. Կ. Դիրարյան):

2012 թ. ՀՀ բնապահպանության նախարարություն են ներկայացվել Սևանա լճի ձկնատեսակների և խեցգետնի արդյունագործական պաշարների գնահատման և թույլատրելի որսաչափի որոշման, Սևանա լճի ջրհավաք ավազանի գետերում էնդեմիկ ձկնատեսակների բնական ձվադրավայրերի վիճակի ուսումնասիրությունների արդյունքները:

Սևանա լճի ձկնային պաշարներն աղետալի վիճակում են, պաշտպանական միջոցառումներ գրեթե չեն իրականացվում: Էնդեմիկ ձկնատեսակների բնական ձվադրավայրերի հետազոտությունները ցույց են տվել, որ Սևանա լճի վտակների վրա կառուցված գրեթե բոլոր հիդրոտեխնիկական կառույցներում բացակայում են ձկնանցարանները կամ չեն համապատասխանում պահանջվող նորմերին: Կարճադրյուր գետում առանց ջրօգտագործման թույլտվության կառուցված գլխամասային հանգույցից վեց տարբեր տրամաչափի խողովակների միջոցով կատարվող ջրառի արդյունքում, որը կատարվում է անհատական ձկնային լճակների ջրամատակարարման համար, գետը գործնականում կորցրել է ձկներ բազմացնելու նշանակությունը: Նմանօրինակ անմխիթար վիճակում են և Վարդենիկ, Մարտունի, Արգիշի, Լիճք և Գավառագետ գետերի ողողահուները: Ինստիտուտը մշակել և Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովին է ներկայացրել բնական ձվադրավայրերի վերականգնման առաջարկներ՝ վերակառուցել ՓՀԷԿ-ի գլխային հանգույցները, բարեկարգել գետերի ողողահուները, կասեցնել Սևանա լճի ավազանում գտնվող

որոշ ձկնաբուծական լճակների գործունեությունը և խիստ հսկողություն սահմանել ջրօգտագործման նկատմամբ (ղեկ.՝ կ.գ.դ. Բ.Գաբրիելյան):

Խեցգետնի պոպուլյացիայի հետազոտությունները ցույց են տվել, որ նրանց պաշարները մնացել են գրեթե անփոփոխ, նույն մակարդակին է մնացել նաև թույլատրելի որսաչափը (ղեկ.՝ կ.գ.թ. Է.Ղուկասյան):

Հր.Բունիաթյանի անվ. կենսաքիմիայի ինստիտուտ

Ներդրվել են սպիտակուցների անջատման, նույնականացման, առաջնային կառուցվածքի որոշման մեթոդները, պեպտիդների fmoc-պաշտպանված ամինաթթուների կիրառմամբ պինդ ֆազային եղանակով սինթեզը: Շարունակվում են գալարմինի՝ որպես դեղամիջոց կիրառման կլինիկական փորձարկումները: Աշխատանքներ են տարվում գալարմինի սրվակավորման ուղղությամբ (ղեկ.՝ կ.գ.դ. Ս.Չախյան):

Հետազոտված նոր ջրալույծ պորֆիրինները, որոնք ունեն տարբեր կոդմային խմբեր, ինչպես նաև Zn-մետաղապորֆիրինները ցուցաբերում են սինզլետ թթվածնի արտադրման բարձր արդյունավետություն, ինչը թույլ է տալիս երաշխավորել ֆոտոդինամիկ թերապիայում և մանրէների ֆոտոդինամիկ ինակտիվացիայում նրանց օգտագործումը (ղեկ.՝ կ.գ.թ. Գ.Գյուլիսանդանյան):

Հեմոքֆինները կարող են դրսևորել հոմեոստատիկ ազդեցություն նաև նեյրոդեգեներատիվ հիվանդությունների դեպքում, ինչը հաստատում է այն տեսակետը, որ հեմոքֆիններն ունեն կարևոր կիրառական նշանակություն նոր էֆեկտիվ կոմպլեքսային դեղամիջոցների ստեղծման համար (ղեկ.՝ կ.գ.դ. Ն.Բարխուդարյան):

Աշխատանքներ են տարվում չոր բակտերիալ պարարտանյութերի ստացման ուղղությամբ (ղեկ.՝ կ.գ.թ. Հ. Սարգսյան):

Սինթեզվել են ոսկու և արծաթի նոր ձևերի նանոմասնիկներ, որոնց հատկությունները թույլ են տալիս կիրառել դրանք ավելի զգայուն իմունաանալիզներում (ղեկ.՝ կ.գ.թ. Վ.Գասպարյան):

Պուրինային կատաբոլիզմի վերջնական ֆերմենտ քսանտինօքսիդազի արգելակումը հանգեցնում է բջջային պրոլիֆերացիայի խթանմանը, որն ինսուլտից հետո, վերականգնողական փուլում, կարող է ունենալ կլինիկական կիրառում (ղեկ.՝ կ.գ.թ. Ք.Դանիելյան):

«Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոն

Կենսատեխնոլոգիայի ինստիտուտ

Իրականացվել է ոչ սպիտակուցային ամինաթթուների պրեպարատիվ արտադրության տեխնոլոգիական պարամետրերի օպտիմալացում (pH, T_{հալման}, միջավայր, ռեագենտների կոնցենտրացիա և այլն), արտադրական նմուշների ստացում և փոքրածավալ արտադրության կազմակերպում: Արդյունքում՝ կատարելագործվել են առավելագույն պահանջարկ ունեցող 8 ոչ սպիտակուցային ամինաթթուների փոքրածավալ քանակներով արտադրության տեխնոլոգիաները, իրականացվել է դրանց սերտիֆիկացումը՝ պահանջվող արդի չափորոշիչներին համապատասխան (ղեկ.՝ ակ. Ա.Սադյան):

Կենտրոնի փորձարարական կայանում, «ՄԻՄ-95» ՍՊԸ-ի հետ համատեղ, արտադրվում է «Ազոցեմվիտ-1» էկոլոգիապես անվնաս կենսապարարտանյութը, որն իրացվում է ՀՀ պետական և մասնավոր գյուղտնտեսություններում (ղեկ.՝ կ.գ.թ. Գ.Ավետիսովա):

«Բակտոռոդենցիդի»՝ կրծողների դեմ բակտերիալ պատրաստուկի նոր տեխնոլոգիաների մշակում և փորձնական արտադրության կազմակերպում» նախագծի շրջանակներում

Salmonella enteritidis Issatchenko կուլտուրայի հիման վրա ստացվել են «Բակտոռոդենցիդ»-ի հատիկավոր պատրաստուկներ՝ օժտված կրծողների դեմ բարձր ակտիվությամբ (դեկ.՝ ակ. Է.Աֆրիկյան):

Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ

Ցույց է տրվել, որ ճառագայթային բժշկության և այրվածքների կենտրոնի քիմիկոսների կողմից նոր սինթեզված ցիկլիկ ամինաթթվի ածանցյալը՝ Cu-Pltryp-ը, նվազեցնում է մահացության աստիճանը և բարձրացնում հակաօքսիդանտային ու իմունային համակարգերի ակտիվություններն իոնիզացնող ճառագայթման պայմաններում, ինչը թույլ է տալիս առաջարկել օգտագործել այս միացությունը որպես բազմաֆունկցիոնալ ճառագայթապաշտպանիչ ագենտ (դեկ.՝ կ.գ.դ. Ա.Բոյաջյան):

Բջջային կուլտուրաների և փորձարարական կենդանիների օգտագործմամբ ցույց է տրվել, որ հակաքաղցկեղային պատրաստուկների ազդեցության արդյունավետությունը չարորակ նորագոյացությունների վրա զգալիորեն բարձրանում է, երբ դրանք օգտագործվում են որպես ցինկ օքսիդի նանոկոմպոզիտներ՝ նանոծածկոյթներ, նանոթաղանթներ և նանոժելեր (դեկ.՝ կ.գ.դ. Գ.Գասպարյան):

Ցույց է տրվել, որ նոր սինթեզված մեզո-տեղակայված ամֆիֆիլ պորֆիրինն օժտված է բարձր բջջաֆոտոթունային ակտիվությամբ մարդու չարորակ ուռուցքների բջիջների նկատմամբ և, դրա հետ մեկտեղ, չունի գենաթունային հատկություններ, ինչը թույլ է տալիս առաջարկել այս միացությունը որպես դեղամիջոց ուռուցքների ֆոտոթերապիայի համար (դեկ.՝ կ.գ.դ. Գ.Գասպարյան):

Մշակվել է էքսպրես-մեթոդ՝ տարբեր պատրաստուկներում մանրէների քանակական որոշման համար (դեկ.՝ կ.գ.դ. Կ.Հովսեփյան):

Մշակվել է համակարգչային ծրագիր «KEGG pathway»՝ տվյալների բազայի ազդանշանային կասկադների մոլեկուլային քարտեզների շարահյուսական վերլուծության և խմբագրման համար (դեկ.՝ կ.գ.թ. Ա.Առաքելյան):

Մշակվել է բազմաչափ օբյեկտների դասակարգման սխալի արագ գնահատման ալգորիթմ՝ գենների էքսպրեսիայի տվյալների վերլուծության համար (դեկ.՝ կ.գ.թ. Ա.Առաքելյան):

Գ.Դավթյանի անվան հիդրոպոնիկայի պրոբլեմների ինստիտուտ

«Հայկական բերքի առաջնորդման կենտրոն» ընկերության կողմից իրականացվող խաղողի քիմիաշաղկապ տեսակների ինտենսիվ այգիների ստեղծման պիլոտային ծրագրի շրջանակներում (դեկ.՝ կ.գ.թ. Խ.Մայրապետյան) ինստիտուտի հիդրոպոնիկական փորձարարական կայանում կազմակերպվել է խաղողի տնկիների արագացված արտադրություն, որը 1հա հիդրոպոնիկական սնուցվող մակերեսից տվել է խաղողի բարձրորակ 242 հազ. արմատակալ:

Դեկորատիվ ծառաթփատեսակների (սոսի, կաղնի, կենսածառ, սրնգենի, ձիակասկ, կովկասյան խուրմա և այլն) տնկիների հիդրոպոնիկ եղանակով աճեցման կենսատեխնոլոգիայի մշակման փորձերի արդյունքում ստացված շուրջ 350 տնկի տրամադրվել է Երևանի պետական համալսարանին և այլ կազմակերպությունների: Աշխատանքներ են տարվում շահագրգիռ կազմակերպությունների հետ՝ տնտեսական պայմանագրերի կնքման նպատակով (դեկ.՝ կ.գ.թ. Ա.Հովսեփյան):

ՀՀ Ազգային ստանդարտների ինստիտուտը գրանցել է մեդրախոտի տեխնիկական պայմանները (ՀՀ ՏՊ 10012903.6803-2011N11707):

Ռուս-հայկական ինովացիոն համագործակցության կենտրոնում ներկայացվել և

քննարկվել է ՀՀ-ում և ԼՂՀ-ում թանկարժեք տեխնիկական մշակաբույս մեղրախոտի ներդրման առաջարկը (ղեկ.՝ գյուղ.գ.դ. Մ.Բաբախանյան):

Քիմիական և Երկրի մասին գիտություններ

Ա.Նալբանդյանի անվ. քիմիական ֆիզիկայի ինստիտուտ

Նախագծված, կառուցված և կարգաբերված փորձնական տեղակայանքի վրա մշակվել են «ԼԱ-2» ժանգի ձևափոխիչի ստացման տեխնոլոգիական պարամետրերը, մշակվել են համապատասխան տեխնիկական փաստաթղթերը՝ արգասիքի ստացման տեխնոլոգիական հրահանգը, տեխնիկական պայմանները, որոնք փորձաքննության է ներկայացրել «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ (ղեկ.՝ ք.գ.թ. Լ.Ներսեսյան):

Մշակվել է կոբալտի սուլֆատի փոշու ստացման եղանակ՝ հիմնված երկփուլ ալյումին ռեժիմում կոբալտի սուլֆատի բյուրեղահիդրատի ($\text{CoSO}_4 \cdot 7\text{H}_2\text{O}$) վերականգնման վրա՝ որպես վերականգնիչ օգտագործելով օրգանական պինդ պոլիմերներ (պոլիստիրոլ, պոլիէթիլեն) (ղեկ.՝ թղթ. անդ. Ս.Խառատյան):

Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոն ՕՂՔ ԳՏԿ Ա.Մնջոյանի անվ. նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտ

Մշակվել են սիլիկահողի մոդիֆիկացիայով կոմպոզիցիոն սորբենտներ՝ պորֆիրին լիգանդներ պարունակող պոլիմերներով: Ցույց է տրվել, որ սինթեզված սորբենտներն օժտված են օգտակար հատկություններով՝ մետաղների իոնների, սպիտակուցի (ցուլի շիճուկի ալբումինի-ՑՄԱ օրինակով), ՌՆԹ-ի (վանադիլային ռիբոնուկլեոզիդային կոմպլեքսի օրինակով) զսպամբ, իսկ էլյուատներն ունեն բարձր օպտիկական թափանցիկություն (OD_{280}), որոնց շնորհիվ ստացված սորբենտները կարող են օգտագործվել տարբեր միջավայրերից ԴՆԹ-ի անջատման և մաքրման պրոցեսների համար (ղեկ.՝ ք.գ.դ. Ս.Գրիգորյան):

Անջատվել և ուսումնասիրվել է Հայաստանում տարածված անթառամ կարմրավունի ծաղկազամբյուղների ֆլավանոիդային խառնուրդը և ցույց է տվել, որ նրա բաղադրությունը համընկնում է «Ֆլամին» դեղամիջոցի բաղադրությանը (ղեկ.՝ ք.գ.դ. Վ.Մնացականյան):

Մ.Մանվելյանի անվ. ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտ

Մշակվել և արդեն պատրաստ է ներդրման անջուր նատրիումի մետասիլիկատի և նրա տարբեր բյուրեղահիդրատների ստացման նոր տեխնոլոգիան:

Կատարելագործվել է ալյումինային հանքանյութի մշակման եղանակը, որը թույլ է տալիս պրոցեսը տանել ցածր ջերմաստիճանում և ավելի պարզ պայմաններում: Հանքանյութի մշակման պրոցեսում ստացվող ալյումինի խտանյութը կամ նրա հիդրօքսիդն օգտագործվել են որպես ազոնայութ խակոպիրիտի և մոլիբդենիտի վերամշակման պրոցեսում, որը հնարավորություն է տալիս նշված հանքանյութերը մշակել տնտեսապես շահավետ և էկոլոգիապես մաքուր եղանակով (ղեկ.՝ տ.գ.թ. Ս.Սահարունյան):

Սինթեզվել է կալցիում-մագնեզիումական օրթոսիլիկատի և մագնեզիումի օքսիդի խառնուրդ պինդ ֆազային եղանակով, սերպենտինիտից և կալցիումի կարբոնատից: Սինթեզված խառնուրդները փորձարկվել են «Նաիրիտ-2» ձեռնարկությունում՝ որպես լցանյութ ռետինային կոմպոզիտներում (կավիճի, բենտոնիտի և կաոլինի փոխարեն): Փորձարկված փոշիները մեծացրել են ռետինի ամրությունը (ղեկ.՝ տ.գ.թ. Կ.Գրիգորյան):

Երկրաբանական գիտությունների ինստիտուտ

Ստացվել է ուժեղ՝ $M \geq 6.0$ մագնիտուդով երկրաշարժերի ժամանակ գետնի տեղափոխությունների և արագացումների մաքսիմալ արժեքների և ժամանակի ընթացքում նրանց փոփոխությունների՝ սեյսմագրամների և աքսելեոգրամների կանխագուշակման եղանակ՝ կախված կանխագուշակվող երկրաշարժի մագնիտուդի մեծությունից, ակտիվ խզվածքից, դիտարկման վայրի հեռավորությունից և տեղանքի անհամասեռ բազմաշերտ երկրաբանական կառուցվածքի (լիթոլոգիական սյան) դինամիկական բնութագրերից (ղեկ.՝ ակ. Է.Խաչիյան):

Պարզաբանվել է, որ Որոտան-Գորիս դիատոմիտաբեր ավազանում ֆոսֆոր պարունակող դիատոմիտային ապարները բնորոշվում են լուծվող երկաթի բարձր պարունակությամբ: Այս ապարներն ունեն ամորֆ-կենսածին կառուցվածք և բարձր ռեակցիոն հատկություններ, որոնց հետևանքով ֆոսֆոր պարունակող տվյալ ապարները հեշտությամբ են մշակվում և հարստացվում: Ստացված կոնցենտրատն իր ագրոքիմիական հատկություններով (բույսերի կողմից P_2O_5 -ի կլանման բարձր տոկոսով) և լուծված երկաթի պարունակությամբ համապատասխանում է ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից ընդունված պահանջարկին և կարող է օգտագործվել որպես ֆոսֆորային պարարտանյութ (ղեկ.՝ ե.-հ.գ.դ. Թ.Ավագյան):

Մշակվել է գետնի կամայական հատվածում էկոլոգիական հոսքի որոշման մեթոդ՝ հիմնված Հայաստանի ձմեռային տասնօրյա նվազագույն հոսքի մոդուլի թվային քարտեզի վրա: Մեթոդը փորձարկվել է Աղստնի գետավազանի օրինակով (ղեկ.՝ ե.-հ.գ.թ. Արշ. Ավագյան):

Ա.Նազարովի անվ. երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտ

Կատարվել է սողանքային տեղամասերի ինժեներաերկրաֆիզիկական, ինժեներաերկրաբանական, հիդրոլոգիական և գեոդեզիական ռեժիմային դիտարկումների տվյալների վիճակագրական մշակում, կազմվել է Զաջուռի լեռնանցքի սողանքային տեղամասի 2D ֆիզիկաերկրաբանական մոդելը (ղեկ.՝ Ռ.Գասպարյան):

Նախագծվել, պատրաստվել և Մարմարիկի ջրամբարի պատվարի վրա տեղադրվել է սեյսմիկ անվտանգության «GYUMRI-001» համակարգը: Նախագծվել և պատրաստվել է փոքրածավալ, դյուրակիր տատանողական հարթակ՝ դաշտային պայմաններում աշխատելու համար (ղեկ.՝ Ա.Գասպարյան):

Հայագիտություն և հասարակական գիտություններ

Հնագիտության և ազգագրության ինստիտուտ

«Կիրառական ազգագրություն» թեմայի շրջանակներում (ղեկ.՝ պ.գ.թ. Հ.Խառատյան) իրականացվել է «Խոսելով միմյանց հետ» Հայոց ցեղասպանության մասին ցուցահանդեսի կազմակերպման գիտական խորհրդատվություն, թեմայի ղեկավարը մասնակցել է բուն ցուցահանդեսի ցուցադրության շուրջ ծավալված քննարկումներին Վրաստանում, Կիպրոսում, Գերմանիայում և Ֆրանսիայում: Ավարտել են «Կիրովաբադի հայերի ինքնապաշտպանությունը 1988 թ. նոյեմբեր-դեկտեմբերին» գրքի շարադրման աշխատանքները:

Մ.Քոթանյանի անվ. տնտեսագիտության ինստիտուտ

«Հարկման արտերկրյա փորձը և դրա կիրառման հնարավորությունները ՀՀ-ում» թեմայի շրջանակներում (ղեկ.՝ թղթ. անդ. Վ.Հարությունյան) հիմնավորվել է, որ ստվերային տնտեսական հարաբերությունների «մեղմացման» պայմաններում տնտեսության պետական կարգավորման լծակների գործադրման արդյունքում հնարավոր է կանխել առաջացման պատճառները և օբյեկտիվորեն գնահատել ստվերային տնտեսության սպառնալիքները՝ հասցնելով ՀՆԱ-ի 5-10%-ի (ըստ համաշխարհային ստանդարտի), ինչը կնպաստի բնակչության կենսամակարդակի բարձրացմանը և գործարար ակտիվության աշխուժացմանը:

2012 թ. ՀՀ կառավարությանն են ներկայացվել «Լեռնահանքային արդյունաբերության հանքահարստացման թափոնների և դրանց էկոլոգիական հետևանքների գնահատումը», «Բնական ցեոլիտների կիրառման հիմնախնդիրները» (ղեկ.՝ ե.-հ.գ.դ. Հ.Ավագյան) և «ՀՀ-ում ձևավորվելիք ապագա հասարակության էության, անվանումի և հիմնադրույթների պարզորոշման կիրառմանն ուղղված» (ղեկ.՝ տնտ.գ.դ. Բ.Եղիազարյան) գիտական թեմաների շրջանակներում ստացված եզրակացությունները և առաջարկությունները, որոնք օգտակար կարող են լինել ՀՀ-ում իրականացվող հակաձգնաժամային միջոցառումների և նորացվող տնտեսական քաղաքականության համատեքստում:

ԳԱԱ Փորձաքննությունների ազգային բյուրո

Իրականացվել են լուսանկարչական, գրաֆիկական և տեսանյութային տարբեր ձևատեսակների ֆայլերի վնասված, մասնատված հատվածների հայտնաբերման և վերականգնման աշխատանքներ, նոր մեթոդների ուսումնասիրություններ և տարբեր ծրագրային ապահովումների փորձարկումներ ու դրանց արդյունքների համադրումներ:

Իրականացված մի շարք կիրառական մշակումների արդյունքները ներդրվել են համապատասխան փորձագիտական ստորաբաժանումների գործնական աշխատանքներում, մասնավորապես՝ UNODC-ի կողմից անհատույց ստացվել է թմրամիջոցների և հոգեմետ նյութերի 38 համեմատական նմուշ, կազմվում են տվյալների շտեմարաններ:

Համալրվել են նաև պայթուցիկ նյութերի, կեղծ մետաղադրամների բաղադրությունների, մատնահետքերի տվյալների շտեմարանները:

Նոր օդորոշողական բաժանմունքում սկսվել է հոտերի շտեմարանի հավաքագրման գործընթացը, արդեն իսկ ստեղծվել է օժանդակի հոտերի շտեմարանը:

ԳԻՏԱԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՆԵՐ

Հաշվետու տարում անց է կացվել 2 ընդհանուր ժողով:

Ապրիլի 19-ի տարեկան ընդհանուր ժողովը բացել և ԳԱԱ 2011 թ. գիտական գործունեության արդյունքների մասին զեկուցմամբ հանդես է եկել ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռ.Մարտիրոսյանը: Ակադեմիայի 2011 թ. գիտակազմակերպական գործունեության արդյունքների մասին զեկուցել է ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղար, թղթակից անդամ Հ.Մաթևոսյանը:

ԳԱԱ թղթակից անդամ, Պատմության ինստիտուտի տնօրեն Ա.Մելքոնյանը հանդես է եկել «Հովսեփ Օրբելու գիտական և գիտակազմակերպական գործունեությունը» զեկուցմամբ:

Ժողովում հանձնվել են ԳԱԱ արտասահմանյան անդամների դիպլոմներ:

Ժողովը քննարկել և հավանություն է տվել ԳԱԱ 2011 թ. գործունեությանը:

Սեպտեմբերի 18-ի ընդլայնված ընդհանուր ժողովը նվիրվել է ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանի անվան միջազգային մրցանակի հանձնման արարողությանը: ԳԱԱ նախագահ Ռ.Մարտիրոսյանը բացման խոսքում նշել է, որ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի նախաձեռնությամբ հիմնված մրցանակի նպատակը Վ.Համբարձումյանի հիշատակը հավերժացնելն է, աշխարհին Հայաստանի գիտությունը ներկայացնելը և հանրապետությունում աստղաֆիզիկայի զարգացմանը նպաստելը: Միջազգային հանձնաժողովի որոշմամբ 2012 թ. մրցանակին արժանացել են Տարտուի աստղադիտարանի կողմից առաջադրված Էստոնիայի Գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Յան Էյնաստոն՝ թաքնված նյութի և տիեզերական ուստայնի հայտնաբերման մեջ հիմնարար ներդրումների համար, և ՌԳԱ թղթակից անդամ Իգոր Նովիկովը՝ ջերմ տիեզերքի մոդելի դիտողական հաստատման եղանակի առաջին ձևակերպման և քվադրանտների զանգվածների որոշման եղանակ առաջարկելու համար: Ժողովում ելույթ է ունեցել ՀՀ նախագահ Ս.Սարգսյանը: Նա նշել է, որ մրցանակը կոչված է հավերժացնելու գիտության ականավոր գործչի անունը՝ միավորելով տարբեր երկրներ ու ժողովուրդներ ներկայացնող գիտնականներին, շնորհակալություն է հայտնել բոլոր անհատներին և կազմակերպություններին՝ մրցանակաբաշխության կազմակերպմանն ու իրականացմանը նպաստելու համար:

ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու տարում անց է կացվել նախագահության 14 նիստ, քննարկվել է շուրջ 40 հարց:

Մարտի 14-ի ընդլայնված նիստում քննարկվել են ՀՀ ԳԱԱ-ի և «Միավորված ավիաշինական կորպորացիա» (ՄԱԿ) ԲԲԸ-ի համագործակցության հարցերը: «Ավիացիայի զարգացման համաշխարհային միտումները և ավիացիոն գիտության արդի խնդիրները» զեկուցմամբ հանդես է եկել «ՄԱԿ» ԲԲԸ նախագահ, ՌԳԱ ակադեմիկոս, ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ Մ.Պողոսյանը: ԳԱԱ նախագահ Ռ.Մարտիրոսյանը ներկայացրել է «ՄԱԿ» ԲԲԸ և ԳԱԱ համատեղ աշխատանքների ուղղությունները: Ստորագրվել է գիտատեխնիկական և ինովացիոն համագործակցության համաձայնագիր, որի նպատակը ՌԴ և ՀՀ համատեղ ավիաշինական համալիրի ձևավորումն է, մրցունակության բարձրացումն ու գիտատարատիրական ներուժի զարգացման խնդիրների լուծումը, ավիացիոն տեխնիկայի ձևավորման հեռանկարային ծրագրերի իրագործումը, մտավոր, արտադրական և ֆինանսական ռեսուրսների համախմբումը:

Նախագահության նիստերում լսվել և քննարկվել են ԳԱԱ Գառնիի երկրաֆիզիկական դիտարանի կարգավիճակի, «Найка и философия» միջազգային գիտահրապարակախոսական հանդեսի հրատարակման, ԳԱԱ Բյուրականի աստղադիտարանի ԶՏԱ-2,6 աստղադիտակի վերանորոգման և արդիականացման աշխատանքների կազմակերպման, ԳԱԱ համակարգի գիտական կազմակերպությունների աշխատակիցների պարգևատրման, ԳԱԱ հրատարակչության և տպարանի գործառույթների մասին հարցերը:

Նախագահությունը որոշում է ընդունել ՀՀ ԳԱԱ 70-ամյակի հանդիսությունների անցկացման վերաբերյալ և հաստատել է հանդիսավոր միջոցառումների կազմակերպման ակադեմիական հանձնաժողովի կազմը:

Նախագահությունը հաստատել է ԳԱԱ գիտական կազմակերպությունների նոր խմբագրմամբ կանոնադրությունները, ԳԱԱ «Գիտության աշխարհում» գիտահանրամատչելի հանդեսի խմբագրական կոլեգիայի նոր կազմը:

Նախագահության որոշմամբ ԳԱԱ պատվավոր դոկտորի կոչում է շնորհվել Գեորգի Տավարտկիլաձեին (ՌԴ) և Մարիտե Կոնտրիմայտեին (Լիտվա):

Նախագահությունը հաստատել է ԳԱԱ արտադրությունից կտրված և հեռակա ասպիրանտուրայի 2012 թ. ընդունելության արդյունքները:

Նախագահության նիստերում ընտրվել են ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի, Բյուրականի աստղադիտարանի, Տնտեսագիտության, Մեխանիկայի, Մոլեկուլային կենսաբանության, Ֆիզիկայի կիրառական պրոբլեմների, Երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության, Ֆիզիոլոգիայի, Կենսաքիմիայի, Գրականության և Լեզվի ինստիտուտների տնօրեններ:

Նախագահության նիստերում նշվել են հայ մեծահամբավ գիտնականների հոբելյանները:

ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՑԱՆՑ (ASNET-AM)

ՀԱՅԿԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԻԴ ԻՆՖՐԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ

2012 թ. Հայաստանի ակադեմիական գիտահետազոտական համակարգչային ցանցը (ASNET-AM) շարունակել է համաեվրոպական գիտահետազոտական GEANT ցանցի հետ կապի ապահովումը ԳԱԱ ինստիտուտների և պետական համալսարանների համար, համացանցի հետ կապի սպասարկումը:

Ցանցում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- ցանցի մոնիթորինգի համակարգին ավելացվել է Dude ծրագրային փաթեթը և ամբողջ համակարգը տեղադրվել է վիրտուալ մեքենաների վրա,

- օպտիկամանրաթելային մալուխների միջոցով միացվել են ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնը, Հայաստանի ազգային գրադարանը և ԳԱԱ երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության կենտրոնը (Գյումրի),

- ԳԱԱ երկրաբանության ինստիտուտի կապը հասցվել է 1 Գբ/վրկ,

- ԳԱԱ ԻԱՊԻ–Աշտարակ կապի թողունակությունն ավելացվել է մինչև 10Մբ/վրկ,

- ԳԱԱ տնտեսագիտության, լեզվի, գրականության ինստիտուտները և հանրագիտարանը միացվել են օպտիկամանրաթելային մալուխների միջոցով,

- ցանցի հանգույցներում տեղադրվել են MikroTik և GBIC սարքավորումներ,

- իրականացվել է լիարժեք IPv6 հաղորդակարգի կիրառում (IPv4/IPv6 Dual stack) DNS (Domain Name Service) ծառայության, պրոքսի (Proxy) ծառայության և Վեբ կայքերի (Web

Hosting) ծառայությունների համար,

- մշակվել և ներդրվել են էլեկտրոնային փոստի հակասփամային նոր եղանակներ, Վեր կայքերի անվտանգության մեթոդներ, DNS (Domain Name Service) համակարգի տարաբաշխված և բազմատեսքային տարբերակներ:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՊԵՐ ԵՎ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ

2012 թ. ընթացքում արտասահմանյան երկրներ գործուղման է մեկնել ԳԱԱ 500 գիտաշխատող, այդ թվում՝ գիտական միջոցառումների մասնակցել է 281, համատեղ աշխատանքներ է կատարել 158, բանակցություններ է վարել և կոնսուլտացիաներ անցկացրել 61 գիտաշխատող: Նույն նպատակով արտասահմանից ժամանել է 701 գիտնական, այդ թվում՝ գիտական միջոցառումների մասնակցելու՝ 337, համատեղ աշխատանքներ կատարելու՝ 201, բանակցություններ վարելու և կոնսուլտացիաներ անցկացնելու՝ 163:

2012 թ. փետրվարի 26-28-ը ԳԱԱ պատվիրակությունը նախագահ, ակադեմիկոս Ռ. Մարտիրոսյանի ղեկավարությամբ մեկնել է Կիև (Ուկրաինա)՝ մասնակցելու Ուկրաինայի Գիտությունների ակադեմիայի նախագահ Բ.Պատոնի պաշտոնավարման 50-ամյակին նվիրված հոբելյանական գիտաժողովին, իսկ 2012 թ. փետրվարի 28-ից մարտի 2-ը՝ Քիշնև (Մոլդովա)՝ մասնակցելու «Էկոլոգիական քիմիա-2012» 5-րդ միջազգային գիտաժողովին:

ԳԱԱ պատվիրակությունը նախագահ, ակադեմիկոս Ռ. Մարտիրոսյանի, ԳԱԱ նախագահության խորհրդական Վ.Բարխուդարյանի և ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Յու.Սուվարյանի մասնակցությամբ մայիսի 30-ից հունիսի 3-ը մեկնել է Դոնի Ռոստով (ՌԴ)՝ մասնակցելու «Հայկական գաղութները Հարավային Ռուսաստանում» միջազգային գիտաժողովին, որտեղ Վ.Բարխուդարյանը հանդես է եկել «Ռուսահայ գաղութների դերը հարավային Ռուսաստանի տնտեսական զարգացման մեջ (18-րդ դարի առաջին կես-19-րդ դարի երկրորդ կես)» զեկույցով, ստորագրվել է համագործակցության համաձայնագիր ԳԱԱ-ի և Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի (ՌԳԱ) հարավային մասնաճյուղի միջև:

2012 թ. հոկտեմբերի 9-11-ը Ռ. Մարտիրոսյանը մեկնել է Բոնն (Գերմանիա)՝ մասնակցելու «Եվրամիության, ասոցացված երկրների, Ռուսաստանի, Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների միջև գիտության, տեխնոլոգիաների և նորարարության ասպարեզում համագործակցությունը, դրանց ձեռքբերումների և հեռանկարների կոորդինացիա» գիտաժողովին:

2012 թ. հոկտեմբերի 29-ից նոյեմբերի 1-ը ԳԱԱ պատվիրակությունը նախագահ, ակադեմիկոս Ռ. Մարտիրոսյանի ղեկավարությամբ մեկնել է Վիլնյուս (Լիտվա), որտեղ ստորագրվել է միջակադեմիական համագործակցության համաձայնագիր ՀՀ ԳԱԱ-ի և ԼԳԱ-ի միջև:

ԳԱԱ փոխնախագահ, ակադեմիկոս Յու.Շուքուրյանը 2012 թ. հոկտեմբերի 11-14-ը գործուղվել է Մոսկվա՝ մասնակցելու ՌԳԱ իսկական անդամ, ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ Ա.Գոնչարի հուղարկավորությանը:

2012 թ. սեպտեմբերի 25-ից հոկտեմբերի 1-ը ԳԱԱ նախագահության խորհրդական ակ. Վ.Բարխուդարյանը մեկնել է Փարիզ (Ֆրանսիա)՝ մասնակցելու «Կովկասի քրիստոնյա ժողովուրդները և ինքնությունը» միջազգային գիտաժողովին, որտեղ հանդես է եկել «Արևելյան Եվրոպայի հայկական գաղութները և հայ ինքնությունը» զեկույցով:

ԳԱԱ բնական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակ. Վ.Հակոբյանը 2012 թ. ապրիլի 23-27-ը Մոսկվայում (ՌԴ) մասնակցել է «Մարդը և դեղը» թեմայով

19-րդ Ռուսական ազգային կոնգրեսին և հանդես եկել «Հիպոկիներգիայից հետո վերաադապտացիայի ժամանակ առնետների գլխուղեղում ԳԱՄԿ-Ա ռեցեպտորների ակտիվությունը» զեկույցով:

Շարունակվում է ԳԱԱ ինստիտուտների համագործակցությունն արտասահմանյան գիտնականների, ԱՊՀ երկրների, ՌԴ, Բելառուսի, Ուկրաինայի ակադեմիաների հետ: Համաձայն ՌԳԱ-ի հետ համագործակցության պայմանագրի՝ ԳԱԱ 2 հայ գիտնական այցելել են ՌԳԱ կենտրոններ և 2 ռուս գիտնական՝ ՀՀ ԳԱԱ ինստիտուտներ՝ վերապատրաստում անցնելու և համատեղ հետազոտություններ կատարելու նպատակով:

2012 թ. հայ-ռուսական միջկառավարական տնտեսական համագործակցության հանձնաժողովի աշխատանքների շրջանակներում ստորագրվել է 17 գիտական թեմաներով միջակադեմիական համագործակցության երկարատև ծրագիր, ձևավորվում են ծրագրի իրականացման միջոցառումները:

2012 թ. Բուսաբանության ինստիտուտը ՌԳԱ Բուսաբանության ինստիտուտի հետ համատեղ կատարել է մի շարք ուսումնասիրություններ, շարունակվել է համագործակցությունը Սանկտ-Պետերբուրգի Կոմարովի անվ. բուսաբանության ինստիտուտի, Բեռլինի բուսաբանական այգու և թանգարանի, Միսսուրիի (ԱՄՆ), Լեռնային Դաղստանի, ՌԴԳԱ Ն.Ցիցինի անվ. գլխավոր բուսաբանական այգիների, Թբիլիսիի բուսաբանական ինստիտուտի, Վիեննայի բնապատմական թանգարանի և Ֆրանկֆուրտ-Մայնի Սենկենբերգի անվ. գիտահետազոտական ինստիտուտի և թանգարանի հետ:

2012 թ. շարունակվել են Էկոլոգանոսֆերային հետազոտությունների կենտրոնում ստեղծված ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Կրթություն հանուն կայուն զարգացման» ամբիոնի աշխատանքները, իրականացվել է համատեղ ծրագիր Արցախի գիտական կենտրոնի հետ ստեղծված «Շրջակա միջավայրի երկրաքիմիայի» լաբորատորիայի հետ, շարունակվել են Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող «Գյուղատնտեսական ռեսուրսների կառավարում և մրցունակություն» ծրագրի սահմաններում իրականացվող ուսումնասիրությունները:

Հնագիտության և ազգագրության ինստիտուտը և Ֆրանսիայի գիտական հետազոտությունների ազգային կենտրոնը ստեղծել են միացյալ միջազգային լաբորատորիա՝ 09-ԼԻԱ-002 (CNRS-LIA): ԳԱԱ-ի և ՌԳԱ-ի միջև համատեղ իրականացվող ծրագրերի շրջանակում Մոսկվայում հրատարակվել է «Հայեր» գիրքը, որտեղ հանգամանորեն ներկայացված են հայոց ծագումնաբանության, էթնո-քաղաքական պատմության, տնտեսական գործունեության և զբաղմունքների, կենսապահովման, սոցիոնորմատիվ և մասնագիտական մշակույթին, տնտեսական և հասարակական կենցաղին, տոներին, ավանդություններին, կրոնին ու եկեղեցուն, սփյուռքի պատմությանն ու արդիականությանը վերաբերվող հետազոտությունների հիմնական և ամփոփ արդյունքները:

Գ.Դավթյանի անվ. հիդրոպոնիկայի պրոբլեմների ինստիտուտի կողմից Ռուս-հայկական ինովացիոն համագործակցության կենտրոնում ներկայացվել և քննարկվել է ՀՀ-ում և ԼՂՀ-ում թանկարժեք տեխնիկական մշակաբույս մեղրախոտի ներդրման առաջարկը:

Արվեստի ինստիտուտը, ՀՀ նախագահ Ս.Սարգսյանի հովանու ներքո իրականացվող երիտասարդ գիտնականների աջակցության ծրագրի շրջանակներում և Հայաստանի Երիտասարդական հիմնադրամի ֆինանսավորմամբ, 2012 թ. հոկտեմբերի 19-21-ը գումարել է Երիտասարդ հայ արվեստաբանների միջազգային եռօրյա գիտական 7-րդ նստաշրջանը՝ նվիրված Տ.Չուխաճյանի ծննդյան 175-ամյա հոբելյանին, որին մասնակցել են երիտասարդ արվեստաբաններ Արվեստի ինստիտուտից, ՀՀ գիտակրթամշակութային այլ օջախներից, Ռուսաստանի Դաշնությունից՝ Մոսկվայից ու Նովոսիբիրսկից, Իրանի Իսլամական Հանրապետությունից:

ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոնը 2012 թ. շարունակել է միջազգային համագործակցությունը ՌԴԳԱ Ա.Նեամեյանովի անվ. էլեմենտաօրգանական

միացությունների ինստիտուտի, Իրանի համալսարանի, Ֆրանսիայի գյուղատնտեսական ակադեմիայի, Բուլղարիայի միկրոբիոլոգիայի ինստիտուտի, Արցախի գիտական կենտրոնի լաբորատորիայի հետ: ՀԳԱԿԻ Մանրէների ավանդադրման կենտրոնը Մանրէաբանական ընկերությունների միջազգային միության (IUMS) լիիրավ, Եվրոպական Մանրէաբանական ընկերությունների դաշնության (FEMS), Մանրէների կուլտուրաների հավաքածուների համաշխարհային դաշնության (WFCC #803) անդամ է և շարունակում է համագործակցությունն ու համատեղ ծրագրերն այդ կառույցների հետ:

2012 թ. Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտափորձարարական կենտրոնը ռուս-հայկական համատեղ գիտափորձարարական կենտրոնում (ՌՀ ՀԳՓԿ) կատարել է ֆաունայի մի շարք ուսումնասիրություններ: Համաձայն 1996 թ. պայմանագրի՝ շարունակվել է համագործակցությունը ՌԴԳԱ Ա.Սևերցովի անվ. էկոլոգիայի և էվոլյուցիայի պրոբլեմների ինստիտուտի հետ:

Մ.Աբելյանի անվ. գրականության ինստիտուտը շարունակել է համագործակցությունը Մոսկվայի կենտրոնական «Խուդոժեստվեննայա Լիտերատուրա» հրատարակչության հետ (ՌԴ):

Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտը շարունակում է համագործակցությունը ՌԴ հարավային դաշնային, Վլադիմիրի պետական և Լեհաստանի Կրակով քաղաքի Յագելոնի համալսարանների հետ:

Մոլեկուլյար կենսաբանության ինստիտուտը շարունակում է միջազգային համագործակցությունները Սան-Ֆրանցիսկոյի «Կալիֆորնիա» համալսարանի և տեխնոլոգիայի ինստիտուտի, Պալացկու և Չիկագոյի համալսարանների, Պաստերի ինստիտուտի հետ:

2012 թ. Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտը (ՌՖԷԻ) շարունակել է 2011 թ. սեպտեմբերին եռակողմ պայմանագրի հիման վրա ստեղծված (ՌՖԷԻ, ԵՊՀ-ի ռադիոֆիզիկայի ֆակուլտետ և Ամերիկյան Ինտեգրա կազմակերպություն) համատեղ լաբորատորիայի աշխատանքները: Շարունակվում է նաև միջազգային համագործակցությունը Շտուտգարդի կոսմիկական հետազոտությունների ինստիտուտի (Գերմանիա), Լիցի համալսարանի (Անգլիա) հետ:

Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտը 2012 թ. համագործակցել է Տյումենի պետական համալսարանի և Հարավային ֆեդերալ համալսարանի սուպերկոմպյուտերների տեխնոլոգիաների հարավային հետազոտությունների և կրթության կենտրոնի (ՌԴ) հետ՝ համաձայն 2011 թ. կնքված համագործակցության պայմանագրերի:

Հաշվետու տարում ԳԱԱ իրականացրած միջոցառումներից կարելի է նշել.

- Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնը փետրվարի 27-29-ը Երևանում կազմակերպել է ԵՄ FP7 նախագծի մեկնարկային հանդիպում «ՀՀ ԳԱԱ Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնի ԵՄ հետ համագործակցության կարողությունների հզորացում. Հայաստանի ինտեգրում եվրոպական գիտահետազոտական տարածաշրջանին» խորագրով, որին մասնակցել է 4 արտերկրացի: Ապրիլի 1-4-ը Երևանում ARPEGEO հայ-շվեյցարական նախագծի շրջանակներում անց է կացվել «Շրջակա միջավայրի տվյալների փոխանակում, միջազգային չափանիշների ընդունում» ի նպաստ Հայաստանի գիտական համայնքի» աշխատանքային սեմինար, որին մասնակցել է 7 արտերկրացի:

- Մաթեմատիկայի ինստիտուտը սեպտեմբերին Երևանում կազմակերպել է «Մտոխաստիկ և անալիտիկ մեթոդները մաթեմատիկական ֆիզիկայում» և «Մտոխաստիկ և մասնական ածանցյալներով հավասարումների տեսության մեթոդները ֆինանսական մաթեմատիկայում» միջազգային գիտաժողովները, որոնց մասնակցել է 71 արտասահմանցի գիտնական:

- Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտը հոկտեմբերի 9-12-ը Աշտարակում կազմակերպել է «Լազերային ֆիզիկա-2012» միջազգային կոնֆերանսը, որին մասնակցել է

շուրջ 15 արտասահմանցի գիտնական:

- Նոյեմբերին Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտը ԻԱՊԻ, ԵՊՀ և Հայաստանի Մաթեմատիկական միության հետ համատեղ կազմակերպել է Ի.Զասլավսկու ծննդյան 80-ամյակին նվիրված միջազգային գիտաժողով «Մաթեմատիկական տրամաբանություն և կիրառություններ» թեմայով, որին մասնակցել է արտասահմանցի 7 գիտնական:

- Հնագիտության և ազգագրության ինստիտուտը հոկտեմբերին Երևանում և Ծաղկաձորում կազմակերպել է միջազգային երկու գիտաժողով՝ նվիրված հայկական էպոսին և Հ.Օրբելու ծննդյան 125-ամյակին՝ 34 արտերկրացիների մասնակցությամբ:

- Մեպտեմբերի 26-29-ը Երևանում Մոլեկուլյար կենսաբանության ինստիտուտը կազմակերպել է երիտասարդ գիտնականների միջազգային գիտաժողով «Մոլեկուլային և բջջային կենսաբանության զարգացման հեռանկարները-3» խորագրով, որին մասնակցել է 9 արտասահմանցի գիտնական:

- Հ.Բունիաթյանի անվ. կենսաքիմիայի ինստիտուտը հոկտեմբերի 8-9-ը Կենսաքիմիական միությունների եվրոպական ֆեդերացիայի (FEBS), Կենսաքիմիկոսների հայկական ասոցիացիայի և Երիտասարդ կենսաբանների ասոցիացիայի հետ համատեղ կազմակերպել է ինստիտուտին նվիրված «Երիտասարդ գիտնականների գիտաժողով»՝ 7 արտերկրացիների մասնակցությամբ:

- ԿՀԷԳԿ հիդրոէկոլոգիայի և ձկնաբանության ինստիտուտը Պապանինի անվ. ներքին ջրերի կենսաբանության ինստիտուտի հետ համատեղ հոկտեմբերի 4-8-ը Սևանա լճի շրջակայքում իրականացրել է ռուս-հայկական համատեղ գիտարշավ՝ 3 արտերկրացի գիտնականի մասնակցությամբ:

- Արևելագիտության ինստիտուտը Երևանում, Ծաղկաձորում և Ստեփանակերտում ՀՀ մշակույթի նախարարության, ԵՊՀ-ի, Արցախի պետական համալսարանի, ԳԱԱ Պատմության, Արվեստի, Հնագիտության և ազգագրության ինստիտուտների հետ համատեղ անց է կացրել 5 միջազգային գիտաժողով՝ «Իմամ Խոմեյնու գաղափարների և մտքերի ազդեցության քննարկումն Իրանում և աշխարհում», «Հայկազունիներ. առասպել և պատմություն», «Հայկական լեռնաշխարհի պատմամշակութային ժառանգությունը», «Հ.Օրբելու ծննդյան 125-ամյակը» և «Հայաստան-Իրան. 20 տարի համագործակցության ճանապարհով» թեմաներով, որոնց մասնակցել է շուրջ 45 արտերկրացի:

- Մեխանիկայի ինստիտուտը հոկտեմբերի 7-12-ը Ծաղկաձորում կազմակերպել է «Հոծ միջավայրի մեխանիկայի արդի խնդիրներ» խորագրով III միջազգային գիտաժողովը, որին մասնակցել է շուրջ 60 արտասահմանցի գիտնական:

- ՌՖԷԻ հոկտեմբերի 16-17-ը Երևանում անց է կացրել «Միկրոալիքային և տեռահերցային տեխնոլոգիաներ և անլար հաղորդակցություն» խորագրով միջազգային գիտաժողովը:

Միջազգային կապերի վարչությունն օժանդակել է ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնին՝ Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացիներ հանդիսացող ԳԱԱ 11 մագիստրանտների, 55 ասպիրանտների և ուսանողների 4 ընտանիքի անդամների և Լեհաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող 1 ասպիրանտի՝ ՀՀ-ում բնակվելու մեկ տարվա ժամանակավոր կացության կարգավիճակ ստանալու հետ կապված հարցերում:

Շարունակվել է ԳԱԱ-ի մասնակցությունը Եվրոպայի հարևանության քաղաքականության գործողության, Յոթերորդ շրջանակային (7ԾԾ), ՆԱՏՕ-ի անհատական գործընկերության գործողությունների, Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի (ISTC) և այլ միջպետական ու առանձին երկրների կողմից հայտարարված միջազգային ծրագրերին:

ԳԱԱ գիտական կազմակերպությունների դրամաշնորհներ

№	Կազմակերպությունը	Թեմայի անվանումը	Հիմնադրամի կամ կազմակերպության անվանումը	Դրամաշնորհի ժամկետը		Ֆինանսավորման ծավալը (\$, €, դր., ռուբ.)		Թեմայի ղեկավարը
				սկիզբ	ավարտ	ընդհանուր	2012 թ. համար	
1	Ա.Նալբանդյանի անվ. քիմիական ֆիզիկայի ինստիտուտ	Ջրածնի նկատմամբ մեծ ադսորբցիոն ունակություններով օժտված անցումային մետաղների համաձուլվածքների ստացում ԲԻՍ և «հիդրիդային ցիկլի» եղանակներով և միջուկային եղանակների կիրառումը համաձուլվածքների միկրոկառուցվածքի բնութագրման համար	Ատոմային էներգիայի միջազգային գործակալություն	2011-2012		4 000 €	2 000 €	Ս.Դոլուխանյան
2		Ակտիվ թթվածնի հիման վրա «Բիօքսիլ-1» ախտահանիչ միջոցի փորձնական արտադրության կազմակերպում	Բելառուսի ԳԱԱ Նոր նյութերի քիմիայի ինստիտուտ	2011-2013		13000000 դր.	6 500 000 դր.	Լ.Թավադյան
3	ՕԴՔ ԳՏԿ	Բարձր հակաուռուցքային ակտիվությամբ և ցածր թունայնությամբ օժտված հակաուռուցքային դեղամիջոցների և հակաուռուցքային միացությունների ցինկ-օքսիդային կոմպլեքսների մշակում	ՄԳՏԿ (ISTC) Նախագիծ A-1962	04.2012 - 03.2014		90 817 \$	35 176 \$	Է.Առաքելովա, Ս.Ղազարյան
4	ՄԿՈՒԿ	Մեթենոգլոբին-նիտրիտի հետ ազոտի օքսիդի փոխազդեցության մեխանիզմի ուսումնասիրություն	Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամ (ANSEF)	01.01.2012-31.12.2012		5 000 \$	5 000 \$	Ա.Հովհաննիսյան
5	ԵԳԻ	Գիտության և տեխնոլոգիայի ոլորտում Սևծովյան տարածաշրջանի երկրների համագործակցության ցանցի ծրագիր	INTAS միջազգային հիմնադրամ	2012-2014		6 930 €	3 500 €	Հ.Բաբայան
6		Երևան քաղաքի երկրաշարժի սցենար	Շվեյցարիայի սեյսմոլոգիական կենտրոն	2011-2013		40 000 €	15 244 €	Հ.Բաբայան
7	ՌՖԷԻ	Սպեկտրոմետր մաշկի քաղցկեղի ախտորոշման համակարգի համար	ՄԳՏԿ (ISTC)	2009-2012		280 000 \$	35 617 \$	Ս.Գիգոյան
8		Թափանցիկ հաղորդիչ նանոնյութեր արեգակնային տարրերի համար	ՄԳՏԿ (ISTC)	2009-2012		100 000 \$	4 991 \$	Ա.Կեչիյանց

9	ՖԿՊԻ	Ակուստիկական դաշտերով ակտիվացված էլեկտրական լիցքերի պլազմայի բնութագրերի դեկավարման և դիագնոստիկայի միջոցների մշակում մակածված ճառագայթման դեկավարվող պարամետրերով գազային լազերների բարձր էֆեկտիվության աշխատանքային միջավայրեր ստանալու համար	ГКН-БРФФИ-2011	2011-2013	8 000 000 դր.	4 000 000 դր.	Ա.Մկրտչյան
10		Ատամի ոսկրափուտի (կարիեսի) կանխարգելման և ատամի գերզգայունության նվազեցման նոր արդյունավետ միջոց	ԳՊԿ	2011-2012	8 500 000 դր.	4 250 000 դր.	Ա.Պետրոսյան
11	ՖՀԻ	ՀՀ ԳԱԱ Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտի ինտեգրումը Եվրոպական հետազոտական տարածք	FP-7, 295025	2011-2014	247 652 €	51 603 €	Ա.Պապոյան
12		Կոհերենտ օպտիկական սենսորներ բժշկական կիրառությունների համար	FP-7, 295025	2012-2016	30 400 €	2 780 €	Դ.Սարգսյան
13		Երկչափ և եռաչափ մնայուն հոլոգրաֆիկ ցանցերի ստեղծումը Բեսսելյան և սպեկլփնջերով պինդ և հեղուկ բյուրեղներում. կիրառությունը ֆոտոնիկ բյուրեղների համար	ՄԳՏԿ (ISTC), A-1517	2008-2012	220 000\$	14 000 \$	Ռ.Դրամիյան
14		Օպտիկական ինֆորմացիայի մշակումը լույսի և նյութի ադիաբատիկ փոխազդեցությունների հիման վրա	Volkswagen Foundation	2010-2013	67 000 €	21 400 €	Գ.Գրիգորյան
15		Ոչ-գծային մագնիսա-օպտիկական երևույթները սնամեջ մանրաթելերում պարփակված սառը ատոմներով	ԳՍՍՀ -CRDF	2012-2013	8 000 \$	8 000 \$	Ա.Գոգյան
16		Ֆերոէլեկտրական հիշողության տարրեր՝ հիմնված թափանցիկ ֆերոէլեկտրիկ հաղորդիչ օքսիդային մեզոկառուցվածքների վրա	Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամ (ANSEF)	2012	5 000 \$	5 000 \$	Տ.Ասլանյան
17		Տեղեկատվության մշակումը բազմամակարդակ ատոմային համակարգերում	Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամ (ANSEF)	2012	5 000 \$	5 000 \$	Է.Գազազյան

18		YAG:Er3+ բյուրեղի օպտիկական գրգռման արդյունավետության բարձրացումը 1.55 մկմ ալիքի երկարության վրա գեներացիայի համար	Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամ (ANSEF)	2012	5 000 \$	5 000 \$	Պ.Մուժիկյան
19		Բազմաֆունկցիոնալ Er2O3 մեկուսիչ և Er, Li- համալեգիրված ZnO կիսահաղորդչային թաղանթներ՝ տեսանելի ապ-կոնվերսիայի և Er-ի ֆոտոլյումինեսցենցիայի համար	Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամ (ANSEF)	2012	5 000 \$	5 000 \$	Ն.Աղամալյան
20		Մագնիսական մետաղածխածնային նանոկոմպոզիտների կիրառությունները: Ջուտ ածխածնային ֆերոմագնետիկների ստացում՝ նանոգրաֆիտների պրոտոններով և նեյտրոններով ճառագայթման միջոցով	МИЦН-ОИЯИ	2012	500 000 ռուբ.	500 000 ռուբ.	Տ.Խաչատրյան
21		Ռեգոնանսային միջավայրերում լույսի տարածման դեկավարումը	Region de Bourgogne (Ֆրանսիա)	2011-2014	16 500 €	5 500 €	Լ.Չախմախյան
22		Բիքրոմատիկ լազերային ճառագայթումով հարուցված կոհերենտ երևույթների հետազոտումը ռուբիդիումի ատոմական գոլորշում	Ֆրանսիայի դեսպանատուն	2011-2012	3 835 €	2 301 €	Ռ.Միրզոյան
23	Հնագիտության և ազգագրության ինստիտուտ	Յ. Օսեցկու վերապատրաստման կրթաթոշակ	Միջազգային «Վիզեգրադ» հիմնադրամ, Սլովակիա	2011-2013	5 972 €	2 977 €	Հ.Մարության
24		«Հայաստան. միգրացիա, առօրեականություն և տրանզիցիա»	Կովկասի սկադեմիական շվեյցարական ցանց	2011-2013	35 594 CHF	17 763 CHF	Ա.Թադևոսյան
25		«Առօրեական ազգայնականությունը և էթնիկությունը Հայաստանում»	Կովկասի սկադեմիական շվեյցարական ցանց	2012-2014	39 930 CHF	10 183 CHF	Մ.Գաբրիելյան
26	Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Երկրաբանական գիտությունների ինստիտուտ	Մարդ - շրջակա միջավայր փոխհարաբերությունը լեռնային գոտում, Հայաստանում	ՀՀ ԿԳՆ ԳՊԿ Ֆրանսիայի գիտական հետազոտությունների ազգային կենտրոն	2012	8 306 900 դր.	8 306 900 դր.	Պ.Ավետիսյան, Ա.Կարախանյան

27	Մեխանիկայի ինստիտուտ	Օդանավերի ընդլայն- ված ցանցի տեսական և փորձարարական աերո- ապահովաառաձգական մոդելավորում	Միջազգային հե- տազոտություննե- րի աշխատակազ- մի փոխանակման ծրագիր (IRSES), Մարի Կյուրիի հիմնադրամ	01.01.2012- 31.12.2014	36 100 €	11 400 €	Գ.Բաղդասար- յան
28	Էկոլոգանո- ոսֆերային հետազո- տություն- ների կենտ- րոն	Հայաստանում Էկոլո- գիական տվյալների մշակման ազգային տա- րաբաշխված միջավայ- րի ստեղծում և կիրա- ռում	Շվեյցարիայի ազ- գային գիտական հիմնադրամ	2011-2013	48 400 €	17 500 €	Շ.Ասմարյան
29		ՀՀ ԳԱԱ Էկոլոգանոոս- ֆերային հետազոտությ- ությունների կենտրոնի Եվրամիության հետ համագործակցության կարողությունների հզո- րացում. Հայաստանի ինտեգրում Եվրոպա- կան գիտահետազոտա- կան տարածաշրջանին	Եվրամիության 7-րդ շրջանակային ծրագիր (EU FP7)	2011-2014	133 816 98 €	41 623 €	Շ.Ասմարյան
30		Ժամանակակից մեթոդ- ների կիրառում՝ Երե- վանյան լճի ջրերում ցիանոբակտերի և նրանց տոքսինների հե- տազոտման համար	Շվեյցարիայի ազ- գային գիտական հիմնադրամ	2012	11 300 CHF	11 300 CHF	Ա.Մինասյան
31	Հայկենսա- տեխնոլոգիա ԳԱԿ ՊՈԱԿ	«Պոտենցիալ կենսաբա- նորեն ակտիվ հետերո- ցիկլ պարունակող ա- ամինաթթուների և պե- պտիդների սինթեզ: Դրանց հակաբակտե- րիալ, հակավիրուսային և հակաուռուցքային հատկությունների հե- տազոտություն»	ՄԳՏԿ (ISTC)	2009-2012	527654 \$	62 693 \$	Ա.Սաղյան
32		«Բակտերիցիդ հատկու- թյուններով օժտված բնական կենսաբանա- կան նյութերը (պեպ- տիդները) տարբեր պա- թոգենների դեմ»	ՄԳՏԿ (ISTC)	2010-2012	290000 \$	30 000 \$	Ֆ.Տիսրունի
33		«Ազոտ ֆիքսող միկրո- օրգանիզմների և ձևա- փոխված ցեուլիտների հիման վրա Էկոլոգիա- պես ապահով համալիր կենսաբանական պա- րարտանյութի արտա- դրման նոր տեխնոլո- գիայի զարգացում»	ՄԳՏԿ (ISTC)	2010-2012	227 900\$	92 630 \$	Գ.Ավետիսովա

34		«Կաթի օլիգոսախարիդների վրա ընտրողական աճող պրոբիոտիկների անջատում և բնութագրում»	ՄԳՏԿ (ISTC)	2012-2014	115 000 \$	63 181 \$	Վ.Գոգինյան
35		Գիտական սեմինար՝ «Կենսատեխնոլոգիական զարգացումների ժամանակակից վիճակը և դրանց առևտրայնացման ուղիները»	ՄԳՏԿ (ISTC)	2012	5 139 \$	5 139 \$	Վ.Գոգինյան
36		«Միքայելի և հետերո Դիլս-Ալդերի ռեակցիաների ասիմետրիկ անիոնամետաղահամալիր կատալիզի մեխանիզմի օրինաչափությունների հետազոտություն»	РФФИ	2012	200 000 ռուբ.	200 000 ռուբ.	Ա.Մկրտչյան
37	Հ.Բունիաթյանի անվ. կենսաքիմիայի ինստիտուտ	Նոր ջրալույծ պորֆիրինների հիման վրա մոլեկուլյար զոնդերը, սպիտակուցների և նուկլեաթիդների հետ յուրահատուկ համագործակցությունների և ֆոտո-ֆիզիկական հատկությունների հետազոտությունները օպտիկական սպեկտրոսկոպիայի և մոլեկուլյար դոկինգի մեթոդներով	Բելառուսի հետ համատեղ- 11PB-016	2011-2013	8 000 000 դր.	4 000 000 դր.	Գ.Գյուլսանդանյան
38		Մրտամկանի ինֆարկտը, այն հարուցող ռեպերֆուզիան և բուժումը բնական ակտիվ պեպտիդներով	ՀՀ գիտության պետական կոմիտե, 15%՝ Գ. Ծառուկյան հիմնադրամ	2011-2012	15 000 000 դր.	10250000 դր.	Ա.Գևորգյան
39		Քսանտին օքսիդազի խթանիչները կարող են նպաստել ուղեղի բջիջների զարգացմանը և աճին այն դեպքում, երբ արգելակիչները կարող են կանխել ազատ ռադիկալների գոյացումը, ինչը վատթարացնում է հետինսուլտային վնասումները	Biochem/2381 ANSEF	2012	5 000 \$	5 000 \$	Կ.Դանիելյան
40		Դիպեպտիդիլ պեպտիդազ IV-ի ազդեցությունը ամիլոիդ պեպտիդների ֆիբրիլագոյացման վրա	Biochem/2381 ANSEF	2012	5 000 \$	5 000 \$	Ս.Շարոյան
41		Քաղցկեղի դեմ Հայկական բարձրավանդակի բույսերի կիրառման հետազոտություններ բջջային կուլտուրաներում	Travel Grant	2012	750 \$	750 \$	Ն.Մովսիսյան

42		Պրոբիոտիկների ազդեցությունը ընտանեկան միջերկրածովային տենդով հիվանդների աղիների միկրոֆլորայի կազմի վրա	ԱՄՆ Էներգետիկայի նախարարության միջուկային անվտանգության բաժանմունք A-1980	2011-2012	120 000 \$	10 000 \$	Ա.Փեփոյան
43		Էկոլոգիապես մաքուր կոմպլեքս կենսապարարտանյութի ստացման նոր տեխնոլոգիայի մշակումն ազոտկապող միկրոօրգանիզմների և ձևափոխված ցելլիտների հիման վրա	ՄՊՏԿ (ISTC) A-1868	2010-2012	225 000\$	95 000 \$	Հ.Սարգսյան
44		Հեղուկ բյուրեղային բեկեռացման դիֆրակցիոն ցանցի վրա հիմնված սպեկտրոպլարիմետրի ինդուստրիալ նախատիպը	ՄՊՏԿ (ISTC) A-1484	2011 - 2013	125 000\$	5 000 \$	Հ.Մարգարյան
45		Նյարդագեներգիա, նյարդապրոտեկցիա, Պարկինսոնի հիվանդություն	IBRO Short term in Europe Fellowship. IBDML	2012	2 500 \$	2 500 \$	Կ.Դանիելյան
46		Քսանտին դեհիդրոգենազի ինհիբիցիան խթանում է մարդու ուղեղից անջատված բջիջների աճը և զարգացումը. «NEURONUS IBRO-IRUN գիտաժողով» Կրակով, Լեհաստան	NFSAT Travel Grant	2012	140 000 դր.	140 000 դր.	Կ.Դանիելյան
47		«Մոլեկուլային կենսաբանության ուսուցման ինովացիաները», Գոնվիլի և Կայուսի քոլեջ, Քեմբրիջ, Անգլիա	FEBS, NFSAT	2012	303 000 դր.	303 000 դր.	Ա.Գյուլիսան-դանյան, Լ.Գյուլիսան-դանյան
48		«Photonics West» միջազգային սիմպոզիում Սան Ֆրանցիսկո, ԱՄՆ	11PB-016, NFSAT	2012	600 000 դր.	600 000 դր.	Գ.Գյուլիսան-դանյան
49		Գիտաժողով ղոկտորական աշխատանք կատարողների համար, Չարլզ Դարվինի տուն, Լոնդոն, Անգլիա	FEBS	2012	303 000 դր.	303 000 դր.	Ա.Գյուլիսան-դանյան, Լ.Գյուլիսան-դանյան
50		Համագործակցության փորձարարական դրամաշնորհ, Գյոտինգենի Սրտի ուսումնասիրության կենտրոն, սրտաբանության բաժանմունք, Գյոտինգենի բժշկական կենտրոնի համալսարան, Գերմանիա	FEBS	2012	5 043 €	5 043 €	Լ.Երանոսյան

51		Փարիզ-7-Դիդերո համալսարան, Փարիզ, Ֆրանսիա, համագործակցություն	Փարիզ-7-Դիդերո համալսարան	2012	4500 €	4500 €	Ա.Դուրգարյան
52		Լյարդի ուսումնասիրության Եվրոպական ասոցիացիայի հիմնական դպրոց, հեպատոցիտների վնասում և լյարդի մետաբոլիզմ, Տրիեստ, Իտալիա	EASL Travel Grant	2012	950 €	950 €	Գ.Կարապետյան
53		Կենսաքիմիայի և մոլեկուլաբջջային կենսաբանության Միջազգային ամառային դպրոց, Շանհայ, Չինաստան	FEBS Travel Grant	2012	600 €	600 €	Գ.Կարապետյան
54	Բուսաբանության ինստիտուտ	Անդրկովկասի բույսերի բազմազանության պահպանման զարգացման մեթոդները	Բեռլինի բուսաբանական թանգարան և այգի	2011-2014	-	14 050 €	Մ.Աղաբաբյան
55		Հազարամյակի սերմարի բանկ (MSBP)	Քյոլն Թագավորական այգիներ (Լոնդոն)	2011-2014	-	20 617 €	Ա.Ներսիսյան
56		Գիծու տարբեր տեսակների սերմերի ֆիլոգենիայի ուսումնասիրում	Ֆրանսիայի ագրոնոմիական հետազոտությունների ազգային ինստիտուտ (INRA)	2012	2 762 €	2 762 €	Ժ.Վարդանյան
57	Հիդրոէկոլոգիայի և ձկնաբանության ինստիտուտ	Թիվ NS-zoo-2744, Սևանա լճի ջրածածկ տարածքներում ձկնափորված կենսացենոզների հետազոտություններ	Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամ (ANSEF)	2012	5 000 \$	5 000 \$	Մ.Դավաթյան
58		Գեղարքունի և ամառային իշխանի ձվադրավայրերի արդի վիճակը	ՎիվաՍեյլ USU, FRWC	2012	1000 000 դր.	1 000 000 դր.	Վ.Ասատրյան
59		Տարբեր բնակլիմայական գոտիների ջրամբարներ ներմուծված արծաթափայլ ծածանի պոպուլյացիայի վիճակի և նրանց արդյունադրական պաշարների արդյունավետ օգտագործման ուղիների գնահատում	ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե և Հիմնարար հետազոտությունների բելառուսական հանրապետական հիմնադրամ	2011-2013	8 000000 դր.	4 000 000 դր.	Բ.Գաբրիելյան
60	Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ	«Նոր ճառագայթապաշտպանիչ և հակաուռուցքային միացությունների՝ մետաղ պարունակող օրգանական համալիրների մշակում» (A-1764)	ՄԳՏԿ (ISTC)	2010-2013	191 000 \$	70 053 9 \$	Ա.Բոյաջյան

61		«Վարակիչ հիվանդությունների և ահաբեկչական գրոհների կենսաբանական հսկողության մոլեկուլագենետիկական մոնիթորինգի եղանակների մշակում» (A-1662)	ՄԳՏԿ (ISTC)	2009-2013	300 000 \$	75 000 \$	Մ.Հարությունովա
62		«Կենտրոնական նյարդային համակարգում բորբոքային գործընթացների մոդուլացիա՝ մոլեկուլային պաթոմեխանիզմներից դեպի կլինիկական կիրառում» # G68435345	USDS	2011-2012	25 000 \$	13 800 \$	Ա.Խոյեցյան
63		«HLA տիրույթի գենետիկական բազմազանությունը շիզոֆրենիայի ժամանակ» (NS-molbio-2645)	Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամ (ANSEF)	2012	5 000 \$	5 000 \$	Կ.Մայիլյան
64		«Թույլ արտահայտված բորբոքային պրոցեսների դերը հետտրավմատիկ սթրեսային խանգարման պաթոգենեզում» (NS-molbio-2829)	Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամ (ANSEF)	2012	5 000 \$	5 000 \$	Գ.Մկրտչյան
65		«Ցածր տոքսիկությամբ և բարձր հակաքաղցկեղային ակտիվությամբ օժտված ցինկի օքսիդի և հակաուռուցքային միացությունների համալիրներ» (A-1962)	ՄԳՏԿ (ISTC)	2012-2014	90 344 \$	43 172 \$	Ֆ.Արսենյան
66		«Անոմալ իմունային համալիրների ազդեցությունը մոնոնուկլեար բջիջների վրա շիզոֆրենիայի ժամանակ»	ԳԱՏԱՀ ՀՀ ԳԱԱ	2011-2012	4 880 \$	2 185 \$	Ա.Չավուշյան
67		Ենթակառուցվածքային դրամաշնորհ # MEPS-12-03	ԳԱՏԱՀ AIWA	2012	1 000 \$	1 000 \$	Ռ.Զաքարյան
68		«Էքսպրես թեստ համակարգ գերհոգնածության համախտանիշի մոլեկուլային ախտորոշման համար» # 98-11	CRDF ՀՀ Էկոնոմ. նախ.	2012-2013	14 000 \$	1 000 \$	Ա.Առաքելյան
69	Հիդրոպոնիկայի պրոբլեմների ինստիտուտ	Ռադիոէկոլոգիական լարվածության գոտիներում հողերի վերականգնումը ջուր կլանող պոլիմերների և հիդրոպոնիկ կենսատեխնոլոգիայի կիրառմամբ	ՄԳՏԿ (ISTC)	2009-2012	200 000\$	15 878 \$	Ա.Թադևոսյան

70		Հանապարհորդական դրամաշնորհ «Հառագայթային հետազոտությունների եվրոպական միության 39-րդ տարեկան գիտաժողովին» (Իտալիա) մասնակցության համար	ՄԳՏԿ (ISTC)	2012	2 540 \$	2 540 \$	Ա.Թադևոսյան
71		Հանապարհորդական դրամաշնորհ ՆԱՏՕ - ի «Կենսաակտիվ միացություններն ընդդեմ ճառագայթային, քիմիական և կենսաբանական հետևանքների» առաջատար հետազոտությունների սեմինարին (Յալթա, Ուկրաինա) մասնակցության և զեկուցման համար	ՆԱՏՕ. գիտությունը խաղաղության և անվտանգության համար	2012	1 300 \$	1 300 \$	Ա.Թադևոսյան
72		Հանապարհորդական դրամաշնորհ «ՄԳՏԿ նախագծերի արդյունքները Ֆուկուսիմայի վթարից հետո շրջակա միջավայրի վերականգնման աջակցման համար» սեմինարին մասնակցության և զեկուցման համար (Մոսկվա, ՌԴ)	ՄԳՏԿ (ISTC)	2012	1 500 \$	1 500 \$	Ա.Թադևոսյան
73		Հանապարհորդական դրամաշնորհ ՄԳՏԿ ՈՒԳՏԿ տեխնիկական աշխատանքային խմբի «Ֆուկուսիմայի շրջակա տարածքում երկրաժամկետ մոնիթորինգի և վերականգնման համար շրջակա միջավայրի գնահատման» նիստին մասնակցության և զեկուցման համար (Տոկիո, Հապոնիա)	ՄԳՏԿ (ISTC)	2012	2 000 \$	2 000 \$	Ա.Թադևոսյան
74		Հանապարհորդական դրամաշնորհ «Հառագայթային հետազոտությունների եվրոպական միության 39-րդ տարեկան գիտաժողովին» (Իտալիա) մասնակցության և զեկուցման համար	Եվրոպական ռադիացիոն ուսումնասիրությունների ասոցիացիա, ԳԱՏԱՀ		500 €	500 €	Ա.Ասատրյան

75	ԻԱՊԻ	Հարավ-արևելյան Եվրոպայի գիտական հանրության համար բարձր արտադրողականությամբ հաշվողական համակարգեր	EU FP7 HP SEE	2010-2012	90 000 €	34 624 €	Վ.Սահակյան
76		Եվրոպական գիտական հանրության համար ինտեգրված կայուն համաեվրոպական ինֆրակառուցվածք	EU FP7 EGIInSPIRE	2010-2014	20 000 €	1 773 €	Վ.Սահակյան
77		Շրջակա միջավայրի տվյալների համար հայկական տարաբաշխված հաշվումների հնարավորությունների մշակում	Շվեյցարիա ARPGERO	2011-2013	60 000 CHF	16 266 CHF	Հ.Ասցատրյան
78		ISOC Ակադեմիական համակարգչային ցանցի վերազինում IPv6 արձանագրության պատրաստվածության համար	Internet Society	2011-2013	10 000 \$	10 000 \$	Վ.Սահակյան
79		ISOC-AM Ակադեմիական համակարգչային ցանցի վերազինում IPv6 արձանագրության պատրաստվածության համար	Internet Society	2011-2013	1 000 \$	1 000 \$	Վ.Սահակյան
80		Հայաստանի ինտեգրումը եվրոպական գիտահետազոտական տարածք, տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաներ	EU FP7 INARMERA	2012-2014	256 800€	65 000 €	Յու.Շուքուրյան
81		Բարձր մակարդակի S2S երկխոսություն՝ ԵՄ-ԱԵԿԱ համագործակցության ամրացման համար	EU FP7 PICTURE	2012-2014	35 952 €	16 777 €	Լ.Ասլանյան
	2012	345 024 €	43 652 900 դր.	755 105,9 \$	700 000 ռուբ.	55 512 CHF	
	Ընդամենը՝	1 057 712 98 €	71 152 900 դր.	3 132 324 \$	700 000 ռուբ.	146 824 CHF	

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԲԱԺԻՆ

Հաշվետու ժամանակահատվածում բաժինը շարունակել է աշխատանքներն իր հիմնական գործառնությունների՝ միջազգային գիտահետազոտական դրամաշնորհային ծրագրերին ԳԱԱ ինստիտուտների և անհատ գիտնականների առավել ակտիվ մասնակցության խթանման ուղղությամբ:

Տարվա ընթացքում գրանցված շահառուներին էլեկտրոնային ցանցով տրամադրվել է մոտ 200 տեղեկատվություն եվրոպական և այլ միջազգային դրամաշնորհային գիտահետազոտական ծրագրերի, հայտարարված մրցույթների, իրականացվող նախագծերի, կայանա-

լիք միջոցառումների մասին: Տարածվել է նաև տարբեր աղբյուրներից (7ՇԾ կոնտակտային կազմակերպությունների եվրոպական ցանցեր, ԳԱԱ մասնակցությամբ միջազգային նախագծեր) ստացված գործընկերների փնտրման մոտ 80 տեղեկատվական թերթիկ՝ ուղղված օժանդակելու գիտնականներին՝ գտնել գործընկերներ համատեղ նախագծերի համար: Շրջանառվող տեղեկատվությունը տեղադրվում է և հասանելի է նաև 7ՇԾ Ազգային տեղեկատվական ցանցի կայքում (<http://nip.sci.am>): Տարվա ընթացքում տրամադրվել է մոտ 90 անհատական խորհրդատվություն՝ միջազգային դրամաշնորհային ծրագրերի մասնակցությանն առնչվող տարբեր հարցերի շուրջ:

ԳԱԱ-ի համակարգում շարունակում է գործել Եվրոպական Միության հետազոտությունների և զարգացման 7-րդ շրջանակային ծրագրի (ԵՄ 7ՇԾ) կոնտակտային անձանց ցանցը, որի աշխատանքները համակարգում է ԳԱԱ փոխնախագահ, ակ. Յու.Շուքուրյանը: Հանդիսանալով ԵՄ 7ՇԾ-ի կոնտակտային կազմակերպություն ծրագրի մի քանի թեմատիկ ուղղությունների գծով՝ բաժնի, ինչպես նաև «Առողջություն» ուղղության կոնտակտային կազմակերպություն հանդիսացող ԳԱԱ Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի (պատասխանատու՝ Ա.Բոյաջյան) և «Տեղեկատվական տեխնոլոգիաներ» ուղղության կոնտակտային կազմակերպություն հանդիսացող ԳԱԱ Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի (պատասխանատու՝ Լ.Ասլանյան) գործունեության ուղղություններից է եղել ԵՄ 7ՇԾ-ի մասին ընդհանուր իրազեկության բարձրացման և առավել ակտիվ մասնակցության խթանման գործընթացը: Այս առումով օժանդակություն է ցուցաբերվել ինչպես ակադեմիական համակարգի, այնպես էլ ՀՀ այլ գերատեսչական ինստիտուտներ, համալսարաններ, ՓՄՁ-ներ և գիտական հետազոտությամբ զբաղվող մասնավոր կազմակերպություններ ներկայացնող գիտնականներին:

ԳԱԱ նախագահության մասնակցությամբ միջազգային նախագծերի շրջանակներում ԳԱԱ ու ՀՀ այլ հաստատություններ ներկայացնող 30 գիտնական և պաշտոնյա տարվա ընթացքում մասնակցել են Գերմանիայում, Բելգիայում, Ռումինիայում, Ուկրաինայում, Վրաստանում և Մոլդովայում անցկացված միջազգային գիտաժողովներին և 7ՇԾ-ին նվիրված միջոցառումներին՝ նախագծերի շրջանակներում ստացված դրամաշնորհների կամ հրավիրող կողմի ֆինանսավորմամբ:

Տարվա ընթացքում 7ՇԾ-ի տարբեր մրցույթներին, ըստ նախնական տվյալների, ներկայացվել են ՀՀ կազմակերպությունների մասնակցությամբ մոտ 40 նախագծերի առաջարկներ: Ըստ ունեցած տեղեկությունների, ԳԱԱ համակարգի ինստիտուտներից առաջարկներում առավել ակտիվ մասնակցություն են ունեցել Ֆիզիկական հետազոտությունների, Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտները և Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնը: Միջազգային համագործակցության և գիտություն-արտադրություն կապի խթանման ուղղվածություն ունեցող նախագծերի առաջարկներին մասնակցել են նաև ԳԱԱ Նախագահությունը և Գիտության զարգացման հիմնադրամը:

Փետրվարին ԳԱԱ-ում անց է կացվել FP7 INCO ERA-WIDE մրցույթի շրջանակներում 2011 թ. հավանության արժանացած ԳԱԱ Ֆիզիկական հետազոտությունների, Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտների և Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնի համակարգմամբ երեք նախագծերի մեկնարկին նվիրված միջոցառում: Ելույթներում նշվել է նմանատիպ նախագծերի կարևորությունը՝ ԵՄ-Հայաստան ավելի սերտ գիտական համագործակցության հաստատման և համաեվրոպական ծրագրին Հայաստանի հետագա ասոցացման համար:

ԵՄ անդամ երկրների հետ գիտական համագործակցության զարգացման և համաֆինանսավորման սկզբունքով բազմակողմ համատեղ ծրագրերի իրականացման հարցերին էին նվիրված հոկտեմբերին Բոննում (Գերմանիա) և դեկտեմբերին Բուխարեստում (Ռու-

մինիա) կայացած գիտաժողովները, որոնց մասնակցել են ԳԱԱ պատվիրակությունները: Հանդիպումների ընթացքում քննարկվել են նման ծրագրերում ԳԱԱ և Գիտության զարգացման հիմնադրամի մասնակցության հնարավորությունները:

«ԵՄ և Կենտրոնական Ասիայի ու Հարավային Կովկասի երկրների գիտատեխնոլոգիական համագործակցության ցանց» 7ՇԾ-ի նախագծի շրջանակներում նախաձեռնվել էր իրականացնել ֆիզիկայի և նանոտեխնոլոգիաների ոլորտում Հայաստանի, Բելառուսի, Ղազախստանի և Բուլղարիայի ընտրված գիտահետազոտական ինստիտուտների համեմատական ուսումնասիրություն՝ գնահատելու համար առկա իրավիճակը և նախանշելու առաջարկներ հետագա զարգացման հնարավոր ուղղությունների վերաբերյալ: Տվյալ նախաձեռնությանը Հայաստանից մասնակցել է ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտը: Որպես փորձագետներ հրավիրվել էին ոլորտի հայտնի գիտնականներ Ավստրիայից և Մեծ Բրիտանիայից: Ուսումնասիրության արդյունքում կազմված փաստաթղթում տրվել են մասնակից ինստիտուտների իրավիճակի, ուժեղ/թույլ կողմերի իրատեսական համեմատական վերլուծություն, արվել են հետագա կայուն զարգացման համար անհրաժեշտ առաջարկներ՝ ելնելով եվրոպական նմանատիպ գիտական կենտրոնների փորձից:

7ՇԾ-ի «ԵՄ և Կենտրոնական Ասիայի ու Հարավային Կովկասի երկրների գիտատեխնոլոգիական համագործակցության ցանց» նախագծի շրջանակներում 2012 թ. ևս հայտարարվել է գործուղման դրամաշնորհների մրցույթ՝ մարտին Դյուսելդորֆում (Գերմանիա) 7ՇԾ-ի Սննդամթերք, գյուղատնտեսություն, ձկնաբանություն և կենսատեխնոլոգիա թեմատիկ ուղղությունների ոլորտում «Գաղափարների տոնավաճառ» (Networking Event) միջոցառմանը մասնակցելու համար, որը կազմակերպվել էր Եվրահանձնաժողովի կողմից: Ստացված 6 հայտերից Եվրոպական փորձագետներն ընտրել են 4-ը, ինչը հնարավորություն է տվել չորս գիտնականի մասնակցել այս միջոցառմանը, որի հիմնական նպատակն էր հնարավորություն տալ մասնակիցներին ներկայացնել նախագծերի առաջարկներ և գտնել գործընկերներ՝ 7ՇԾ-ի մրցույթներին դրանք համատեղ ներկայացնելու համար:

ԳԱԱ ներկայացմամբ Տ.Արզումանյանը մասնակցել է ԱՄՆ Առևտրի դեպարտամենտի Առևտրային իրավունքի զարգացման ծրագրի կողմից կազմակերպված նորարարական քաղաքականության և տեխնոլոգիաների առևտրայնացման ոլորտում կարողությունների զարգացման սեմինարների շարքին: Ծրագիրը ներառում էր այցելություններ ԱՄՆ մի շարք համալսարաններ և տեխնոլոգիաների առևտրայնացմանն աջակցող կազմակերպություններ՝ տվյալ ոլորտում ԱՄՆ փորձին ծանոթանալու և հնարավոր համագործակցություն հաստատելու նպատակով:

Տարվա ընթացքում բաժնի աշխատակիցները մասնակցել են և զեկուցումներով հանդես եկել մի շարք միջազգային միջոցառումների և դրամաշնորհային ծրագրերին նվիրված թրեյնինգների, որոնք կազմակերպվել են Բելգիայում, Կիպրոսում, Իտալիայում, Ավստրիայում, Շվեդիայում, Հունաստանում և Մալթայում: Մասնակցությունը նշված միջոցառումներին նպաստել է արտասահմանյան հնարավոր գործընկերների հետ նոր կապերի հաստատմանը և առկա համագործակցության խորացմանը:

ՍՓՅՈՒՌՔԻ ԲԱԺԻՆ

Բաժինն արտասահմանյան անդամների հետ պահպանելով անմիջական կապ՝ համագործակցության նրանց առաջարկների մասին իրազեկել է ԳԱԱ կազմակերպություններին, արտասահմանյան անդամներին՝ ԳԱԱ կողմից կազմակերպվող միջոցառումների մասին: Պարբերաբար թարմացվում են ինտերնետ կայքում ներկայացված նրանց անհատական

տվյալները, կազմվում է նորընտիր արտասահմանյան անդամների անհատական տվյալների թղթապանակ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Արտասահմանյան անդամների կենսագրությունը և գիտական գործունեությունը շարունակաբար ներկայացվում է ԳԱԱ «Գիտություն» թերթում:

Ստորև բերվում է ԳԱԱ արտասահմանյան անդամների թվաքանակը՝ ըստ գիտության ուղղությունների և երկրների:

N	Երկիր	Մաթեմատիկական և տեխնիկական գիտություններ		Ֆիզիկական և աստղաֆիզիկական		Բնական գիտություններ		Քիմիա և երկրի մասին գիտություններ		Հայագիտություն և հասարակական գիտություններ		Ընդամենը		Ընդամենը
		մինչև 2011թ.	2011թ.	մինչև 2011թ.	2011թ.	մինչև 2011թ.	2011թ.	մինչև 2011թ.	2011թ.	մինչև 2011թ.	2011թ.	մինչև 2011թ.	2011թ.	
1	ՌԴ	8	3	8	1	7	2	12	1	8	1	43	8	51
2	ԱՄՆ	9	1	6	1	8	1	5		5	2	33	5	38
3	Ֆրանսիա	1		4	1	2		1	1	6	1	14	3	17
4	Իտալիա									2		2		2
5	Գերմանիա			1	1	1						2	1	3
6	Շվեդիա	1		1								2		2
7	Ճապոնիա					2						2		2
8	Կանադա	1					1					1	1	2
9	Մեծ Բրիտանիա		1			1						1	1	2
10	Ուկրաինա	1							1			1	1	2
11	Ավստրալիա				1	1						1	1	2
12	Պորտուգալիա									1		1		1
13	Իրան	1										1		1
14	Հունաստան	1										1		1
15	Բելառուս							1				1		1
Ընդամենը՝		23	5	20	5	22	4	19	3	22	4	106	21	127

Արտասահմանյան անդամների կողմից արված համագործակցության առաջարկները, ԳԱԱ համակարգի և ՀՀ այլ գիտակրթական կազմակերպությունների հետ ձեռք բերված նախնական պայմանավորվածություններն ընդգրկում են մի շարք կարևոր ուղղություններ՝ համատեղ հետազոտությունների իրականացում և հետազոտական նոր ծրագրերի մշակում, մասնագետների պատրաստում և վերապատրաստում, արտասահմանյան գիտական կենտրոնների և ԳԱԱ համակարգի կազմակերպությունների հետ համագործակցության պայմանագրերի և համաձայնագրերի կնքում, համատեղ աշխատությունների պատրաստում, մասնակցություն Հայաստանում կազմակերպվող գիտակրթական և գիտակազմակերպական միջոցառումներին, համատեղ միջազգային գիտաժողովների կազմակերպում:

ԳԱԱ արտասահմանյան անդամների իրականացրած համագործակցության և աջակցության արդյունքներից կարելի է նշել.

Մասնագետների պատրաստում և վերապատրաստում

Արտասահմանյան անդամները հնարավորինս աջակցում են երիտասարդ մասնագետների պատրաստմանը և վերապատրաստմանը: Ասպիրանտների գիտական ղեկավարներ են Ֆ.Ահարոնյանը (Գերմանիա,2), Լ.Պետրոսյանը (ՌԴ,1), Ս.Այվազյանը (ՌԴ,1), Ս.Գրիգորյան (ՌԴ,2), Ս.Աղայանը (ԱՄՆ,1), Ժ.Ալեյանը (Ֆրանսիա,1), Վ.Հարությունովը (ՌԴ,1),

Ս.Հարությունովը (ՌԴ,1): Ֆ.Ահարոնյանի ղեկավարությամբ 1 ասպիրանտ պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն:

Արտասահմանյան անդամ Վ.Սաքանյանի (Ֆրանսիա) աջակցությամբ ԳԱԱ «Հայկեն-սատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոնի ասպիրանտ Հ.Ագանյանը շահել է դրամաշնորհ և 2013 թ. հունվարից Ֆրանսիայի Նանտի համալսարանում կավարտի նրա ղեկավարությամբ թեկնածուական ատենախոսությանը վերաբերող հետազոտությունները:

Արտասահմանյան անդամներ Կ.Քոչարյանի և Ա.Քոչարյանի (ԱՄՆ) ստեղծած հիմնադրամի միջոցներից Ն.Քոչարյանի անվ. ամենամյա միանվագ դրամաշնորհ է տրամադրվում ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետի 2 ուսանողի՝ լավագույն մագիստրոսական աշխատանքի համար:

Արտասահմանյան անդամ Գ.Մարգարյանի (Մեծ Բրիտանիա) նախաձեռնությամբ անգլիական «Rinicom LTD» կազմակերպությունը սահմանել է երկամյա դրամական մրցանակ «Տեղեկատվական տեխնոլոգիաների» բնագավառում ԳԱԱ լավագույն երիտասարդ գիտնականի համար:

Արտասահմանյան անդամ, ՌԲԳԱ Սննդի ինստիտուտի տնօրեն, ակ. Վ.Թուրեյանը շարունակում է ԵՊՀ ավագ գիտաշխատող Կ.Գրիգորյանի դոկտորական ատենախոսության գիտական խորհրդատվությունը:

Արտասահմանյան անդամ Տ.Դանիելյանի (Ֆրանսիա) նախաձեռնությամբ Ֆրանսիայի Լիլի N1 համալսարանի և ԵՊՀ-ի միջև կնքվել է երկկողմ համագործակցության պայմանագիր՝ բակալավրների, մագիստրոսների, ասպիրանտների վերապատրաստման, փոխանակման, որոշ մասնագիտությունների գծով դասընթացների մասնակցության, դասախոսությունների կազմակերպման և համատեղ գիտակրթական ծրագրերի իրագործման համար: Պայմանագրի համաձայն՝ ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի 2 ուսանող արդեն իսկ ուսանում են մագիստրոսի ծրագրով:

Համատեղ հետազոտությունների իրականացում և առաջարկներ

ԳԱԱ նախագահ Ռ.Մարտիրոսյանը և ՌԴ «Միավորված ավիաշինական կորպորացիա»-յի նախագահ, արտասահմանյան անդամ Մ.Պողոսյանը ստորագրել են գիտատեխնիկական և ինովացիոն համագործակցության համաձայնագիր՝ ՌԴ և ՀՀ ավիաշինական համալիրի պահպանման, մրցունակության բարձրացման և գիտաարտադրական ներուժի զարգացման, հետագա ինտեգրման պայմաններում ինտելեկտուալ, արտադրական և ֆինանսական ռեսուրսները միավորելու, ավիացիոն տեխնիկայի ստեղծման հեռանկարային ծրագրերի իրականացման համար: Մշակվել է համատեղ գործունեության պլան, որի իրականացման համար ձևավորվել է Ռուսաստանի կազմակերպությունների և Մեխանիկայի, Ֆիզիկական հետազոտությունների, Ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտների մասնագետներից կազմված աշխատանքային խումբ, նախապատրաստվել են տեխնիկական առաջադրանքների նախագծեր:

Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտը ակտիվ համագործակցում է արտասահմանյան անդամ Լ.Բուգանի (ՌԴ) հետ՝ համաձայն Ռուսաստանի Հարավային դաշնային համալսարանի հետ կնքված գիտական համագործակցության համաձայնագրի (1.03.2010): Ինստիտուտի ավագ գիտաշխատող Ա.Մանուկյանը, Լ.Բուգանի կողմից ղեկավարվող դրամաշնորհի աջակցությամբ, 2012 թ. մայիս-սեպտեմբեր ամիսներին վերապատրաստվել է Հարավային դաշնային համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետում:

Արտասահմանյան անդամ Գ.Գաբրիելյանցի նախաձեռնությամբ և անմիջական աջակցությամբ ստեղծվել է ԼՂՀ պետական երկրաբանական ծառայությունը, ԼՂՀ Քաշաթաղի շրջանում Երկրաբանական գիտությունների ինստիտուտի մասնագետներն իրականացրել

են հանքայնացումը վերահսկող կարևորագույն երկրաբանական կառուցվածքների բացահայտման, հետազոտման և գնահատման աշխատանքներ, բացահայտվել են հանքայնացման հեռանկարային ստույգ տեղամասեր:

Արտասահմանյան անդամ Տ.Դանիելյանը (Ֆրանսիա) և Երկրաբանական գիտությունների ինստիտուտի աշխատակիցները հունիս-հուլիս ամիսներին դաշտային հետազոտական համատեղ աշխատանքներ են կատարել Հայաստանի հյուսիս-արևմտյան (Ամասիայի օֆիոլիթներ), Սևանի արևելյան և հարավ-արևելյան մասերում և Վեդու շրջանում: Տ.Դանիելյանի ֆինանսական աջակցությամբ ինստիտուտի հնէաբանության և շերտագրության լաբորատորիայի վարիչ Ա.Գրիգորյանը հրավիրվել է Լիլի N1 համալսարան՝ համատեղ հետազոտական ծրագրերի մշակման համար:

Ա.Նալբանդյանի անվ. քիմիական հետազոտությունների ինստիտուտը և Բելառուսի ԳԱԱ Նոր նյութերի քիմիայի ինստիտուտը (տնօրեն՝ արտասահմանյան անդամ Վ.Ադաբեկով) ««Բիօքսիլ-1» ախտահանիչ միջոցի փորձնական արտադրության մշակում և կազմակերպում» նախագծի շրջանակներում (2011 թ. ֆինանսավորում է Սաուդյան Արաբիայի Աբդուլազիզ թագավորի անվ. Գիտատեխնիկական կենտրոնի դրամաշնորհը) համատեղ հետազոտել են մի շարք մետաղների ու համաձուլվածքների կոռոզիոն կայունությունը պինդ պերօքսոսուլֆատների լուծույթներում: Հետազոտվել են նաև նշված լուծույթներում ջրածնի պերօքսիդի քայքայման օրինաչափությունները և բիոցիդ հատկությունները տարբեր ակտիվարարների ներկայությամբ:

Ա.Նալբանդյանի անվ. քիմիական հետազոտությունների ինստիտուտում Մ.Լոմոնոսովի անվ. Մոսկվայի պետական համալսարանի նավթի և օրգանական կատալիզի քիմիայի ամբիոնի (վարիչ՝ արտասահմանյան անդամ Է.Կարախանով) մասնակցությամբ հետազոտվել է այրման ռեժիմում ստացված անցումային մետաղների կարբիդների և ինտերմետաղական միացությունների կատալիտիկ ակտիվությունը պոլիարոմատիկ միացությունների հիդրման և դեհիդրման ռեակցիաներում:

Մ.Մանվելյանի անվ. ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտի մասնագետները և արտասահմանյան անդամ Վ.Հարությունովը (ՌԴ) համատեղ հետազոտություններ են սկսել թերթաքարային գազերի ոչ մեծ հանքավայրերի (ներառյալ ՀՀ տարածքի) մշակման փոքրատոննաժ գազաքիմիական տեխնոլոգիաների ներդրման հնարավորությունների վերաբերյալ: Իսկ թեթև ալկանների քիմիական փոխարկումների զուգահեռ ընթացող մեթանի օքսիդացման պրոցեսի միջոցով խթանման հնարավորությունների ուղղությամբ համատեղ հետազոտություններ իրականացնելու և ատենախոսական աշխատանք կատարելու նպատակով Ռուսաստանի Ն.Գուբկինի անվ. նավթի և գազի համալսարանի ասպիրանտուրա է ընդունվել ինստիտուտի աշխատակից Ն.Պոդոյանը:

Արտասահմանյան անդամ Ս.Օրդանյանը (ՌԴ) համագործակցում է Մ.Մանվելյանի անվ. ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտի հետ՝ հետերաֆազ (երկ- և եռաֆազ) նանոչափի մանրացված ոչ թթվածնային դժվարահալ միացությունների (կարբիդներ, նիտրիդներ, բորիդներ) փոշիների ստացման ուղղությամբ: Ինստիտուտի աշխատակիցները մշակում են գործնականորեն մոլեկուլյար մակարդակով օքսիդային խառնուրդների համասեռացման եղանակներ (զոլժել և կոմպոնենտների համաստեցման եղանակներ, օքսիդային հալույթներից ապակիների ստացում և այլն): Ստացված համասեռ նյութերը պետք է նախնական (եղքային) լինեն նանոչափի հետերոգեն փոշիների սինթեզի համար: Վերջիններս հիմնական հումք են, եռակալման եղանակով, որոշակի կառուցվածքային պարամետրերով, տեխնիկական կերամիկայի (խիտ հետերոֆազ կոմպոզիտների) սինթեզի համար՝ կիրառելի շահագործման էքստրեմալ պայմաններում:

Արտասահմանյան անդամ Վ.Սաքանյանը (Ֆրանսիա) ակտիվ համագործակցում է ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ-ի գիտաշխատողների հետ. խորհրդատվությամբ և

թանկարժեք նյութեր (վեկտորներ, ռեսուրսիկտագներ, պրայմերներ, ՊՇՌ-ի ֆերմենտներ, ազարոզ, մանրէների աճի սննդամիջավայրերի համար բաղադրամասեր, ամինաթթուների անալոգներ և այլն) տրամադրելով՝ աջակցում է կենտրոնի գիտաշխատողներին՝ նոր ռեկոմբինանտ շտամ արտադրիչների ստեղծման գործում: Վ.Սաքանյանը ՄԳՏԿ A-1677 նախագծի կոլաբորատոր է, որի շրջանակներում համագործակցում է մետաբոլիզմի ինժեներիայի և մոլեկուլային կենսաբանության լաբորատորիաների գիտաշխատողների հետ:

Համբուրգի տեխնոլոգիական համալսարանը (նախագահ և տեխնիկական միկրոբիոլոգիայի ինստիտուտի տնօրեն՝ արտասահմանյան անդամ Գ.Անտրանիկյան) և ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ-ը համագործակցություն են մանրէաբանական եղանակով կենսավառելիքի ստացման և կենսաբանական ակտիվ միացությունների կենսակատալիզի ուղղությամբ:

Արտասահմանյան անդամ Ա.Միմոնյանի (Օբոռնի համալսարան, ԱՄՆ) և ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ-ի միջև հստակեցվել է կենտրոնում ստացված մանրէների նոր շտամների օգտագործմամբ կենսասենյուկների և մանրէաբանական վառելիքային մարտկոցների մշակման և օգտագործման հետազոտական ծրագիրը:

Արտասահմանյան անդամ Ռ.Միրզոյանը (ՌԴ) շարունակում է համատեղ հետազոտությունները Երևանի բժշկական համալսարանի հետ՝ ուղեղի արյան շրջանառության դեղաբանության ուղղությամբ:

Արտասահմանյան անդամ Ա.Դարգին (Մեծ Բրիտանիա) ընտրվել է Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ, ակտիվորեն մասնակցում է նրա աշխատանքներին:

Սանկտ-Պետերբուրգի պետական համալսարանի կիրառական մաթեմատիկայի և պրոցեսների ղեկավարման ֆակուլտետը (ղեկան՝ արտասահմանյան անդամ Լ.Պետրոսյան) համագործակցում է ԵՊՀ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի մասնագետների հետ:

Արտասահմանյան անդամ Ս.Այվազյանի (ՌԴ) նախաձեռնությամբ և մասնակցությամբ Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարանում ձևավորված գիտական խումբը հետազոտում է Հայաստանի և Ռուսաստանի ազգային տնտեսությունների մակրոէկոնոմիկական մոդելները:

Արտասահմանյան անդամ Ա.Պողոսյանը (Ասիենի կիրառական գիտությունների համալսարան, Գերմանիա) ուսումնագիտական համագործակցություն է իրականացնում ՀՊՀՀ «Միկրոէլեկտրոնիկա և կենսաբժշկական սարքեր» ամբիոնի հետ՝ պարբերաբար տրամադրելով ուսումնամեթոդական նյութեր և խորհրդատվություն, նրա աջակցությամբ պրոֆ. Վ.Բունիաթյանը Գերմանիայում մի շարք համատեղ հետազոտություններ է կատարել, ստացված արդյունքների մասին գրվել են հոդվածներ, կարդացվել են զեկուցումներ միջազգային գիտաժողովներում:

Արտասահմանյան անդամ Ս.Գևորգյանը (Չալմերսի տեխնոլոգիական համալսարան, ԱՄՆ) համագործակցում է ՀՊՀՀ «Միկրոէլեկտրոնիկա և կենսաբժշկական սարքեր» ամբիոնի հետ ֆերոէլեկտրական կերամիկական և նանոթաղանթային ԳԲՀ էլեկտրոնիկայի պասիվ տարրերի, գազային և կենսաբժշկական սենսորների մշակման ուղղությամբ:

Արտասահմանյան անդամ Ս.Աղայանը համագործակցում է Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի գիտաշխատողների հետ՝ հետազոտություններ կատարելով հետևյալ ուղղություններով՝ ամբողջաթիվ թեք ձևափոխությունների սինթեզում, արագագործ ալգորիթմների մշակում և նրանց կիրառումը թվային պատկերների և ազդանշանների մշակման զանազան խնդիրներում (սեղմում, ֆիլտրում, լավարկում և այլն):

Արտասահմանյան անդամ Մ.Պիտոբովսկու (Էրմիտաժի տնօրեն, ՌԴ) հետ համագործակցելով՝ ԳԱԱ Փորձաքննությունների ազգային բյուրոյում բարելավում և կատարելագոր-

ծում են մշակութաբանական և նյութագիտական փորձաքննությունների հմտությունները, իրականացնում են առաջավոր փորձերի փոխանակում տվյալ գիտագործնական ոլորտներում:

Արտասահմանյան անդամ Յու.Հարությունյանը (ՌԴ) 2011 թ. Հնագիտության և ազգագրության ինստիտուտի «Մեփական և այլազգի միջավայրում հայերի համեմատական հետազոտության հիմնական ողորկությունները. ուսումնասիրության խնդիրներն ու հեռանկարները» նպատակային ծրագրի (ղեկ.՝ Ռ.Կարապետյան) հետազոտական խմբի գիտական խորհրդատուն է: Նրա անմիջական մասնակցությամբ խումբը հայերի համեմատական հետազոտություններ է իրականացնում ՀՀ մայրաքաղաքում, ՌԴ-ում, Իրանում և Լոս-Անջելեսում, 2012 թ. կազմակերպել է պիլոտային հետազոտություններ Երևանում և Գյումրիում, կատարել է հայկական թերթերի բովանդակային վերլուծություն:

Արտասահմանյան անդամ Ա.Տոնապետյանը (Ֆրանսիա) և Լեզվի ինստիտուտը քննարկել են հայերեն բարբառների հավաքված նյութի թվայնացման և ինստիտուտում առկա բարբառագիտական արխիվի մշակման հարցերը:

Հայ-ռուսական հիմնարար գիտական հետազոտությունների համատեղ նախագծերի մրցույթին՝ «ՀՀ ԿԳՆ ԳՊԿ- ՀՀՌՀ 2013», Հայաստանի գիտական խմբերի հետ, որպես ռուսաստանյան խմբերի ղեկավարներ, համատեղ հայտեր են ներկայացրել արտասահմանյան անդամներ Վ.Ազատյանը, Լ.Բուգանը, Ա.Հարությունովը, Մ.Սումբատյանը, Ա.Սեյրանյանը, Ռ.Հարությունյանը, Ա.Կոստանյանը, Ա.Բաղդասարյանը, Ռ.Չայլախյանը:

Արտասահմանյան անդամների մի մասը շարունակում է սկսած համագործակցությունը, պարբերաբար քննարկումների արդյունքում հստակեցվում և ձևակերպվում են համատեղ նոր հետազոտությունների խնդիրները, կիրառական բնույթի որոշ հետազոտություններում օգտագործվում են արտասահմանյան անդամների լաբորատորիաների ժամանակակից սարքավորումները:

Համատեղ աշխատությունների, գրքերի հրատարակում

Արտասահմանյան անդամ Յու.Հարությունյանի (ՌԴ) և Հնագիտության և ազգագրության ինստիտուտի սփյուռքի բաժնի համատեղ հետազոտությունների արդյունքում հրատարակվել է «Հայրենիք-սփյուռք առնչությունները հայկական մամուլում» գիրքը:

Արտասահմանյան անդամ Լ.Պետրոսյանի (ՌԴ) նախաձեռնությամբ՝ Մ.Սահակյանի (ԵՊՀ) համատեղ հայալեզու «Խաղերի տեսություն» ուսումնական ձեռնարկը նախատեսվում է ավարտել 2013 թ.:

Արտասահմանյան անդամների և ՀՀ ակադեմիական ու բուհական համակարգերի գիտնականների համատեղ հետազոտությունների արդյունքները տպագրվել են միջազգային հեղինակավոր հանդեսներում, Հայաստանի կենտրոնական պարբերականներում, ինչպես նաև զեկուցվել են բազմաթիվ միջազգային գիտաժողովներում:

Մասնակցությունը ՀՀ-ում կազմակերպվող գիտական և գիտակազմակերպական միջոցառումներին

Հատկանշական է ՀՀ-ում կազմակերպվող միջազգային գիտաժողովներին արտասահմանյան անդամների ակտիվ մասնակցությունը, նրանց շնորհիվ ավելացել է նաև միջազգային ճանաչում ունեցող գիտնականների մասնակցությունը Հայաստանում կազմակերպվող գիտաժողովներին:

Արտասահմանյան անդամները զեկուցումներով և դասախոսություններով հանդես են եկել ինչպես ԳԱԱ համակարգի ինստիտուտներում ու բուհերում, այնպես էլ Արցախի պետական համալսարանում:

Մասնակցությունը գիտական փորձաքննությանը

ԳԱԱ հայազգի արտասահմանյան անդամներն ընդգրկված են ԿԳՆ Գիտության պետական կոմիտեի փորձագետների տվյալների շտեմարանում, մասնակցում են բյուջետային ֆինանսավորման համար մրցութային սկզբունքով կազմակերպվող հայտերի գիտական փորձաքննությանը:

Արտասահմանյան անդամներից ոմանց գիտական, գիտամանկավարժական և գիտակազմակերպական գործունեությունը գնահատվել է իրենց երկրների կողմից. պարգևատրվել են պետական, կառավարական պարգևներով և մրցանակներով, ստացել են վրոպական և միջազգային մրցանակներ:

ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

Ասպիրանտուրա

Տարեկգրին ԳԱԱ ասպիրանտուրայում պետական պատվերով սովորել է 108 ասպիրանտ, այդ թվում՝ 64-ը արտադրությունից կտրված, 44-ը արտադրությունից չկտրված և մեկը դոկտորանտուրայում, իսկ վճարովի հիմունքներով՝ 51-ը:

Շրջանավարտները 47-ն են, որոնցից 33-ը արտադրությունից կտրված, 14-ը արտադրությունից չկտրված, 2-ը վճարովի հիմունքներով:

Հաշվետու տարում ասպիրանտուրա են ընդունվել՝ արտադրությունից կտրված 27, արտադրությունից չկտրված 21, վճարովի հիմունքներով 23 (բոլորն արտերկրից) ասպիրանտ:

Առ 01.01.2013 թ. պետպատվերով ընդունված ասպիրանտների ընդհանուր թիվը 154 է, որոնցից 91-ը արտադրությունից կտրված, 63-ը արտադրությունից չկտրված, 76-ը վճարովի հիմունքներով, այդ թվում՝ 73-ն արտերկրից: Հայցորդների թիվը 362 է՝ 200-ը վճարովի, որոնցից 17-ն արտերկրից են, իսկ 162-ն անվճար (ԳԱԱ համակարգի աշխատակիցներ են):

2012 թ. ԳԱԱ աշխատակիցների և ասպիրանտների կողմից պաշտպանվել է 85 թեկնածուական ատենախոսություն, որից 15-ը արտերկրացիների կողմից, 33-ը հայցորդների, 5-ը նախորդ տարիներին ասպիրանտուրան ավարտածների և 32-ը հաշվետու տարում ասպիրանտուրան ավարտածների կողմից:

Հաշվետու տարում որակավորման քննություն են հանձնել՝ օտար լեզվից 99, փիլիսոփայությունից 150, ինֆորմատիկայից 147 ասպիրանտ և հայցորդ:

Ասպիրանտների բաշխումն ըստ բաժանմունքների և գիտական կազմակերպությունների

ԳԱԱ բաժանմունքները և գիտական կազմակերպությունները	2012 թ. ընդունվել են ասպիրանտուրա			Ասպիրանտների թվաքանակն առ 01.01.13 թ.		
	ա/կ	ա/չկ	վճար.	ա/կ	ա/չկ	վճար.
Մաթեմատիկական և տեխնիկական գիտությունների բաժանմունք	5	-	2/2*	17	4	11/9*
Մաթեմատիկայի ինս-տ	1	-	-	3	-	2/2*
Մեխանիկայի ինս-տ	2	-	-	3	1	-
Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինս-տ	2	-	2/2*	11	3	9/7*

Ֆիզիկայի և աստղաֆիզիկայի բաժանմունք	6	1	-	15	5	2/2*
Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինս-տ	3	-	-	6	-	1/1*
Ֆիզիկական հետազոտությունների ինս-տ	1	1	-	3	5	-
Ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինս-տ	1	-	-	4	-	1/1*
Բյուրականի աստղադիտարան	1	-	-	2	-	-
Բնական գիտությունների բաժանմունք	4	3	1/1*	15	8	8/8*
«Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոն	-	-	1/1*	3	3	1/1*
Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն	-	-	-	1	1	-
Բուսաբանության ինս-տ	-	-	-	1	-	1/1*
Կենսաքիմիայի ինս-տ	-	-	-	2	1	-
Մոլեկուլային կենսաբանության ինս-տ	2	1	-	5	1	1/1*
Ֆիզիոլոգիայի ինս-տ	1	-	-	2	-	3/3*
Հիդրոպոնիկայի պրոբլեմների ինս-տ	-	2	-	-	2	2/2*
Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն	1	-	-	1	-	-
Քիմիական և Երկրի մասին գիտությունների բաժանմունք	2	-	4/4*	7	3/2*	8/8*
Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոն	1	-	-	2	-	1/1*
Ընդհանուր և անօրգանական քիմիայի ինս-տ	-	-	-	2	1	-
Քիմիական ֆիզիկայի ինս-տ	-	-	-	-	-	1/1*
Երկրաբանական գիտությունների ինս-տ	1	-	-	2	-	-
Երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինս-տ	-	-	4/4*	1	2*	6/6*
Հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունք	10	17	16/16*	37	45	45/44*
Պատմության ինս-տ	-	-	-	2	1	4/4*
Տնտեսագիտության ինս-տ	2	5	-	9	16	1
Հնագիտության և ազգագրության ինս-տ	-	3	7/7*	1	5	9/9*
Արևելագիտության ինս-տ	3	2	-	5	4	-
Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինս-տ	3	7	4/4*	15	14	7/7*
Լեզվի ինս-տ	2	-	-	4	1	-
Գրականության ինս-տ	-	-	3/3*	-	-	11/11*
Արվեստի ինս-տ	-	-	2/2*	-	3	13/13*
Հայոց ցեղասպանության թանգարան-ինս-տ	-	-	-	1	-	-
Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն	-	-	-	-	1	-
Գիտակրթական միջազգային կենտրոն	-	-	-	-	-	-
Ընդամենը՝	27	21	23/23*	91	65/2*	74/71*

* Այդ թվում՝ արտերկրից

Մագիստրատուրա

Տարեսկզբին մագիստրատուրայում սովորել է 1080 (1-ին կուրսում՝ 518, 2-րդ կուրսում՝ 562) մագիստրանտ, որոնցից 52-ը՝ պետական պատվերով: Մփյուռքահայ և արտերկրացի մագիստրանտների թիվը 1-ին կուրսում 18 (7 մասնագիտության գծով), 2-րդ կուրսում 17 (9 մասնագիտության գծով) էր:

2011-2012 ուստարվա շրջանավարտները 347 (առկա ուսուցմամբ) են. 31-ը մագիստրատուրան ավարտել են գերազանցությամբ, 145-ը՝ հեռակա ուսուցմամբ:

Մագիստրանտների բաշխումն ըստ մասնագիտությունների

Մասնագիտություն	Մագիստրանտների թվաքանակն առ 01.01.13 թ.			
	1-ին կուրս		2-րդ կուրս	
	վճարովի	պետպատվեր	վճարովի	պետպատվեր
Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա	15	4	16/1*	3
Կառավարում	27/1*	4	20/2*	4
Ֆինանսներ	29	4	24/1*	3
Շուկայաբանություն (մարքեթինգ)	19	3	20	1
Քաղաքագիտություն	13/1*	-	20/1*	-
Իրավագիտություն	25/3*	3	24/2*	3
Լրագրություն	18	-	24/1*	-
Պատմություն	13	-	21	-
Կենսատեխնոլոգիա	-	-	21/7*	1
Դեղագործական քիմիա	24	-	16	-
Հոգեբանություն	35/1*	1	27	1
Կիրառական մաթեմատիկա	9	1	7/1*	1
Ռադիոտեխնիկա և կապ	20/2*	3	13	4
Արևելագիտություն	-	-	14/1*	1
Մանկավարժություն և սոցիոլոգիա	13	-	15	-
Միջազգային հարաբերություններ	28	3	28	2
Բնապահպանություն և բնօգտագործում	6	1	9	-
Հայոց լեզու և գրականություն	18	-	29	-
Մոլեկուլային և բջջային կենսաբանություն	22/9*	-	-	-
Իրավագիտություն (հեռակա)	51	-	41	-
Կառավարում (հեռակա)	37	-	29	-
Ֆինանսներ (հեռակա)	35	-	30	-
Մանկավարժություն և սոցիոլոգիա (հեռակա)	27	-	26	-
Գրադարանային-տեղեկատվական աղբյուր. (հեռակա)	11	-	8	-
Հոգեբանություն (հեռակա)	30	-	29	-
Լրագրություն (հեռակա)	17	-	-	-
Քաղաքագիտություն (հեռակա)	25	-	-	-
Բիզնեսի կառավարում (հեռակա)	28	-	-	-
Ընդամենը՝	596/18*	27	511/17*	24

Հաշվետու տարում ԳԿՄԿ-ն իրավունք է ստացել մագիստրոսական կրթական ծրագրով ուսուցում իրականացնել ևս 2 մասնագիտության գծով՝ «Մոլեկուլային և բջջային կենսաբանություն» (առկա) և «Բիզնեսի կառավարում» (հեռակա), ինչպես նաև «Քաղաքագիտություն» և «Լրագրություն» մասնագիտությունների գծով՝ հեռակա ուսուցմամբ:

Այժմ ԳԿՄԿ մագիստրատուրայում ուսուցումն իրականացվում է 20 մասնագիտության գծով:

Հաշվետու տարում մագիստրատուրա ընդունվածների թիվը 605 է, որից 27-ը՝ պետպատվերով: Տարեվերջին մագիստրանտների ընդհանուր թիվը 1123 էր:

Գիտական խմբեր

Կենսաինֆորմատիկայի խումբ: Համակարգչային փորձի օպտիմալացման նպատակով, NAMD ծրագրային փաթեթի օրինակով, վերլուծության է ենթարկվել ՀայԳրիդի առանձին բաղադրամասերի և նրանց միջև կապերի տեսակների ազդեցությունը մոլեկուլային դինամիկայի (ՄԴ) մեթոդով բարդ մոլեկուլային համակարգերի, ըստ նրանց ծավալների, հետազոտության արդյունավետության վրա:

GROMACS ծրագրային փաթեթի օգնությամբ ուսումնասիրվել է մակերեսային ակտիվ նյութ (ՄԱՆ) ջուր խառնուրդում ՄԱՆ-ի մոլեկուլների ինքնահավաքման պրոցեսը և ջերմաստիճանի ազդեցությունն այդ պրոցեսի վրա՝ որպես ՄԱՆ օգտագործելով նատրիումի պենտադեցիլ սուլֆոնատը (ՆՊԴՍ): Հետազոտվել է ջրում ՄԱՆ-ի հարթ միցելների հաստության, ինչպես նաև միցելի մակերեսին ՄԱՆ-ի մեկ մոլեկուլի զբաղեցրած միջին մակերեսի փոփոխությունը՝ կախված համակարգչային փորձի տևողությունից և ջերմաստիճանից:

Ուսումնասիրվել է հարթ միցելներում ՄԱՆ-ի մոլեկուլների ածխաջրածնային պոչերի կողմնորոշվածության աստիճանը՝ կախված փորձի տևողությունից և ջերմաստիճանից: Բացահայտվել է, որ ՊԴՄՆ-ի հարթ միցելում T-235K ջերմաստիճանում դիտվող փուլային անցման պայմաններում նշված պարամետրերը կտրուկ փոփոխության են ենթարկվում:

2012 թ. միջազգային ամսագրերում տպագրվել է 3 գիտական հոդված, տպագրության է ուղարկվել ևս 2-ը:

Միջազգային գիտաժողովներում կարդացվել է 2 հրավիրված գեկուցում:

Գերհաղորդականության խումբ: Ուսումնասիրվել է ջոզեֆսոնյան թույլ կապերի վարքագիծը՝ տարբեր ջերմաստիճանային ռեժիմներով օդում մշակված $\text{Bi}_2\text{Pb}_2\text{Sb}_{2.5}\text{Sr}_2\text{Ca}_2\text{Cu}_3\text{O}_x$ (առաջին նմուշ) և $\text{Bi}_{1.7}\text{Pb}_{0.3}\text{Sr}_{0.3}\text{Ca}_{0.2}\text{Cu}_{3.5}\text{O}_x$ (երկրորդ նմուշ) կերամիկական գերհաղորդիչներում նրանցով անցնող տրանսպորտային հոսանքով պայմանավորված սեփական մագնիսական դաշտի փոփոխությունից կախված: Ցույց է տրվել, որ վոլտ-ամպերային բնութագրերի փոփոխությունների բնույթը գերհաղորդիչ և նորմալ վիճակներում կախված է նմուշի նախնական բաղադրությունից, ջերմամշակման ջերմաստիճանից, չափման ջերմաստիճանից: Պարզվել է, որ երկու նմուշների վոլտ-ամպերային բնութագրերն էլ հեղուկ ազոտի ջերմաստիճանում դրսևորում են ոչ-գծային վարքագիծ, իսկ սենյակային ջերմաստիճանում՝ հստակ արտահայտված գծային տեսք: Բացահայտվել է, որ առաջին նմուշի համար տեսակարար դիմադրությունը, տրանսպորտային հոսանքից կախված, դրսևորում է ավելի ուժեղ կախվածություն: Ընդ որում, առաջին նմուշի համար, կախված չափման ջերմաստիճանից (80Կ), տրանսպորտային հոսանքի մեծացմանը զուգընթաց դիտվել է տեսակարար դիմադրության ինչպես նվազում (բացասական մագնիսադիմադրություն), այնպես էլ՝ աճ (դրական մագնիսադիմադրություն), մինչդեռ 2-րդ նմուշի համար տեսակարար դիմադրությունը, տրանսպորտային հոսանքի մեծացմանը զուգընթաց, միայն աճում է և ունի անհամեմատ մեծ արժեք: Այդ առանձնահատկությունը վերագրվում է նմուշների ունեցած կառուցվածքային համասեռության տարբերությանը: Ցույց է տրվել, որ գերհաղորդիչ վիճակում տեսակարար նմուշի դիմադրության աճը, տրանսպորտային հոսանքից կախված, տեղի է ունենում առնվազն երկու տարբեր արագությամբ, ինչը վկայում է թույլ և ուժեղ գերհաղորդիչ կապերի գոյության մասին: Պարզվել է, որ ուսումնասիրվող նմուշներում ջերմամշակումից հետո ի հայտ են գալիս այնպիսի կառուցվածքային արատներ, որոնց ներկայությամբ կրիտիկական վիճակի անցման ջերմաստիճանը և դիմադրությունը տրանսպորտային հոսանքից ցուցաբերում են որակապես նույնպիսի կախվածություն,

ինչպիսին դիտվում է այդ պարամետրերի համար՝ կախված իոնիզացնող մասնիկներով ճառագայթահարման չափաքանակներից: Այդ կախվածությունը երկու դեպքում էլ ունի ոչ մոնոտոն բնույթ: Առաջին նմուշում կատարված պարբերական չափումները ցույց են տվել, որ նրա տեսակարար դիմադրությունը, ջերմամշակումից հետո անցած ժամանակից կախված, էապես մեծանում է («ծերացման երևույթ») և կապված է բարձր ջերմաստիճանային մշակումից հետո առաջացած կառուցվածքային արատների և հետագայում նրանց վերաբաշխման հետ: Ընդ որում, սենյակային ջերմաստիճանում դիմադրության աճ մեկ ամսվա ընթացքում եղել է ավելի քան 20 անգամ, այն դեպքում, երբ հեղուկ ազոտի ջերմաստիճանում այն մեծապես կախված է տրանսպորտային հոսանքի մեծությունից և կազմում է ավելի քան 6 կարգ: Սենյակային ջերմաստիճանում նկատված դիմադրության աճի հիմնական մասը դիտվել է առաջին 24 ժամվա ընթացքում:

Միջազգային 2 համաժողովի նյութերի ժողովածուներում տպագրվել է 2 աշխատանք, 1-ն ընդունվել է տպագրության «Solid State Phenomena» ամսագրում:

«ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

«Գիտություն» հրատարակչության գործունեությունն ընթացել է համակարգի ինստիտուտների գիտական աշխատությունների և ակադեմիական գիտական հանդեսների հրատարակչական-տպագրական աշխատանքների իրականացման ուղղություններով:

Հրատարակչությունը 2012 թ. հրատարակել է 107 անուն գիրք և հանդես, որոնցից 50-ը գիտական աշխատություններ են՝ 1180 տպագրական մամուլ ծավալով, և 14 ակադեմիական հանդեսի 57 համար՝ 452 տպագրական մամուլ ծավալով: ԳԱԱ գիտահրատարակչական խորհրդի որոշմամբ լույս տեսած գրքերի և հանդեսների ընդհանուր ծավալը կազմել է 1632 տպագրական մամուլ, տպաքանակը՝ 29600 օրինակ: Ակադեմիական գրքերից բացի, պատվերային կարգով, իրականացվել են նաև այլ հրատարակություններ:

Հաշվետու տարում հրատարակված գրքերից արժանահիշատակ են «Դիվան հայ վիմագրության» IX պրակը, «Հայ ժողովրդական հեքիաթների» XVII հատորը, Լ.Շանթի ԵԺ-ի V և VI հատորները (հովանավոր՝ Էդ.Մսրըլյան), Յոզեֆ Ստրժիգովսկու «Архитектура армян и Европа» աշխատության I հատորը:

Հրատարակչության տնօրեն Վ.Հովակիմյանը Մոսկվայում մասնակցել է «Գրքի կուլտուրան. անցյալի փորձը և արդի հիմնախնդիրները» միջազգային գիտական կոնֆերանսի և ԱՊՀ երկրների ակադեմիական գրահրատարակչական խորհրդի VI նստաշրջանի աշխատանքներին: Հայ գրատպության 500-ամյակի կապակցությամբ գրահրատարակչության բնագավառում ունեցած վաստակի համար հրատարակչության տնօրեն Վ.Հովակիմյանը պարգևատրվել է «Մովսես Խորենացի» մեդալով:

Գիտությունների ակադեմիաների միջազգային ասոցիացիայի (МАН) Մոսկվայում կազմակերպած «Գիտական գիրք. լավագույն գիտահրատարակչական նախագիծ» ամենամյա միջազգային մրցույթում հրատարակչությունը պարգևատրվել է «Դափնեկրի դիպլոմով»՝ Ն.Մառի «Ани (Книжная история города и раскопки на месте городища)» գրքի հրատարակության համար:

«Գրքարվեստ-2012» հանրապետական հինգերորդ մրցանակաբաշխության ժամանակ հրատարակչությունն արժանացել է ՀՀ մշակույթի նախարարության դիպլոմների՝ Ն.Մառի և Յ.Ստրժիգովսկու վերոնշյալ աշխատությունների հրատարակության համար:

ԳԱԱ կազմակերպությունները «Գիտություն» հրատարակչությունում և այլ տպագրատներում հրատարակել են 183 աշխատություն:

2012 թ. գրահրատարակչական ցուցանիշները *

Անվանումները	Քանակը	Տպագրական մամուլը	Տպագրական թերթ-տպվածքը (հազ. օրինակ)	Տպաքանակը
Գրքեր	50	1180	390	18000
Ամսագրեր (14 անուն)	57 համար	452	83	11600
Ընդամենը՝	107	1632	473	29600

2008-2012 թթ. գրահրատարակչական ցուցանիշները*

Անվանումները	2008	2009	2010	2011	2012
Գրքեր	40	44	46	50	50
Ամսագրեր	52	56	57	57	57

* Տվյալները վերաբերվում են «Գիտություն» հրատարակչության մականիշով լույս ընծայված գրականությանը:

**«Գիտություն» հրատարակչության 2012թ. հրատարակած գրականությունը
Գրքեր**

- Ռ. Զարյան - Մայրամուտից առաջ. Ինքնապատում, հ. 3
- Լ.Ղեջյան - Երկվորյակների առասպելը և դրա տարբեր դրսևորումները հայ վիպական ավանդության համակարգում
- Հ.Հարությունյան – Նոր Բայազետի գավառը 1914-1920 թթ.
- Հնագիտական պեղումները Հայաստանում, հ.25 (Գ.Թումանյան, Ագարակ, պր.1, Վաղբրոնգե-դարյան բնակավայրը (2001-2008 թթ.))
- Հայ դրամատուրգները արվեստի մասին (անթոլոգիա) (կազմող՝ Յա.Խաչիկյան)
- Ս.Ղազարյան, Է.Ղազարյան – Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ու պետական աջակցության համալիր միջոցառումների իրականացումը ՀՀ գյուղատնտեսության ոլորտում
- Շ.Դավթյան – Համո Սահյան. Հանրագիտարան
- Զակունո Լեոպարդի – Խոհեր
- Հայ ճարտարապետները արվեստի մասին (անթոլոգիա) (կազմող՝ Յա.Խաչիկյան)
- Էսթետիկայի հարցեր (հետազոտությունների ժողովածու), գիրք YI (կազմող՝ Յա.Խաչիկյան)
- Հեղ. խումբ – Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում (հանրապետական գիտաժողովի նյութեր), գիրք 1
- Йозеф Стржиговский – Архитектура армян и Европа, т. 1, книга первая
- Հայ ժողովրդական հեքիաթներ, հ.17
- Ա.Սեդրակյան –Իրավունք և հանցագործություն (գիտական հրապարակումների ժողովածու)
- Հայ արվեստաբանների կենսամատենագիտություն, №4, Լույս Դուրխանյան
- ՀՀ ԳԱԱ 2011 թ. գիտական և գիտակազմակերպական գործունեության հիմնական արդյունքներ (հաշվետվություն)
- Основные результаты научных исследований за 2011г. Отчет
- ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսների և թղթակից անդամների 2011 թ. գործունեության համառոտ հաշվետվություն
- Э.Барсегян – Очерки и воспоминания об армянских ученых.
- Հ.Պալյան – Համակարգչային հանցավորության դեմ պայքարի հիմնախնդիրները (քրեաիրավական և քրեաբանական հետազոտություն)
- Հեղ. խումբ – Հայ արվեստի հարցեր (գիտական հոդվածների ժողովածու), հ.4
- Հեղ. խումբ - Բիոէթիկայի ներածություն

22. Ն.Սարուխանյան – Մտորումներ և հուշեր ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանի մասին
23. Դասեր անցյալից և հայոց մեծերից (կազմող՝ Վ.Գրիչենց)
24. Ռ.Սարինյան, Վ.Հարությունյան – Նշանավոր տնտեսագետների տողանը (մինչ քենայան շրջան). գիտակենսագրական ուրվագծեր
25. Հեղ. խումբ – Հայաստանը և Թուրքիան տարածաշրջանային տնտեսական ինտեգրացման գործընթացներում
26. Լևոն Շանթ – Երկերի ժողովածու, հ. V
27. Я.Хачикян – К вопросу о номенклатуре и классификации эстетических категорий (критико-методологический анализ).
